«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՍԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2019

## ՆԱԽԱԲԱՆ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է բուհի ներկայացրած դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է Վանաձորի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱԲԱՆ**.....2

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ**.....4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ.....17

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....21

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ**.....21

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....28

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ.....38

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....45

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ.....52

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....58

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....64

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....71

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ.....73

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ.....83

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ.....84

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ.....86

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ.....88

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....90

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....91

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....92

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի /այսուհետ ՎՊՀ/ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համաձայն Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի 2014-2018թթ. Ռազմավարական ծրագրի, ՎՊՀ-ի առաքելությամբ ձգտում է «ապահովել կայուն զարգացում, կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնում է շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականություն, պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ, ընդունելով հասարակության առջև իր պատասխանատվությունը, նպաստում է անհատի շարունակական զարգացմանը, ստեղծում է նպաստավոր միջավայր համակողմանի զարգացած անձի ձևավորման համար»:

ՎՊՀ-ն 2015 թվականին անցել է հավատարմագրման գործընթաց ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով, որի արդյունքում հաստատությանը շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

ՎՊՀ-ն հաշվի առնելով նախորդ գնահատման խորհրդատվությունները, իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ մի շարք ոլորտներում:

Փորձագիտական խմբի կողմից դիտարկված նախորդ հաշվետու տարիների համար առկա է 2014-2018 թթ Ռազմավարական ծրագիր, որում մատնանշվում են զարգացման 7 ուղություններ՝ իրենց նպատակներով: Հավատարմագրման գործընթացի ժամանակ ՎՊՀ-ն գտնվում էր անցումային ժամանակաշրջանում. այն առումով, որ վերջին տարվա ընթացքում կառավարման համակարգում իրականացված փոփոխություններից ելնելով ՎՊՀ-ում առկա չէր Ռազմավարական պլան: Այդուհանդերձ, ՎՊՀ-ում առկա էր 2019-2021 թվականների համար մշակված Օպերացիոն պլան, որը սակայն հաստատված չէր ՄՈՒՀ-ի կառավարման խորհրդի կողմից:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ ՎՊՀ-ի առկա առաքելությունը ընդհանրական է և չի մատնանշում բուհի առանձնահատկությունը, չի ընդգծում բուհի կրթական ծրագրերի բովանդակային շրջանակը, չի ներկայացնում բուհի նպատակները: Հատկապես արտաքին շահակիցների կողմից դրսևորվում է պասիվություն ՎՊՀ կառավարման գործընթացներում:

ՎՊՀ Ռազմավարական նպատակների իրականացման որակի գնահատման նպատակով մշակված Գործունեության առանցքային ցուցանիշների կիրառումը ՎՊՀ գործունեության գնահատման համար դրական ընթացակարգ է և նպաստում է բուհի առաջընթացի գնահատմանը և խնդիրների դուրսբերմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ 2018 թվականին հաստատության կողմից իրականցվել է վերլուծություն ըստ ԳԱՑ-երի, որը հրապարակվել է հաստատության կայք էջում: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը ռիսկային է համարում, որ առկա ԳԱՑ-երը դեռևս բարելավման կարիք ունեն քանի որ համապատասխանեցված չեն ներկա իրավիճակին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ վերջին հինգ տարիների ընթացքում կատարվել են կառավարման համակարգի որոշակի բարելավումներ, որոնք միտված են եղել կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ կատարված փոփոխությունները իրենց նպատակին չեն ծառայել. չի կատարվել կառավարման համակարգի արդյունավետության գնահատում, չեն բացահայտվել կառավարման տարբեր մակարդակներում առկա մարդկային և ֆինանսական ռեսուրսների վերլուծություն ու առկա խնդիրների ուսումնասիրություն և հետագա պլանավորում, որոնք խոչընդոտում են բուհի հետագա զարգացմանը:

ՎՊՀ ուսանողներն ու դասախոսները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը և տեղեկանում են կառավարման խորհուրդներում կայացված որոշումների մասին: Այնուամենայնիվ, դասախոսներն ու ուսանողները նախաձեռնողականություն չեն ցուցաբերում իրենց առնչվող խնդիրների բարձրացման ուղղությամբ կառավարման մարմիններում, ինչը կարող է խոչընդոտել բուհում առկա և հետագա խնդիրների բացահայտմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ բուհում առկա չէ երկարաժամկետ պլանավորում, որը բուհը կապում է ռեկտորի ընտրությունների անընդհատ երկարաձգմամբ: Երկարաժամկետ պլանավորման բացակայությունը բուհի համար ռիսկային է, բուհի ստորին օղակները իրականացնում են իրավիճակային կառավարում տարեկան կարճաժամկետ պլանավորմամբ՝ առանց ռազմավարական առաջնահերթությունների սահմանման: Այս դրությունը խոչընդոտում է բուհի համաչափ զարգացմանը:

Թեև ՎՊՀ-ի պաշտոնական հիմնադրամի վերափոխվելը պոտենցիալ հնարավորություններ է ստեղծել բարելավելու իր ֆինանսատնտեսական քաղաքականությունը, սակայն այդ հնարավորությունները դեռևս արդյունավետությամբ չեն օգտագործվում: Ֆինանսական ռեսուրսների բազմազանեցման բացակայությունը խոչընդոտում է բուհի հետագա զարգացմանը:

ՎՊՀ-ում որոշումների կայացման կառույցներում գործատուների և այլ արտաքին շահակիցների պաշտոնական թույլ ներգրավվածությունը և հետադարձ կապի անարդյունավետությունը կարող է սահմանափակել արտաքին պահանջների և Դրա

օրինակ կարող է ծառայել բուհի գիտխորհրդում արտաքին շահակցիների բացակայությունը: Արտաքին միջավայրի վերլուծության ոչ բավարար լինելը կհանգեցնի բուհի ռազմավարական զարգացման հետագա ռիսկերի:

ՎՊՀ 5 ֆակուլտետներում իրականացվում է բակալավրի 30 առկա և հեռակա, մագիստրոսի 13 առկա, հետազոտողի 7 գիտական ուղղություններով 11 հետազոտական կրթական ծրագրեր: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ վերջին հինգ տարիների ընթացքում բուհում գործող բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերը բարելավվել են բուհի Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված ներքին աուդիտի արդյունքում:
Իրականացված ներքին աուդիտը հանարավորություն է տվել բովանդակային փոփոխություններ իրականացնել՝ ծրագրերը համապատասխանեցնելով բուհի առաքելությանը և աշխատաշուկայի պահանջներին, որը նպաստում է շրջանավարտների զբաղվածությանը: Բոլոր ամբիոններում դեռևս հստակորեն նախանշված և համակարգված չեն ՄԿԾ-ների հետ կապված վերհանված խնդիրների լուծման ռազմավարությունները: Սա կվտանգի շուկայի պահանջներին համապատասխան ծրագրերի և դասընթացների արդիականացումը, դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների ներառումը: ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացներում հիմնականում ակտիվություն ցուցաբերում են ներքին շահակիցները: Միևնույն ժամանակ փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ՎՊՀ-ում առկա են մասնագիտություններ /օրինակ՝ քիմիա/, որոնք պահանջված չեն աշխատաշուկայում, այդպիսով իսկ չեն ապահովում համապատասխան թվով դիմորդներ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ այս պարագայում բուհը շեշտադրում է կատարում նաև այնպիսի մասնագիտությունների (մանկավարժական) վրա, որոնք որոշակի պահանջարկ ունեն աշխատաշուկայում:
Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասավանդման բազմաբնույթ մեթոդների ներառումը և նկարագրությունները կրթական ծրագրերում, դասընթացների նկարագրերում և թեմատիկ օպերատիվ պլաններում, սակայն խնդրահարույց է այն փաստը, որ որոշ դեպքերում մեթոդի ընտրությունը պայմանավորված չէ վերջնարդյունքով և համապատասխան կարիքների վերհանմամբ: Ուսանողների որոշակի անբավարարվածությունը դասավանդման մեթոդներից, ոչ արդյունավետ դասախոսությունները կարող են խոչընդոտել ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև նախատեսված վերջնարդյուքների ձեռքբերմանը:
Դրական փաստ է, որ բուհում գործում է ակադեմիական ազնվության կարգ, ինչպես նաև կիրառվում է գնահատման արդյունքների բողոքարկման կարգ: Միևնույն ժամանակ փորձագիտական խմբի վերլուծությունների արդյունքնում պարզ դարձավ, որ գնահատման համակարգը փոխկապակցված չէ ուսումնառության արդյունքների հետ այն առումով նաև, որ ուսումնառության արդյունքներում ներառված հմտությունների գնահատումը հստակ ընդգծված չէ գործող համակարգում, որը կարող է հանգեցնել գնահատման համակարգի ոչ արդյունավետ կիրառմանը և ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը:
Հեռակա կրթական համակարգում կրթական ծրագրերի իրականացումը կապված է մի շարք խնդիրների հետ, մասնավորապես՝ շեշտվել է դասաժամերի ոչ բավարար լինելը, որը

հանգեցնում է հեռակա համակարգում կրթական ծրագրերի իրականացման անարդյունավետությանը:

Ողջունելի է, որ արձանագրվել են մասնագիտության կրթական ծրագրերի առանձին բարելավումներ՝ հիմնված բենչմարքինգի վրա, սակայն կատարված բենչմարքինգի արդյուքը չի նպաստել շաւժունության բավարար մակարդակին /որպես դրսի ուսանողների ընդունող կողմ/:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՎՊՀ-ում գործում են ուսանողների համաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ, որոնք նպաստում են ընդունելության թափանցիկ և արդյունավետ իրականացմանը, ընդունելության պահանջների մասին տեղեկատվության հասանելիությանը: Բուհում գործում է ուսանողների կարիքների վերհանման քաղաքականություն, անցկացվում են հարցումներ, որոնց մասնակցում են նաև հեռակա համակարգում սովորող ուսանողները: Այդ հարցումների նպաստում են ուսանողների խնդիրների վերհանմանը և լուծմանը: Ուսանողները ներգրավված են կառավարման մարմիններում: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՎՊՀ-ի մի քանի կանոնակարգերում ներառված են լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ դրույթներ: ՎՊՀ-ում ուսանողների համար վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց մշակված չէ: Ուսանողները խնդիրների դեպքում ցանկացած ժամի դիմում են դեկանատները, դեկաններին: ՎՊՀ-ն ուսանողներին տրամադրում է <<Ուսանողի ուղեցույց>>, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ոչ բոլոր ուսանողներն են ծանոթ ուղեցույցի բովանդակությանը: Չնայած ուղեցույցը տրամադրվել է ուսանողներին, հրապրակվել բուհի կողմից կայք էջում:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ թեև ՎՊՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող որոշակի ծառայություններ, սակայն ՎՊՀ-ում կարիերայի կենտրոն որպես այդպիսին չկա, առկա է միայն մեկ պատասխանատու: Սա կարող է խոչընդոտել ուսանողների կարիերայի ծառայությունների համակարգված իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՎՊՀ-ն խրախուսում է գիտական հոդվածների հրապարակումը, ունի ուսանողների համար ամսագիր, որտեղ տարին մեկ անգամ ուսանողները հրապարակումներ են ունենում: Այդուհանդերձ ՎՊՀ Ուսանողների գիտական ընկերությունը նախեռնողականությամբ հանդես չի գալիս և ակտիվություն չի դրսևորում և ներգրավված չէ ՄՈՒՀ-ի հետազոտական աշխատանքներում, ինչը կարող է խոչընդոտել ուսանողների ներգրավմանը ՎՊՀ հետազոտական աշխատանքների իրականացման տեսակետից:

ՎՊՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին՝ Ուսանողական խորհուրդը, այդուհանդերձ, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ ոչ բոլոր ուսանողներն են տեղյակ ՈՒԽ-ի մասին և խնդիրների դեպքում չեն դիմում ուսանողական խորհրդին: Սա կարող է խոչընդոտել ուսանողերի կրթական կարիքների վերհանմանն ու հետագա լուծմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՎՊՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ: Որակի ապահովման կենտրոնի կողմից անցկացվում են

հարցումներ, կատարվում են հարցումների վերլուծություններ, սակայն արդյունքները բավարար չեն գնահատվում:
Փորձագիտական խումբը փաստում է, որ ՎՊՀ-ն ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Դրական է, որ ՊԴԿ-ի համալրումը տեղի է ունենում մրցութային հիմունքներով. հաշվի են առնվում կրթական ծրագրերի և ՄՌԿ բաժնի կողմից մշակված պաշտոնների անձնագրերի պահանջները: Սակայն, հստակ չեն ձևավորված ՎՊՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները: Ինչը կարող է վտանգել ՄԿԾ-ների նպատակների արդյունավետ իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ ՎՊՀ-ում ՊԴԿ-ի երիտասարդացմանն ուղղված քաղաքականության է գործում. կիրառվում է երիտասարդ ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման համար մենթորության քաղաքականություն: Չնայած նրան, որ ՎՊՀ-ն իրականացնում է երիտասարդ կադրերի՝ մինչև 35 տարկան անձնակազմի, խրախուսման տարբեր մոտեցումներ, այնուամենայնիվ, առկա են քիչ թվով հայցորդներ: Առկա չէ ասպիրանտական կրթություն, ցածր է աշխատավարձը, ցածր է երիտասարդների մոտիվացիայի մակարդակ, ինչը կարող է խոչընդոտել ՎՊՀ-ում սահուն սերնդափոխության և երիտասարդացման գործընթացներին: Ավելին, 2014 թվականից սկսած դոկտորական թեզեր չեն պաշտպանվել, նաև առկա է գիտության թեկնածուների թվաքանակի նվազում: ՊԴ-ն և ուսումնաօժանդակ անձնակազմը ոչ բավավար է ներգրավված գիտահետազոտական աշխատանքներում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ համալսարանում գործում է ՊԴԿ-ի խրախուսման համակարգ, և կատարվում պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ կրեդիտային հենքով կազմված ծրագրերով վերապատրաստումներ: Իրականացվում է ՊԴ կազմի պարբերաբար գնահատում ոսանողների կողմից: Սակայն մասնագիտական վերապատրաստում անցնում են սակավաթիվ դասախոսներ, ավելին, բացակայում է տարբեր մասնագիտություններով ՊԴԿ-ի մասնագիտական վերապատրաստման քաղաքականությունը: Սա կարող է վտանգել ՎՊՀ ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացը, ինչը կապվում է ՎՊՀ-ի ֆինանսական միջոցների, դասախոսական կազմի օտար լեզվի ցածր իմացության և այլ գործոնների հետ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ կատարվում են գործողություններ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ՎՊՀ-ի միջազգայնացման գործընթացին մասնակցության համար: Սակայն, այստեղ ևս խնդիրներ կան. սակավաթիվ են արտասահմանյան դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված դասախոսները, ինչպես նաև օտար լեզուներին տիրապետող դասախոսական կազմը:
ՎՊՀ-ն, հաշվի առնելով նախորդ հավատագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունը, վերանայել է հետազոտական գերակա ուղղությունները և քայլեր ձեռնարկել գիտահետազոտական աշխատաքների կատարման խթանման և որակի

բարելավման համար: Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ համալսարանը մշակել է աշխատակիցների գիտահետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև որոշակի քայլեր ձեռնարկել ուսումնական գործընթացի և գիտահետազոտական գործունության փոխկապակցվածության ստեղծման համար: ՎՊՀ-ի կողմից մշակված հետազոտական ուղղությունները չեն արտացոլում համալասարանի ամբողջական գիտական ներուժը: Մտահոգիչ է նաև ՎՊՀ գիտահետազոտական ուղղությունների և առկա ռեսուրսների ոչ լիարժեք կառավարումը, ինչը կարող է խոչընդոտել ՄՈՒՀ-ի հետազոտական նպատակների արդյունավետ իրականացմանը: Համալսարանի գիտահետազոտական գործունեության վերահսկումը կենտրոնացած է միայն քանակական ցուցանիշների վրա: Գիտական աշխատանքների ֆինանսավորման համալսարանական մրցույթները մեծամասամբ ուղղված են եղել ոչ թե գիտական հետազոտությունների, այլ դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման համար, ինչը չի նպաստում ՎՊՀ հետազոտական նպատակների արդյունավետ իրականցմանը: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ գիտահետազոտական աշխատանքների կատարման և խրախուսման, բնագիտական հոսքում նյութատեխնիկական ռեսուրսների (սարքեր, նյութեր) հատկացումը սահմանափակ է: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում նաև այն, որ գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացումը խրախուսող մեխանիզմներ ՎՊՀ-ում առկա չեն: Սա խոչընդոտում է ՎՊՀ-ում իրականացվող հետազոտությունների, դրանց արդյունքում դուրս բերած լավագույն փորձի միջազգայնորեն հրապարակային դարձնելը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ ՎՊՀ-ն ունի գիտական հետազոտությունների ֆինանսավորման հետ կապված խնդիր. բացակայում է պետության կողմից բազային և թեմատիկ հետազոտությունների համար տրվող ֆինասավորումը. չեն իրականացվում պետության կողմից բազային և թեմատիկ հետազոտություններ, ինչպես նաև առկա չեն ֆինասավորման ներքին աղբյուրներ, ինչը խոչընդոտում է ՎՊՀ հետազոտական նպատակների իրականացմանն ու հետազոտության ոլորտի զարգացմանը: ՎՊՀ-ի անձնակազմի՝ առկա գիտական տարբեր դրամաշնորհներին դիմելու հմտությունների պակասը խոչընդոտում է հետազոտական դրամաշնորհներին իրենց մասնակցությունը: Բուհի աշխատակիցների տպագրված գիտական աշխատանքների ցուցանիշները բարձր չեն, բացակայում են գրախոսվող և ազդեցության գործակցով, միջազգային ամսագրերում տպագրված հոդվածները:

Մտահոգիչ է, որ ՎՊՀ-ում երիտասարդների ներգրավվածությունը գիտական հետազոտություններում ցածր է: Ուսանողների շրջանում ևս, թեև առկա են գիտահետազոտական կենտրոն և գիտահետազոտական լաբորատորիա, ՈՒԳԸ, այդունաղերձ ակտիվությունը բարձր չէ: Առկա չեն երիտասարդների գիտությամբ զբաղվելու մոտիվացիան բարձրացնելու մեխանիզմներ. հայցորդների քանակը քիչ է, ասպիրանտեր չկան: Այս փաստը խոչընդոտում է ՎՊՀ-ում գիտության երիտասարդացման, ինչպես նաև վտանգում է երիտասարդ կադրերի պատրաստման գործընթացը:

ՎՊՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներն ունեն բարելավման կարիք, քանի որ առկա չեն կրթական գործընթացում գիտական հետազոտությունների, ատենախոսությունների և դրանց արդյունքների ներդրման բավական օրինակներ: Ինչպես նաև այն, որ ուսանողների կողմից քիչ են կատարվում վերլուծական/հետազոտական աշխատանքներ, որը խոչընդոտում է ուսանողների մոտ հետազոտական հմտությունների ձևավորմանը:

ՎՊՀ ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ներկայումս բավարարում են մասնագիտական կրթության տրամադրման համար: Փորձագիտական խումբը դրականորեն փաստում է նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում ՎՊՀ ռեսուրսների բարելավումն ու համալրումը: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը, գտնում է, որ անհրաժեշտություն կա ռեսուրսների բարելավման և հարստացման: Չնայած առկա կրթական ռեսուրսներին (լաբորատորիաներ, համակարգիչներ, պրոյեկտորներ և այլն), այնուամենայնիվ նկատվում է տեխնիկական միջոցների և լաբորատորիաների շարունակական վերահագեցման անհրաժեշտություն, ինչի մասին փաստեցին նաև հաստատության ներկայացուցիչները: Նկատելի է, որ բուհի ֆինանսական միջոցների մեծ մասի աղբյուրը ուսանողական վարձավճարներն են, ինչը ուսանողների թվաքանակի նվազման պայմաններում վտանգում է բուհի ֆինանսական կայունությունը: Այդ նույն տեսակետից այլ արտաքին մուտքերը համալրում են բուհի ֆինանսական միջոցների ընդհամենը 4%-ը, այդ իսկ պատճառով կարևորվում է հստակ հայեցակարգ՝ ֆինանսական ներհոսքի աղբյուրների բազմազանեցման, հատկապես՝ այլ աղբյուրների տոկոսային մասնաբաժնի ավելացումը:

ՄՈՒՀ-ի կանոնակարգված հաշվետվողականությունը ապահովում է դրա գործունեության արդյունավետության գնահատման հնարավորությունը կառավարման բարձրագույն մարմնի կողմից: Հաշվետվությունների, կանոնակարգերի, և ՄՈՒՀ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների հրապարակումներն ապահովում են ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, ինչը կարևոր է հետադարձ կապի մեխանիզմների գործունեության և դրանց միջոցով ՄՈՒՀ-ի կայուն զարգացումն ապահովելու համար: Թվային տեխնոլոգիաների կիրառումը հասարակության հետ հետադարձ կապի արդյունավետության գնահատման համար դրական և հեռանկարային մոտեցում է, ինչը կնպաստի այդ կապերի ամրապնդմանը և ՄՈՒՀ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության որակի և բովանդակության բարելավմանը, ինչպես նաև նպատակային կիրառմանը հասարակության կողմից: Սա նպաստում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությանը և ՄՈՒՀ-ի հետ անմիջական կապի հասանելիությանը: Համալսարանը կարևոր դեր ունի տարածաշրջանում հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման առումով և կիրառում է հաստատված գործընթացներ այդ ուղղությամբ, ինչը կարևոր դեր կարող է ունենալ տարածաշրջանի զարգացման հարցում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՎՊՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատանն ուղղված որոշ մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնցով զբաղվում է ՎՊՀ Համագործակցության և կապերի բաժինը: Այս ամենը դրական է ազդում ՄՈՒՀ-ի միջազգայնացման գործընթացների ակտիվացման վրա: Այդուհանդերձ, սեփական

միջոցների տրամադրման ցածր մակարդակը կարող է առաջացնել ռիսկեր միջազգայնացման գործընթացների իրականացման կայունության և արդյունավետության ապահովման առումով:

Դրական է, որ ՎՊՀ միջազգայնացմանն ուղղված գործունեությունը հիմնականում կանոնակարգված է, ինչը նպաստում է գործունեության վարման նպատակայնությանը, հստակությանը, հաշվետվողականության համակարգվածությանը և բարելավմանն ուղղված քայլերի նախանշմանը: Այնուամենայնիվ, ուսանողների և ՊԴԿ-ի միջազգայնացման գործընթացներին մասնակցությունը խրախուսող մեխանիզմներ ՎՊՀ-ում մշակված չեն: Սա կարող է խոչընդոտել ՎՊՀ միջազգայնացման զարգացմանը: Այդուհանդերձ, այս ամենի կանոնակարգման ուղղությամբ համագործակցության և կապերի բաժինն աշխատանքներ է սկսել իրականացնել:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն ակտիվորեն համագործակցում է տեղական՝ պետական, միջազգային բուհերի և կառույցների հետ, ինչպես նաև փնտրում է համագործակցության նոր տարբերակներ, ինչը դրական ազդեցություն է թողնում ՄՈՒՀ-ի միջազգայնացման և նորամուծությունների ներդրման առումով: Սակայն համագործակցության պայմանագրերի համակողմանի վերլուծություններ և համագործակցության հստակ պլանավորում դեռ իրականացված չէ: Սա թույլ չի տալիս գնահատել վերջիններիս արդյունավետությունը և նախանշել համագործակցության զարգացման հետագա ուղղությունները:

ՎՊՀ-ում շարժունության մակարդակը դեռևս ունի բարելավման կարիք: ՄՈՒՀ-ն իրականացնում է որոշակի գործառույթներ ներքին շահակիցների օտար լեզվի իմացության բարձրացման ուղղությամբ, ինչը կարող է դրական ազդեցություն թողնել՝ նպաստելով ՎՊՀ միջազգայնացմանը: Այդուհանդերձ, բարելավման ենթակա է ներքին շահակիցների, մասնավորապես՝ ՊԴԿ-ի, օտար լեզուների տիրապետման մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերը:

Վերջին տարիների ընթացքում բուհի որակի ապահովման համակարգի ներդրումն ու զարգացումը նպաստավոր պայմաններ կարող են ստեղծել որակի մշակույթի ձևավորման, արտաքին ու ներքին գնահատման համար: Բուհում գործող որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված բազմաթիվ փաստաթղթերը և կանոնակարգերը հիմք են հանդիսանում որակի ապահովման գործառույթների իրականացման համար: Բուհի դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին ապահովում է առավել հասցեական և արդյունավետ գործունեություն, սակայն նրանց ակտիվության աստիճանը դեռևս բարձրացման կարիք ունի: Համալսարանն ունի որակի ապահովման ներքին գործող համակարգ, որը դեռևս գտնվում է զարգացման փուլում՝ նպաստելով հաստատության գործունեության շարունակական բարելավմանը, որակի մշակույթի ձևավորմանը և ձգտում է ապահովել իր գործունեության թափանցիկությունը:

**Հաստատության ուժեղ կողմերն են.**

1. ՎՊՀ սոցիալական, կրթական դերը տարածաշրջանում. հատկապես մանկավարժական կադրերով ապահովելու տեսանկյունից
2. Անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմով ապահովվածություն, ընդհանուր առմամբ ուսանողների բավարարվածությունը պրոֆեսորադասախոսական կազմից
3. Ուսանողներին տրամադրվող օժանդակությունն ու ուղղորդումը ՎՊՀ-ի աշխատակազմի կողմից
4. Ներքին գնահատման ենթարկված ՄԿԾ-ներ. վերջնարդյունքների սահմանմամբ, գնահատման համակարգի շարունակական բարելավմամբ, համահունչեցված հանրապետության նմանատիպ այլ կրթական ծրագրերին
5. ՎՊՀ-ում ուսումնական գործընթացի իրականացման համար բարենպաստ միջավայրի առկայություն՝ ռեսուրսների բարելավման գործընթացների իրականացմամբ
6. Հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման մեխանիզմների կիրառում
7. Միջազգային ծրագրերում ՎՊՀ անձնակազմի ակտիվ մասնակցություն՝ արտաքին կապերի ամրապնդմամբ
8. ՎՊՀ Որակի կենտրոնի աշխատակիցների մոտիվացվածություն. աշխատանքներում ուսանողների ներգրավում

**Հաստատության թույլ կողմերն են.**

1. Երկարաժամկետ պլանավորման բացակայություն և դրանցից բխող կարճաժամկետ պլանավորման պակաս
2. ՎՊՀ կազմակերպական կառուցվածքի աշխատանքների արդյունավետության գնահատման բացակայություն
3. Արտաքին միջավայրի համակարգված վերլուծությունների իրականացման պակաս
4. ՎՊՀ հետազոտական գործունեության զարգացմանն ուղղված հստակ քաղաքականության բացակայություն, բուհի գիտահետազոտական ուղղությունների անհամապատասխանություն բուհի կրթական գործունեությանը
5. Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար լիարժեք պայմանների բացակայություն
6. Վելուծությունների, հստակ քանականական և որակական տվյալների վրա հիմնված հաշվետվությունների իրականացման պակաս
7. ՎՊՀ-ում իրականացվող հետազոտությունները առնտրայնացնելու քաղականության բացակայությունը
8. ՎՊՀ գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի թույլ փոխկապակցվածությունը, գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության պակաս և նրանց հետազոտական

գործունեության խրախուսման հստակ քաղաքականության բացակայությունը

9. Դասախոսների և ուսանողների շրջանում օտար լեզվի իմացության ցածր մակարդակ, բարձր ազդեցության ցուցանիշ ունեցող միջազգային ամսագրերում հրապարակումների սակավություն

**Փորձագիտական խմբի առաջարկությունները.**

**Առաքելությունը և նպատակները**

*1.* Հստակեցնել ՄՈՒՀ-ի առաքելությունը և մշակել առաջիկա տարիների ռազմավարական ծրագիր՝ շեշտելով հաստատության, տարածաշրջանի զարգացման առանձնահատկությունները և վերլուծելով արտաքին միջավայրի խնդիրները

*2.* ՄՈՒՀ-ի ռազմավարական կառավարման աշխատանքներում ակտիվորեն ներգրավել ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցներին՝ տարածաշրջանի կարիքներին արագ արձագանքման նպատակով

*3.* Վերանայել ԳԱՑ-երը՝ դրանք դարձնելով չափելի և հարմարեցնել ՄՈՒՀ-ի առկա վիճակին՝ հնարավորություն տալով գնահատել ՄՈՒՀ-ի առկա վիճակը և առաջընթացը

**Կառավարումն ու վարչարարությունը**

4. Իրականացնել կազմակերպական կառուցվածքի բարեփոխումներ բուհի ռազմավարական կառավարման սկզբունքներին համապատասխան

5. Ներդնել կառավարման գործընթացներում ՎՊՀ ներքին և արտաքին շահակիցների ակտիվ մասնակցությունը խրախուսող մեխանիզմներ

6. Բարելավել էթիկայի կանոնագիրքը՝ ուշադրություն դարձնելով որոշումների կայացման էթիկական սկզբունքներին

7. Ներդնել ՎՊՀ գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության մեխանիզմներ և կիրառել հավաքագրված տեղեկատվությունը հետագա որոշումների կայացման ժամանակ

8. Մշակել և ներդնել կառավարման գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և դրանց կիրառումը գնահատող արդյունավետ կառուցակարգեր:

9. Ներդնել բուհի տարբեր գործընթացների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման համակարգեր:

10. Բարելավել բուհի ֆինանսական կառավարման համակարգը՝ այն հարմարեցնելով պլանավորվող ռազմավարական առաջնահերթություններին:

11. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման ամբողջական քաղաքականություն:

**Մասնագիտության կրթական ծրագրերը**

*12.* Կրթական ծրագրերի արտաքին (ցանկալի է միջազգային) գնահատում՝ հիմնված գործընկերային գնահատման վրա՝ թափանցիկության և օբյեկտիվության բարձրացման նպատակով

13. Կատարելագործել ՎՊՀ-ում դասավանդման ուսանողակենտրոն ուսուցումը. դասավանդման մեթոդները առավել համապատասխանեցնել վերջնարդյունքների ձեռքբերմանը, դասավանդումը արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով համալրել տեղեկատվական տեխնոլոգիաներով

14. Իրականացնել ՎՊՀ բոլոր ՄԿԾ-ների դասավանդման մեթոդների արդիականացում

15. Գործող ՄԿԾ-ներում ավելացնել պրակտիկ դասաժամերն ու հավելյալ պրակտիկա իրականացնելու հնարավորություններ ստեղծել ուսանողների համար

16. Հետագա քայլեր ձեռնարկել գնահատման օբյեկտիվությունը բարձրացնելու և ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով

**Ուսանողները**

17. Մշակել ուսանողների թվի նվազումը կանխելու համար նախատեսված ՎՊՀ երկարաժամկետ ռազմավարության

18. Մշակել և ներդնել ՎՊՀ ուսանողների կարիերայի նպաստող ծառայությունների և արդյունավետ մեխանիզմներ

19. Բարձրացնել ՎՊՀ ուսանողների շրջանում իրենց իրավունքների պաշտպանության մարմնի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև ՎՊՀ ուսանողների շրջանում մարմնի մասին տեղեկատվության մակարդակը

20. Մշակել և ներդնել ուսանողների շրջանում հետազոտական աշխատաքներին մասանկցությունը խրախուսող մեխանիզմներ

**Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը**

21. Աջակցել դասախոսական կազմի կատարելագործմանն ուղղված մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը

22. Ներդնել ՊԴԿ-ի գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը խրախուսող հստակ մեխանիզմներ

23. Իրականացնել ՊԴ և Ուսումնաօժանդակ անձնակազմի բազմազան գնահատում /ոչ միայն հարցում, այլև ֆոկուս խմբային քննարկումներ/

24. ՄԿԾ-ներում, կրթական ծրագրերի առանձնահատկություններից ելնելով, ներառել ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական կարողություններին ներկայացվող հստակ պահանջներ:

**Հետազոտությունը և զարգացումը**

25. Հստակեցնել ՎՊՀ հետազոտական ուղղությունները՝ մշակելով և կիրառելով հետազոտական գործունեության արդյունավետ ռազմավարություն, ինչպես նաև հաշվի առնելով արտաքին պահանջները:

26. Հստակեցնել հետազոտական ոլորտի զարգացմանը նպաստող ծրագրերը՝ հաշվի առնելով ամբիոններում առկա գիտական ներուժը, ինչպես նաև ապահովել ամբիոններում իրականացվող հետազոտությունների որակի գնահատումը:

27. Մշակել և կիրառել մեխանիզմներ դասախոսներին և ուսանողներին գիտահետազոտական աշխատանքերի ներգրավման համար:

28. Խթանել միջազգային մակարդակով հետազոտական գործունեությունը՝ շեշտադրելով համատեղ ծրագրերի իրականացումը:

29. Բարելավել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

**Ենթակառուցվածքը և ռեսուրսները**

30. Իրականացնել ՎՊՀ ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատում,

31. Ֆինանսական անկախության և կայունության նպատակով ապահովել ֆինանսավորման արտաքին աղբյուրների բազմազանությունը, ընդլայնել դրամաշնորհային ծրագրերի քանակը, միջոցներ ձեռնարկել ուսման վարձավճարներին այլընտրանքային ֆինանսական եկամուտների կայուն հոսք ապահովելու ուղղությամբ

32. Բուհի ֆինանսական պլանավորումն ու բաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով ՄԿԾ-ների պահանջները:

33. Բարելավել գրադարանային ենթակառուցվածքները՝ մասնագիտական մասնավորապես հայալեզու գրականության բավարար քանակով համալրում իրականցելու համար՝ ելնելով ուսանողների և դասախոսների պահանջարկից՝ առավել զարգացնելով նոր տեխնոլոգիաների կիրառումը

34. Զարգացնել SS ծառայությունների շրջանակը, որը կաջակցի բուհի կառավարման համակարգին, հեռահար ուսուցման ներդրմանը և այլ ոլորտներին:

35. Ստեղծել համապատասխան պայմաններ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար կրթական միջավայրը լիարժեք հասանելի դարձնելու նպատակով:

**Հասարակական պատասխանատվությունը**

36. Զարգացնել հասարակությանը գիտելիք փոխանցելու մեխանիզմները

37. Մշակել և ներդնել շահակիցների հետ հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ

**Արտաքին կապերը և միջազգայնացումը**

38. Տեղական և միջազգային կառույցների հետ ՄՈՒՀ-ի կողմից կնքված համաձայնագրերի հիման վրա մշակել համագործակցության միջոցառումների միասնական ծրագիր, համատեղ գործունեության կոնկրետ ուղղություններ, հստակ ժամանակացույց

39. Ներդնել ՎՊՀ արտաքին կապերի և միջազգայնացման բնագավառում ուսանողների ներգրավվածությունը խրախուսող գործուն մեխանիզմներ:

40. Օտարերկրյա ուսանողների ներհոսքի ապահովման նպատակով մշակել գործող ՄԿԾ-ների փաթեթների օտարալեզու տարբերակները

41. Ներդնել ՎՊՀ ուսանողների և դասախոսների շարժունությունը խրախուսող մեխանիզմներ

**Որակի ներքին ապահովման համակարգը**

42. Մշակել և ներդնել ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների մասնակցությունը խրախուսող քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ

43. Մշակել ՈԱ համակարգի գործունեության մշտադիտարկման և վերլուծության մեխանիզմներ և ապահովել ՈԱ պատասխանատուների մասնագիտական զարգացման շարունակականությունը

44. Բարելավել բուհում իրականացվող հարցումների և տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացը՝ ներդնելով դրանց իրականացման հուսալիությունը հավաստող մեխանիզմներ

## ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Վանաձորի պետական համալսարանը տարածաշրջանային բուհ է: Այն շատ կարևոր հաստատություն է տարածաշրջանի հասարակական և բիզնես ոլորտների համար: ՎՊՀ-ի հեղինակությունն ու կարևորությունն կբարձրանա տարածաշրջանի զարգացման և օտարերկրյա ներդրումների հետ միասին: Տնտեսություն զարգացումը կբերի լավ մասնագետների պահանջարկի բարձրաման: Սովորաբար նմանօրինակ գործընթացներն առավել աշխույժ են մայրաքաղաքում, քան մարզերում: Այս դեպքում համալսարանը (համալսարանի վարչական, պրոֆսորադասախոսական անձնակազմը) պետք է ակտիվ մասնակցություն ունենա տարածաշրջանի և քաղաքի ռազմավարության մշակմանը:

ՎՊՀ-ի կառավարման մշակույթը դեռ զարգացման փուլում է: Դեռ առկա է կառավարման բավական կենտրոնացված մոտեցում: Համալսարանի ֆինանասական և ռեսուրսային վիճակը հաշվի առնելով՝ դժվար կլինի խուսափել վերոգրյալ կենտրոնացումից, քանի որ կառավարման մշակույթը և սովորույթները սովորաբար աստիճանաբար են փոփոխվում: Համալսարանի ներսում ինստիտուցիոնալ զարգացման գործընթացները բավական դանդաղ են ընթանում, քանզի ներկայիս ռեկտորի պաշտոնը ժամանակավոր է: Զարգացմանը վերաբերող շատ որոշումներ հետաձգվում են մինչ նոր ռեկտորի ընտրությունը/նշանակումը, ինչը ռիսկային է դարձնում հաստատությունում որոշումների կայացման արդյունավետությունը:

Համալսարանական գործընթացները «կրթական ցիկլի» հաճախականությամբ են իրականացվում: Մի կողմից դրանք որոշակի կայունություն պետք է ապահովեն, մյուս կողմից պետք է տեղ թողնեն արդիականացման և բարելավման համար: Ուստի անհրաժեշտ է ներմուծել ռազմավարական կառավարման սկզբունքներ և գործիքակազմ՝ ներառյալ լավ բալանսավորված երկարաժամկետ (ռազմավարական) և կարճաժամկետ (տարեկան/գործողությունների) պլանավորում: Փաստերի (կատարողականի ցուցիչների) վրա հիմնված վերահսկողության համակարգը սովորաբար ռազմավարական կառավարման անքակտելի մասն է կազմում: Պլանավորման մեխանիզմները պետք է ներառեն անհրաժեշտ սկզբունքներ, մակարդակներ և չափանիշներ: Այս չափանիշները պետք է համահունչ լինեն ազգային/տարածաշրջանային, ինչպես նաև տեղական զարգացման ռազմավարություններին և կհեշտացնեն դրանց կիրառումը:

Համալսարանի ռազմավարությունը պետք է մշակվի այն հիմնական արժեքների վրա, որոնք համալսարանի համայնքն ամենակարևորն է համարում՝ ներգրավելով անհրաժեշտ և իրատեսական ռեսուրսներ, պատասխանատու անձիք:

Համալսարանի կառավարչական մարմինը կարևոր և պատասխանատու դեր ունի՝ այն է կառավարել համալսարանը և իրականացնել համալսարանի ռազմավարությունը:

Վերոգրյալն իրականացնել անհնար է առանց համալսարանի համայնքի հետ ակտիվ երկխոսության և աջակցության: Ուստի, համալսարանական համայնքի ամենաակտիվ անդամները՝ ուսանողներ, դասավանդողներ/հետազոտողներ, և անձնակազմի այլ ներկայացուցիչներ հույժ կարևոր են կարծիքներ, առաջարկություններ, հետադարձ կապ և օգնություն ստանալու համար:

Կառավարման մարմինը որոշումների կայացման համար օբյեկտիվ տվյալների հավաքագրման գործուն համակարգի կարիք ունի: Տվյալների հավաքագրման համակարգը պետք է քննարկումների առարկա դառնա, սահմանվի և փաստաթղթավորվի: Տվյալների հավաքագրման նմանօրինակ համակարգը կարող է համահունչ/կապակցված լինել կատարողականի ցուցիչների համակարգին: Գործընթացների կառավարման որդեգրումը որոշումների կայացումն ավելի կհեշտացնի, ինչպես նաև կնպաստի ՈԱ համակարգի համակարգված ներդրմանը: Գործընթացների կառավարումը պարտադիր պահանջ է նաև որակի կառավարման ISO ստանդարտների կիրարկման և վկայագրման համար:

Համալսարանի բոլոր այլ փաստաթղթերը ևս պետք է կառուցվեն/կոդավորվեն ռազմավարության իրականացման տիրույթին համապատասխան և դրան համահունչ: Ներկայումս փաստաթղթերի օպերատիվ կառավարման համար սա կարևոր բաղադրիչ է:

Համալսարանն ընդգծում է, որ հետևում է այսպես կոչված ՊԻՍԲ շրջափուլին, ինչը ողջունելի է: Բայց համակարգային մոտեցումների համար անհրաժեշտ է որդեգրել գործընթացների կառավարում: Հայաստանը միացել է Բոլոնիայի գործընթացին և ԵԲԿՏ մաս է կազմում 2005թ. ի վեր: Սա նաև նշանակում է, որ Հայաստանի համալսարանների որակի ապահովման համակարգերը պետք է համապատասխանեն Եվրոպական չափանիշների և ուղենիշների (ESG 2015) պահանջներին: Այս ամենը պետք է ձևակերպված լինի համալսարանի փաստաթղթերում և ներկայացվի արտաքին և ներքին շահակիցներին: Եվրոպական չափանիշներն ու ուղենիշները պետք է բացատրվեն և հասկացվեն համալսարանի բոլոր շահակիցների կողմից:

Համալսարանի ՈԱ համակարգը պետք է ծածկի համալսարանի բոլոր գործընթացներն ու գործողությունները: ՎՊՀ կատարած այցի ժամանակ ՄԿԾ-ների որակի ապահովման վրա կենտրոնացումն ուներ բարելավման կարիք: Խորհրդատվություններից մեկը, թերևս, կլինի այն, որ այս հարցը հատկապես կառավարչական վերին օղակների մոտ քննության առարկա դառնա: Անհրաժեշտություն կա նաև կառավարչական անձնակազմի հետ բարելավման ծրագիր մշակել, և այնուհետ այս ծրագիրը ներկայացնել հոգաբարձուների խորհրդին և կրթական համայնքին:

Համալսարանի կազմակերպչական կառուցվածքը համալսարանի կարևոր խնդիրներից մեկն է: ՎՊՀ կազմակերպական կառուցվածքը փոփոխությունների կարիք ունի:

Համալսարանը պետք է զգույշ լինի իր այն որոշումներում, որոնք վերաբերում են ուսանողների շատ փոքր թվաքանակ ունեցող ՄԿԾ-ների իրականացումը շարունակելուն:

Նմանօրինակ ՄԿԾ-ների իրականացումը կարող է շարունակվել միայն այն պարագայում, երբ կան հետաքրքրված արտաքին շահակիցներ (բիզնես, տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն), որոնք կհամաֆինանսավորեն ծախսերը: Ակնկալվող վերջնարդյունքների վրա հիմնված ուսանողակենտրոն մոդելը պահանջում է պարբերական վերանայում և գործատուների, դասավանդողների ու ուսանողների հետ քննարկումներ: Խորհուրդ է տրվում ՈԱ համակարգի նկարագիրն ունենալ որպես մեկ ընդհանրական և համապարփակ փաստաթղթուղթ:

Ուսանողների արձագանքը համալսարանում կատարվող գործընթացներին դեռևս պահպանողական է: Ուսանողների շրջանում քննադատական մտքի զարգացման անհրաժեշտություն կա: Ուստի վարչական անձնակազմի և դասախոսների դերակատարությունն է ուսանողներին քաջալերել լինել քննադատ, ինչպես նաև ավելի քննադատ իրենց շուրջ կատարվող ցանկացած իրադարձության նկատմամբ: Հատկապես կարևորվում են ուսումնառության գործընթացի որակը և ուսանող-դասախոս հաղորդակցությունը: Կարևոր է հասնել նրան, որ ուսանողների մասնակցությունը ՎՊՀ-ի կառավարման մարմիններում լոկ ֆորմալ բնույթ չկրի:

Ներկայումս ՎՊՀ-ի հետազոտությունը ունի բարելավման անհրաժեշտություն: Նմանօրինակ իրավիճակը հասկանալի է, քանզի այն ոչ վաղ անցյալում եղել է մանկավարժական ինստիտուտ: Բայց ինքնին համալսարանի կարգավիճակը պահանջում է, որպեսզի ՄԿԾ-ների մեծամասնությունը հիմնված լինի ուսումնական անձնակազմի/դասախոսների իրականացրած հետազոտության վրա: ՎՊՀ-ում հետազոտութան միջազգայնացմանն ուղղված քայլեր պետք է ձեռնարկվեն անկախ հետազոտության ոլորտներից (անգամ հայոց լեզվի, մշակույթի և պատմությանը վերաբերող): Ուստի, միջազգային հրատարակությունները (ոչ միայն ՌԴ-ում), որոնց հղման ցուցիչները հասանելի են համաշխարհային հետազոտական համայնքին, կարող են օբյեկտիվորեն ներկայացնել համալսարանի և անձնակազմի գրանցած հետազոտական ձեռբերումները: Ոչ միայն հրատարակությունները, այլ նաև հետազոտության ու տեխնոլոգիական/ծրագրային ապահովման կիրառման, նախատիպերի, կամ նորարարական այլ հնարքների կիրառման օրինակները կարող են ներկայացնել համալսարանի և համալսարանական համայնքի հետազոտական ներուժը: Այս բավական բարդ խնդիրը լուրջ քննարկումներ և բարելավման հստակ քայլեր է պահանջում:

ՎՊՀ-ը պետք է միջազգայնացման հստակ ռազմավարություն ունենա, որը որոշակի առաջնահերթություններով, նպատակներով և վերջնարդյունքներով, պատասխանատու անձանցով, վերջնաժամկետներով և խելամիտ ռեսուրսներով հանդերձ պետք է ներառված լինի համալսարանի երկարաժամկետ պլանավորման մեջ: Միջազգայնացման ռազմավարության իրականացումը մեծամասամբ խարսխված է պրոակտիվ կառավարման վերին օղակների (ռեկտորի անձնական օրինակն ու ներառվածության մակարդակը), ինչպես նաև ուսումնական անձնակազմի և ուսանողների համապատասխան

հաղորդակցական հմտությունների վրա: Խորհուրդ է տրվում ֆինանսավորել անձնակազմի համար իրականացվող անգլերենի հատուկ դասընթացներ: Անգլերենի իմացության համապատասխան մակարդակը պետք է աշխատանքային պայմանագրի, ինչպես նաև ուսումնական անձնակազմի պարբերական մրցույթներին ներկայացվող պահանջ լինի: Համալսարանական ողջ համայնքը պետք է ներառված լինի վերոգրյալ ռազմավարության իրականացման գործընթացներում:

**23 դեկտեմբեր 2019թ.**

**Վարդան Սարգսյան**

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վանաձորի պետական Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Վարդան Սարգսյան** - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
- **Վայրիդոտաս Վիլիունաս** - Քաղաքականություն մշակման և ծրագրի իրականացման ղեկավար, Բարձրագույն կրթության ինստիտուտների եվրոպական ասոցիացիա (EURASHE),
- **Արամ Բաղիյան** - «Իմպրովիզ» ՍՊԸ-ում գիտական խորհրդատու, տեխնիկական գիտությունների թեկնածու,
- **Աննա Փոլադյան** - Երևանի պետական համալսարան, կենսաբանական գիտությունների թեկնածու Դոցենտ, Կենսաբանության ֆակուլտետ, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն,
- **Օֆելյա Արզումանյան** - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռադիոտեխնիկա բաժնի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ Գայանե Անանյանը:

Թարգմանությունը կատարել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի Օտար լեզուների ամբիոնի վարիչ Զարուհի Սողոմանյանը:

Փորձագիտական խմբի անդամները, թարգմանիչը, համակարգողը ստորագրել են գաղտնիության և շահերի բախման բացառման հայտարարագրեր:

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

**Դիմում պետական հավատարմագրման համար**

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՎՊՀ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՎՊՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

**Ինքնավերլուծություն**

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՎՊՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է 14.01.2019թ.-19.04.2019թ.:

**Նախապատրաստական փուլ**

ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև համակարգողն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ՎՊՀ-ի հետ:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ ՈԱԱԿ-ի վերապատրաստման պատասխանատուների կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ:
2. Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով:
3. Փորձագիտական այց դերային խաղերի միջոցով:
4. Փորձագիտական զեկույցի պատրաստում:

Վերապատրաստումների ընթացքում քննարկվել են որակի ապահովման չափանիշները և ոլորտի առանձնահատկությունները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Հիմնական խնդիրների և ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի առանձնացումից հետո փորձագիտական խումբը հստակեցրել է հանդիպումների ժամանակ քննարկվող խնդիրները: Պարբերաբար կրկնվող հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ հարցադրումները և կազմվել փորձագիտական խմբի նախնական այցի փաթեթը: Փաթեթը պարունակում էր հանդիպումների պլան-ժամանակացույցը ուսումնասիրման և պարզաբանման ենթակա հարցերը՝ ըստ թիրախային խմբերի և այն լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել փորձագիտական այցի ընթացքում: Համալսարանի կողմից ներկայացրած ցանկերից ընտրվել են դասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչները, շրջանավարտները, գործատուները, որոնք պետք է մասնակցեին հանդիպումներին:

**Այցի պլանի համաձայնեցում**

2019 թվականի սեպտեմբերի 2-ից 6-ը ընկած ժամանակահատվածում ՎՊՀ-ի հետ առցանց քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումները, ուր ցանկանում են այցելել փորձագետները, քննարկվել են նաև այլ կազմակերպչական ու տեխնիկական ապահովվածության հարցեր:

**Փորձագիտական այց**

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ. սեպտեմբերի 16-ից 19-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՎՊՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ

չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ՎՊՀ ռեկտորի հետ հանդիպումներով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[1], ռեսուրսների դիտարկում[2] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում: Փորձագիտական խումբը այցելել է ՄՈՒՀ՝ 16.09.2019-19.09.2019:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

**Փորձագիտական զեկույց**

Փորձագիտական խմբի ներկայացուցիչները և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք, որը ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 14.11.2019-ին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն Ակադեմիան ուղարկել է ՈԱԱԿ 09.12.2019թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի փորձագետներին: Դիտողությունների ամփոփ տարբերակը թարգմանվել և քննարկվել է միջազգային փորձագետի հետ: Դիտողությունների վերաբերյալ 2019թ. Դեկտեմբերի 23-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 23.12.2019թ.:

---

**Գայանե Անանյան**
**Համակարգողի ստորագրությունը**
**23 դեկտեմբերի 2019թ.**

## ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Պատմություն**. Վանաձորի պետական համալսարանը ունի 50 տարվա պատմություն: Այն Կիրովականի (հետագայում՝ Վանաձորի) պետական մանկավարժական ինստիտուտի իրավահաջորդն է: Ի սկզբանե բուհի հիմնադրումը նպատակ է ունեցել ապահովելու Հայաստանի հյուսիսարևելյան տարածաշրջանի կրթօջախները մանկավարժական կադրերով: Իր գործունեության սկզբնական տարում (1969թ.) Ինստիտուտում կրթությունը իրականացվել է ուսուցման հեռակա ձևով, սակայն արդեն 1970թ-ին ներդրվել է նաև առկա ուսուցման համակարգը: 1989թ-ին կազմակերպվել և շուրջ 3 տարի գործել է Ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը: Ինստիտուտի գործունեության բնականոն ընթացքը խաթարվել է 1988թ. դեկտեմբերի 7-ին՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժի պատճառով: 1988-2000 թթ-ի ընթացքում Ինստիտուտը երկրաշարժի գոտու այլ հիմնարկ-ձեռնարկությունների նման իր գործունեությունը շարունակել է դժվարին պայմաններում: 2001 թվականից կրում է մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի անունը: 2002-2014թթ-ին Ինստիտուտը գործել է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ): 2014 թ-ին ստացել է Համալսարանի կարգավիճակ, իսկ 2016 թ-ին վերակազմավորվել է «Վանաձորի պետական համալսարան հիմնադրամ»-ի:Համալսարանի տեսլականում արտացոլված են հավակնությունները՝ ձգտել բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով կոմպետենտ մասնագետներ, և դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կայուն զարգացում ապահովող, կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոն: ՎՊՀ-ն 2015 թ. հոկտեմբերի 15 –ին անցել է պետական հավատարմագրում 4 տարով, ինչը պարտավորեցնող է և վկայում է, որ ՄՈՒՀ-ը՝ համաձայն իր առաքելությանը, մատուցում է պետության կողմից ճանաչվող և ներքին ու արտաքին շահակիցներին վստահություն ներշնչող ծառայություններ:

**Կրթություն.** Համաձայն Բոլոնյան գործընթացի հիմնարար սկզբունքների՝ բուհում ներդրված է բարձրագույն մասնագիտական կրթության եռաստիճան համակարգ՝ 2006թ-ից իրականացվել է ասպիրանտուրայի, 2008-2009 ուստարվանից՝ մագիստրատուրայի ընդունելություն: Ներկայում Համալսարանն ունի առկա ուսուցման համակարգում՝ 36, հեռակա ուսուցման համակարգում՝ 32, մագիստրատուրայում՝ 23 առկա և 4 հեռակա ՄԿԾ-ներով կրթություն իրականացնելու պետական լիցենզիա: Համալսարանն իրավունք ունի ասպիրանտական կրթություն իրականացնել 7 մասնագիտություններով:

Բացի ՈԱԾ-ի 6-8-րդ մակարդակներից՝ ներկայումս Համալսարանը կրթություն է իրականացնում նաև ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներով. 2008 թ-ից ՎՊՄԻ ՊՈԱԿ-ին է միացել 2002 թ-ից ՀՀ կառավարության որոշմամբ գործող Զորիկ Գևորգյանի անվան վարժարանը (այժմ՝ ՎՊՀ հենակետային վարժարան), իսկ 2011թ-ին կազմավորվել է ՎՊՀ քոլեջը, որը իրականացնում է միջին մասնագիտական կրթություն:ՎՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացման կարևորագույն գործոնը որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման, համալրման, զարգացման և սահուն սերնդափոխության իրականացումն է: Բարելավման գործողությունների պլանով՝

կատարվել է կադրային ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցում արդի պահանջներին. ստեղծվել է մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) բաժինը և մշակվել է «ՎՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը» փաստաթուղթը: Այսօր տարածաշրջանի ուսուցիչների շուրջ 70%-ը բուհի շրջանավարտներ են, որոնք բարձր վարկանիշ ունեցող մասնագետներ և կրթական գործի կազմակերպիչներ են: ՄՈՒՀ-ի շրջանավարտների թիվը մեծ է նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մեջ (134 անդամ), որոնցից գիտական աստիճան և կոչում ունեն 77-ը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի մասնագիտական պատրաստվածության շարունակական բարձրացումը, նոր գիտելիքի, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը Բուհ-ի կարևորագույն խնդիրներց մեկն է: Բուհ-ում կազմակերպվում են մի շարք նախագծեր: PRINTEL (ERASMUS+) նախագծում՝ «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» նախագծի շրջանակներում Համալսարանը համագործակցում է Լյովենի կաթոլիկ, Բարսելոնայի, Պորտոյի, Լինշոպինգի և Գրացի Կիրառական գիտությունների համալսարանների հետ, որտեղ վերապատրաստվել են 6 երիտասարդ դասախոսներ: Մինչ գործուղելը նրանց հետ կնքվել է համաձայնագիր և, արդյունքում, վերադառնալուց հետո վերապատրաստվել են ավելի քան 60 դասախոս:

**Կրթական միջավայր.** ՎՊՀ-ի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է կրթական ծառայությունների որակի բարելավման պահանջների բարձրացումը, միջազգային չափորոշիչներին համապատասխանեցումը: Բարելավվել է կրթական միջավայրը, կատարվել է ռեսուրսների վերաբաշխում, օգտագործման օպտիմալացում: Սակայն միշտ չէ, որ դրված խնդիրները լիովին իրագործվել են. Կա մարդկային ռեսուրսի խնդիր: Համալսարանում կրթական կարիքներն ապահովելու և հագեցած կրթական միջավայր ստեղծելու համար առկա են 1 վարչական, 3 ուսումնական մասնաշենքեր, որոնցից մեկը գրանցված է Գր. Լուսավորիչի 47 հասցեում՝ Համալսարանի հիմնական տարածքից դուրս:

**Հետազոտություն.** Գիտության և կրթության միջև արդյունավետ կապի իրականացումը համալսարանի գիտական ոլորտի զարգացման պարտադիր պայմաններից է: ՎՊՀ-ն իր տեսլականում սահմանել է հավակնություններ. դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կայուն զարգացումն ապահովող, կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոն: ՎՊՀ-ում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները վավերացվում են համապատասխան հետազոտական զեկույցներում ու հրապարակումներում և ակադեմիական հասարակությանն են ներկայացվում գիտական ժողովածուներում, պարբերականներում և մենագրություններում և այլն:

**Միջազգայնացում.** ՎՊՀ-ի միջազգայնացման ռազմավարությունը բխում է Համալսարանի առաքելությունից և կանխորոշվում է հետևյալ գերակա ուղղություններով. Ակտիվ

մասնակցություն՝ համաեվրոպական ընդհանուր կրթական տարածք ներգրավվելու նպատակով, ՎՊՀ միջազգային հարաբերությունների ընդլայնում և բազմազանեցում,Եվրոպական բուհերի և կրթության և գիտության բնագավառում այլ միջազգային հաստատությունների հետ համագործակցության խթանում,ՎՊՀ-ի միջազգային գործունեության տեղեկատվության տարածում,դրամաշնորհային (գրանտային) նախագծերի որոնում և մշակում, տեղեկատվության տրամադրման նպատակով խորհրդատվական ծառայությունների բարելավում, միջառարկայական գիտակարգերի շրջանակում մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերի, ինչպես նաև համատեղ/կրկնակի կրթական ծրագրերի մշակում և ներդրում,հրավիրվող աշխատակազմի և ուսանողների կարճաժամկետ և երկարաժամկետ կեցության նպատակով բարենպաստ պայմանների ստեղծում,ուսումնամեթոդական բաժինների, ամբիոնների, ֆակուլտետների և անհատական փորձագետների ակտիվ ներգրավվածություն գիտական և կրթական նախագծերին և դրամաշնորհներին (կրկնակի/համատեղ դիպլոմ, աշխատակազմի և ուսանողների շարժունություն): ՎՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացը համակարգում է Համագործակցության և կապերի բաժինը, որը գործում է 2013 թ-ից:

**Որակի ապահովում.** ՎՊՀ-ի ՈԱԿ–ը գործում է ՈԱԿ-ի կանոնակարգին համապատասխան, որը կարգավորում է Կենտրոնի կազմակերպչական և մեթոդական հիմքը, նրա հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև Համալսարանի ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները: Որակի ապահովման ներքին համակարգը նպաստում է համալսարանի կրթական, գիտական և մեթոդական գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: Ներկա փուլում որակի ներքին համակարգի խնդիրները կենտրոնացված են Համալսարանի որակի ապահովման կառավարման և որակի մշակույթի տարածման համակարգի զարգացմանը և բարելավմանն ուղղված գործողությունների արդյունավետության բարձրացման վրա:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել է որպես ՄՈՒՀ-ի հիմնական հավակնություններ և նպատակներ:

## I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:**

**Փաստեր**

**1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:**

ՎՊՀ 2014-2018թթ. զարգացման հայեցակարգում ներառված է առաքելությունը: Առաքելությունը արտացոլում է Համալսարանի գործունեության երեք հիմնական նպատակները. 1. ձգտելով ապահովել կայուն զարգացում, կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնում է շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականություն, 2. ձգտելով պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ, 3. ընդունելով հասարակության առջև իր պատասխանատվությունը, նպաստում է անհատի շարունակական զարգացմանը, ստեղծում է նպաստավոր միջավայր համակողմանի զարգացած անձի ձևավորման համար: ՄՈՒՀ-ի առաքելությունը ընդհանրական է և չի արտացոլում բուհի առանձնահատկությունը, չի ընդգծում բուհի կրթական ծրագրերի բովանդակային շրջանակը, չի ներկայացնում բուհի առանձնահատկությունները: Որպես տարածաշրջանի համալսարան ՎՊՀ-ն ներգրավված չի եղել տարածշրջանի զարգացման պլանի մշակմանը:

Ըստ ՎՊՀ ինքնավերլուծության ՄՈՒՀ-ն իր գործունեությունը իրականացնում է ՈԱՇ-ի 4-8-րդ մակարդակներով (4-րդ և 5-րդ մակարդակը ապահովում են միջին մասնագիտական կրթություն, իսկ 6-8-ը՝ բարձրագույն մասնագիտական կրթություն):

Առկա է ՎՊՀ 2014-2018թթ Ռազմավարության Իրականացման Պլան, որում ներկայացված են հաշվետու ժամանակահատվածի համար ՄՈՒՀ-ի ռազմավարական 7 ուղղությունները, իրենց համապատասխան նպատակներով, վերջիններիս համապատրասխան գործողություններով և ցուցիչներով: Ռազամավարական ուղղությունները հետևյալն են. կրթական գործունութեության զարգացման ռազմավարություն, գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարություն, կրթության որակի ապահովման բնագավառի զարգացման ռազմավարություն, արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարություն, սոցիալ դաստիարակչական գործունեության զարգացման ռազմավարություն, կառավարման համակարգի կատարելագործման ռազմավարություն, կարիերայի և շրջանավարրտների աջակցության ռազմավարություն:

Նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում կազմված բարելավման կետերից մեկը ՄՈՒՀ-ի առաքելության վերանայումն էր, ինչի վերանայումը հանձնարարվել է ամբիոններին, սակայն առաքելությունը որևէ փոփոխության չի ենթարկվել: ՄՈՒՀ-ի կողմից ձևակերպված նպատակներն ու խնդիրները տարանջատված չէին, այլ բերված էին

ընդհանուր <խնդիրներ և նպատակներով> ցուցակով, որից պարզ չէ դրանց տարբերությունը: Փորձագիտական այցի դրությամբ բուհում մշակված չէր հաջորդ 5 տարիների Ռազմավարական ծրագիրը, ՄՈՒՀ-ի ռեկտորի փաստմամբ բուհը ներկայում առաջնորդվում է 2019-2021թթ Օպերացիոն պլանով, որը սակայն հաստատված չէր ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից:

**1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:**

Ըստ ինքնավերլուծության, ՄՈՒՀ-ի ներքին շահակիցներն են ՎՊՀ ուսանողները, ՊԴ և վարչական անձնակազմը, դիմորդները: Հաստատությասն արտաքին շահակիցներն են գործատուները, շրջանավարտները, ամբողջ հանրությունը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի առաքելության մշակման աշխատանքներն իրականացվել են ՎՊՀ Որակի Ապահովման Կենտրոնի կողմից: Ռազմավարական ծրագրում արտացոլված են առավելապես ներքին շահակիցների կարիքները: Իսկ ՌԾ-ում ներքին շահակիցների կարիքների հաշվի առնումը հիմնականում տեղի է ունեցել կառավարման կոլեգիալ մարմիններում ընդգրկելու միջոցով: Չնայած արտաքին շահակիցները մասնակցում են ՄՈՒՀ-ի գործունեության հետ կապված խնդիրների վերհանմանը և լուծումներ առաջարկելուն, սակայն նրանց ներգրավվածությունը համակարգված բնույթ չի կրում և իրականացվում է հիմնականում դեկանների և գործատուների նախաձեռնողականությամբ: Առկա են համագործակցության հուշագրեր, սակայն դրանց հիման վրա աշխատանքային գործողությունների պլաններ առկա չեն: Կառավարման խորհրդում ուսանողների, դասախոսների, արտաքին շահակիցների ներգրավվածությունը պասիվ է, ինչը պարզ դարձավ նաև փորձագիտական այցի ընթացքում:

**1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:**

Համալսարանի գործունեության արդյունքները գնահատելու համար 2016 թ.-ից կիրառվում է գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներով (ԳԱՑ) տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, որն իրականացվում է տարին մեկ անգամ: ԳԱՑ-ը ընդգրկում է Համալսարանի գործունեության 6 ոլորտներ՝ ընդունելություն և համակազմ, ուսումնական գործընթաց, ռեսուրսներ և կառավարում, ենթակառուցվածքներ, գիտություն և նորամուծություն, արտաքին կապեր և միջազգային համագործակցություն: ՎՊՀ 2014-2018 թվականների Ռազավարական ծրագրի իրականացումը գնահատվել է ըստ ԳԱՑ-երի: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի 2019-2021թթ. օպերացիոն պլանում նախատեսել է իրականացնել ԳԱՑ-երի վերնայում, քանի որ առկա փաստաթղթում առկա մի շարք ցուցանիշներ հստակ չափելի չեն:

Որպես առաքլեության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմ կարող են դիտարկվել նաև բազմաթիվ հարցումները և որոշ վերլուծություններ:

ՈԱԿ-ը 27.05.2015 թ.-ին ընդունված Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգի 7.2 կետի համաձայն պարբերաբար գիտխորհրդին է ներկայացնում համալսարանի գործունեության վերաբերյալ վերլուծությունների արդյունքները: «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի՝ 2019թ. փետրվարի 28-ին տեղի ունեցած թիվ 2 նիստում ՈԱԿ-ի կողմից ներկայացվել է ՎՊՀ-ի 2019-2023 թթ. ռազմավարական նպատակների հստակեցման համար իրականացված SWOT վերլուծության արդյունքները:

**Դատողություններ** Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՎՊՀ ջանքերն ուղղված ռազմավարական պլանավորմանն ու կառավարմանը: Նախորդ 5 տարիների /2014-2018/ համար ՄՈՒՀ-ը արդյունավետ իրականացրել է իր ռազմավարական պլանը՝ յուրաքանչյուր տարի վերլուծելով առաջընթացը և ներկայացնելով ՄՈՒՀ-ի տարեկան հաշվետվություններում: ՄՈՒՀ-ը ներկայում առաջնորդվում է 2019-2021 թթ օպերացիոն պլանով, որը սակայն հաստատված չէր ՎՊՀ Կառավարման խորհրդի կողմից, ինչը ռիսկային է ՄՈՒՀ-ի հետագա զարգացման համար և խոչընդոտում է կուտակված լավագույն փորձի տարածմանը: Բարելավման պլանով նախատեսված գործողությունների իրականացումը կապված առաքելության վերանայման, հստակեցման և ռազմավարական ուղղությունների թիրախավորման հետ կնպաստեն բուհի զարգացմանը:

Դրական է, որ բուհի ներքին շահակիցները ներգրավվածություն ունեն ռազմավարական նպատակների սահմանման և իրականացման գործընթացում, իսկ արտաքին շահակիցները ոչ համակարգված են ներգրավված ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացում: Հարկ է նշել, որ արտաքին շահակիցների առավել ակտիվ համակարգված մոտեցումը կնպաստի արտաքին միջավայրի խնդիրներին պարբերաբար արձագանքելու հնարավորությանը:

Դրական է, որ ՎՊՀ Ռազմավարական նպատակների իրականացման որակի գնահատման նպատակով մշակվել են Գործունեության առանցքային ցուցիչներ: Գործունեության առանցքային ցուցանիշների կիրառումը ՎՊՀ գործունեության գնահատման համար դրական ընթացակարգ է և նպաստում է բուհի առաջընթացի գնահատմանը և խնդիրների դուրսբերմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ 2016-2018 թթ. հաստատության կողմից իրականցվել է վերլուծություն ըստ ԳԱՑ-երի, որոնք հրապարակված են հաստատության կայք էջում: Փորձագիտական խումբը փաստում է, որ առկա ԳԱՑ-երի բարելավման գործընթացը կնպաստի բուհի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ՎՊՀ-ն իրականացրել է արդյունավետ գործունեություն իր 2014-2018թթ. Ռազմավարական պլանին համապատասխան, շահակիցները ներգրավված են ռազմավարական պլանավորման և իրականացման գործընթացներում, մշակվել է գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ, իրականացվել է ռազմավարական ծրագրի գնահատում ըստ այդ ցուցանիշների՝ դրա արդյունքում սահմանելով նաև բուհի հետագա երեք տարիների համար նախատեսված միջնաժամկետ պանավորում, ՄՈՒՀ-ը հստակ գիտակցում և մատնանշում է առաքելության իրականցման հետ կապված խնդիրները, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին: Միևնույն փորձագիտական խումբը նշում է,

որ առկա է առաքելության վերանայման անհրաժեշտություն՝ արտաքին շահակիցների ակտիվ ներգրավմամբ, ինչպես նաև առկա վիճակի և արտաքին միջավայրի վերլուծությամբ:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:**

**Փաստեր**

**2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:**

Բուհի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության և բուհի կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ: Համալսարանի միանձնյա ղեկավարումն իրականացնում է ռեկտորը, իսկ կոլեգիալ կառավարման մարմիններն են ՎՊՀ Հոգաբարձուների խորհուրդը, Գիտական խորհուրդը և ռեկտորատը: Բուհի ներքին շահակցիները (դեկան, ամբիոնի վարիչ, ուսանող և այլն) ներկայացված են բուհի կառավարման մարմիններում: Բուհում գործում են համապատասխան գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումներ և մարմիններ. ուսումնամեթոդական վարչություն, ՈԱԿ, մարդկային ռեսուրսների բաժին, ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժին, շարունակական կրթության կենտրոն, համագործակցության և կապերի բաժին, ֆակուլտետներ, ամբիոններ, գրադարան, ուսանողական խորհուրդ և այլն: Բուհի կառավարման համակարգում, տարբեր խնդիրների օպերատիվ լուծման նպատակով կարող են գործել տարբեր հանձնաժողովներ /ՎՊՀ ռեկտորին առընթեր գործող ֆինանսատնտեսական հանձնաժողով, ՎՊՀ գիտական խորհրդին կից գործող մրցութային հանձնաժողով/ (որպես լրացուցիչ և ժամանակավոր կառավարման ռեսուրս), սակայն այդ հանձնաժողովների գործունեության արդյունքները արձանագրված և վերլուծված չեն:

Համալսարանի ֆինանսական մուտքերը հիմնականում առաջանում են ուսանողների վարձավճարներից, դրամաշնորհներից և միջազգային ծրագրերից: Համալսարանի բյուջեն, ռազմավարական ծրագիրը և հաստիքացուցակը հաստատվում են հիմնադրի կառավարման՝ հոգաբարձուների խորհրդի կողմից: 2018թ. հաստատվել են 147 պաշտոնների անձնագրեր, որոնք մշակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի

սեպտեմբերի 19-ի թիվ 873-Ն հրամանով հաստատված «Զբաղմունքների դասակարգիչի» հիման վրա: Ֆինանսական ռեսուրսների սղության պատճառով առաջացել են խնդիրներ կապված գրադարանային ռեսուրսների համալրման, երիտասարդ մասնագետների խրախուսման, դասախոսների մասնագիտական վերապատրաստումների իրականացման, արտաքին միջազգային կապերի ակտիվացման հետ:

Վերջին չորս տարիների կատարվել են որոշ կառուցվածքային փոփոխություններ: Հոգաբարձուների խորհրդի կառուցվածքային փոփոխություններին ուղղված որոշմամբ՝ վերակազմավորվել են մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) և ֆինանսական ռեսուրսների կառավարման (ՖՌԿ) բաժինները: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տվյալ փոփոխությունների նպատակը հստակ չէր, քանի որ վերոնշյալ բաժինները չէին ծառայում իրենց նպատակին: Օրինակ՝ ՄՌԿ բաժինը արդյունավետ չի իրականացնում անձնակազմի գնահատում՝ առաջընթացի պլանավորմամբ: Իսկ ՖՌԿ բաժինը չի իրականացնում ֆինանսական ռեսուրսների գնահատում և ըստ ռազմավարական առաջնահերթությունների պլանավորում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց որ բուհի կազմակերպական կառուցվածքը չի ապահովում բուհի արդյունավետ կառավարման համակարգ: Բուհում առկա չէ գիտության համար նախատեսված առանձին ենթակառուցվածք կամ ստորաբաժանում, որը կարող է համակարգել ամբիոններում գիտական գործունեությունը:

Նախորդ հավատարմագրման արդյունքում 2017 թվականին մշակվել և ընդունվել է էթիկայի կանոնագիրք, սակայն այդ կանոնագրքում էթիկական կառավարման սկզբունքներին կատարված է միայն հպանցիկ անդրադարձ: Բավարար նկարագրված չեն բուհում որոշումներ կայացնելու էթիկայի կանոնները:

**2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:**

Բուհի կառավարման համակարգը ապահովվում է դասախոսների և ուսանողների ընդգրկվածությունը, համաձայն կրթության մասին օրենքի, այլ իրավական ակտերի և բուհի կանոնադրության: Բուհի կոլեգիալ կառավարման մարմիններում համապատասխան կանոնակարգերով ապահովված է ուսանողների 25 տոկոս մասնակցություն: Բուհի խորհրդում ՊԴ կազմը և ուսանողությունը ներկայացված են 25-ական տոկոսով: Դասախոսների մասնակցությունը ԳԽ-ում ապահովված է ամբիոնի վարիչների և փոքրաթիվ դասախոսների մասնակցությամբ: Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը կազմավորված է հիմնադրի, լիազոր մարմնի, պրոֆեսորադասախոսական և ուսանողության կողմից ընտրված խորհրդի 6-ական անդամներից: Համաձայն արտաքին և ներքին իրավական ակտերի և կանոնների դասախոսները և ուսանողները ունեն հնարավորություն բուհի կառավարման համակարգում մասնակցելու իրենց առընչվող որոշումների կայացմանը:

ՎՊՀ դասախոսների և ուսանողների մասնակցության պայմաններում ցածր է իրենց վերաբերող խնդիրների բարձրացման նախաձեռնողականությունը: Ուսանողների կողմից գիտխորհրդում գրեթե հարցեր չեն բարձրացվում, չկան արձանագրված դեպքեր, երբ որոշումներն ընդունվել են դասախոսների կամ ուսանողների առաջարկությունների հիման վրա: Բուհի գիտական խորհրդի նիստերին ուսանողները և դասախոսները կարող են հետևել առցանց տարբերակով, իսկ կայացված որոշումները հրապարակվում են կայքում:

Համալսարանի կառավարման հետ կապված խնդիրների քննարկման, կառուցողական մթնոլորտի ձևավորման նպատակով ՈԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվում են ֆոկուս խմբերի քննարկումներ և հարցումներ ուսանողների և դասախոսների հետ, որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն ունի բարձրացնելու իրեն հուզող հարցերը, արտահայտելու տեսակետներ, կատարելու առաջարկություններ: ՊԴ կազմի ոչ բոլոր անդամներն են մասնակցում հարցումներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ որ ՎՊՀ Ուսանողական խորհորրդը բավականին պասիվ է՝ նախաձեռնողականության տեսակետից:

**2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:**

Հավատարմագրամն գործընթացի ընթացքում ՎՊՀ-ում առկա էր միայն 2019-2021 թթ-ի համար նոր մշակված Օպերացիոն /միջնաժամկետ/ պլան, որը դեռևս հաստատված չէր ՄՈՒՀ-ի կառավարման խորհրդի կողմից: ՎՊՀ ստորաբաժանումներն ու ֆակուլտետներն իրենց գործունեությունն իրականացնում են ըստ իրենց կարճաժամկետ /տարեկան/ պլանավորումների: Հստակ չէ արդյոք դրանք կապված են միջնաժամկետ վերոնշյալ պլանի նպատակների հետ:

ՎՊՀ ֆինասական պլանավորումն իրականացվում է բուհի առանձին ստորաբաժանումների, այլ ոչ թե ֆակուլտետների և առանձին ՄԿԾ-ների մակարդակով: Յուրաքանչյուր տարվա համար մշակվում է բյուջե, որտեղ արտացոլված են ֆինանսական մուտքերը և ծախսերն ըստ առանձին հոդվածների: Ստորին օղակների ֆինանսական պլանավորումը ինտեգրված է ընդհանուր բյուջեում ներառված հոդվածներում:

Պլանավորման, իրականացման և մշտադիտարկման մեխանիզմները հիմնված են միայն հաշվետվողականության համակարգի վրա և մշակված չեն մշտադիտարկման, հետադարձ կապի և բարելավման գործուն ընթացակարգեր և մեխանիզմներ, չնայած նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում կազմված Բարելավման պլանով նախատեսվում էր հետադարձ կապի մեխանիզմների կատարելագործում:

Բուհը չունի մշակված և ընդունված ՌԾ հաջորդ հինգ տարիների համար: Փորձագիտական խմբին այցի ժամանակ ներկայացվել է միայն եռամյա 2019-2021թթ գործողությունների Օպերացիոն պլան:

**2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:**

ՎՊՀ ինքնավերլուծության մեջ հստակ ներկայացված չեն բուհի գործունեության վրա ազդող գործոնների կոնկրետ ուսումնասիրություններ, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ բուհն իրականացնում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն հիմնականում հարցումների և ֆոկուս խմբերի քննարկումների միջոցով: Հարցումների մի մասն իրականացվել է միջազգային ծրագրերի շրջանակներում, որոնց արդյունքում վեր են հանվել որոշ խնդիրներ (մատուցվող ծառայությունների և ռեսուրսների վիճակ և այլն): Կատարվել են այցեր դպրոցներ՝ պարզելու համար հավանական պոտենցիալ դիմորդների քանակը: Պետք է փաստել, որ իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների պլանավորման, իրականացման հստակ ընթացակարգեր բուհում առկա չեն:

ՎՊՀ-ում առկա չէ շահակիցների կարիքների վերհանման նպատակով իրականացվող հարցումների արդյուքների, ինչպես նաև բանավոր քննարկումների արդյունքների հիման վրա որոշումների կայացման գործընթացում բավարար կիրառելիություն: Կատարված հարցումներից բացի, բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության այլ մեթոդներ չեն կիրառվում, մասնավորապես՝ առկա իրավիճակի բազմակողմանի վերլուծություններ, արձանագրված բաց քննարկումներ, տարածաշրջանի աշխատաշուկայի կամ ժողովրդագրական համակարգված վերլուծություններ՝ որոշումների կայացման և հետագա գործունեության պլանավորման և զարգացման համար:

ՄԿԾ-ների ներդրման և բարեփոխումների գործընթացները հենվում են ռեգիոնի աշխատանքային շուկայի պահանջների վրա: Օրինակ՝ "Կառավարում", "Դեղագործական քիմիա" կրթական ծրագրերի իրականացումը բուհի կողմից հիմնավորվում է համապատասխան մասնագետների համեմատաբար բարձր պահանջարկի վրա: Որոշ մանկավարժական ուղղության մագիստրոսական ծրագրերի իրականացումը նույնպես մարզի դպրոցներում մանկավարժների պահանջարկով է պայմանավորված:

**2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):**

Համալսարանի որակի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են որակի ապահովման, որակի կառավարման, որակի բարելավման գործառույթները, որոնց հիմքում դրված է պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում /ՊԻԳԲ/ մոդելը:

Բուհում առկա են ՊԻԳԲ շրջափուլային սկզբունքն իրականացնելու առանձին օրինակներ, որոնցից են.

- Վերջին հինգ տարիների ընթացքում վերանայվել են համալսարանի գործունեության համակարգման իրավական ակտերը

- Որակի ապահովման գործընթացներին ուսանողների ներգրավվածության մեծացման և ակտիվացման նպատակով կազմակերպված աշխատանքների ընթացքում բարձրացված հարցերի հիման վրա նրանց համար կազմվել է որակի ապահովման ձեռնարկ

- ՄԱՀԱԹՄԱ ծրագրի շրջանակներում "Կրթության կառավարում" կրթական ծրագիրը անցնելով արտաքին գնահատում բարեփոխվել է բովանդակային առումով

- ՄՌԿ բաժնի անվանափոխվում և գործառույթների վերաձևակերպում, պաշտոնների անձնագրերի մշակում

Ընդհանուր առմամբ ՊԻԳԲ շրջափուլը դեռևս բոլոր գործընթացներում փակված չէ և իրականացված գնահատումների բավարար և ամբողջական վերլուծություններ առկա չեն: ՊԻԳԲ գործառույթները չեն ներառում բուհի զարգացման ծրագրի բոլոր ուղղությունները: Կառավարման գործընթացներում հիմնական շեշտը դրված է պլանավորման և իրականացման վրա:

**2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:**

Գործող մեխանիզմներով մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ բուհում հավաքագրվում է վիճակագրական բնույթի տեղեկատվություն, ուսանողների թվաքանակի, շարժի և առաջադիմության վերաբերյալ, որը քննարկվում է բուհի ԳԽ-ում, ինչպես նաև հաստատված ձևաչափերով տրամադրվում է արտաքին վիճակագրական կառույցներին: Իրականացվում են հարցումներ ուսանողների շրջանում, իրականացվում է ՄԿԾ-ների մշտադիրտարկում ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ: ՄԿԾ-ների վերաբերյալ վերլուծություններ (ուսումնական և գիտական գործունեության վերաբերյալ, ֆինանսական և այլն) իրականացվում և ներկայացվում են տարեկան հաշվետվություններում: Այնուամենայնիվ, հավաքագրված տեղեկատվությունը ամբողջապես չի արտացոլում մասնագիտական կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության ամբողջական որակական նկարագիրը:

ՎՊՀ-ում իրականացվող այլ գործընթացների տեսակետից /կառավարում, ռեսուրսներ/ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող ընթացակարգերը համակարգված բնույթ չեն կրում: Վերջիններիս համար դեռևս առկա չեն մեխանիզմներ:

**2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:**

Շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական գնահատման համար կիրառվում է բուհում գործող հաշվետվությունների թափանցիկ համակարգը և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, որոնք, սակայն, վերլուծված չեն:

Ըստ հաստատության ներկայացրած ինքնավերլուծության ՎՊՀ շրջանավարտները կազմում են Լոռվա տարածաշրջանի դպրոցների ուսուցիչների 70%-ը, որոնք բարձր վարկանիշ ունեցող մասնագետներ և կրթական գործի կազմակերպիչներ են: ՄՈՒՀ-ի շրջանավարտների թիվը մեծ է նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մեջ (134 անդամ), որոնցից գիտական աստիճան և կոչում ունեն 77-ը:

ՎՊՀ-ում առկա են տեղեկատվության տարածման քաղաքականություն և ընթացակարգեր: Որակի ապահովման վերաբերյալ հետազոտությունների, մշտադիտարկման և աուդիտի արդյունքները տեղադրվում են ներքին ցանցում, վեբ-կայքում, երբեմն սոցիալական ցանցերում: Գործատուների կարծիքի համակարգված և բավարար վերլուծություն առկա չէ: Համաձայն ինքնավերլուծության, համալսարանի կայքում տեղադրվող նյութերը արտաքին շահակիցների կողմից բավարար ուշադրության չեն արժանանում: Հաշվետվությունների մասին հրապարակումները առկա են, սակայն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող հստակ և օբյեկտիվ մեխանիզմներ մշակված չեն:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ վերջին հինգ տարիների ընթացքում կատարվել են կառավարման համակարգի որոշակի բարելավումներ, որոնք միտված են եղել կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ կատարված փոփոխությունները իրենց նպատակին չեն ծառայել. չի կատարվել կառավարման համակարգի արդյունավետության գնահատում, չեն բացահայտվել կառավարման տարբեր մակարդակներում առկա մարդկային և ֆինանսական ռեսուրսների վերլուծություն ու առկա խնդիրների ուսումնասիրություն և հետագա պլանավորում, որոնք խոչընդոտում են բուհի հետագա զարգացմանը:

Բուհի կազմակերպական կառուցվածքը հետագա բարեփոխումների կարիք ունի: ՎՊՀ կազմակերպական կառուվցածքի բարելավումը կարող է նպաստել ստորաբաժանումների գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Նկատվել է կառավարչական ռեսուրսների՝ մասնավորապես ֆակուլտետների և ամբիոնների ոչ արդյունաավետ տեղաբաշխում, որը կրթական ծրագրերի արդյունավետ կառավարման համար կարող է խորչընդոտ հանդիսանալ: Հաստատությունում առկա չէ գիտության գծով ստորաբաժանում, ինչը կարևոր դեր կարող է կատարել կրթության և գիտության

ինգեգրման գործընթացում և նպաստել բուհում առկա գիտական ներուժի արդյունավետ կառավարմանը, ինչպես նաև բուհի միջազգայնացման ակտիվացմանը:

ՎՊՀ-ի պաշտոնական հիմնադրամի վերափոխվելը ընդլայնում է կառավարման համակարգի հնարավորությունները: Համալսարանը՝ որպես հիմնադրամ, պոտենցիալ հնարավորություններ է ստացել բարելավելու իր ֆինանսատնտեսական քաղաքականությունը, սակայն այդ հնարավորությունները դեռևս արդյունավետությամբ չեն օգտագործվում: Ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը կարող է խոչընդոտել բուհի կառավարման համակարգի արդյունավետությանը:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակված էթիկայի կանոնագիրքը առաջընթաց քայլ է բուհի կառավարման համակարգում էթիկայի համակարգված նորմեր սերմանելու ճանապարհին: Սակայն էթիկական կառավարման սկզբունքների որդեգրումը կարող է նպաստել փաստարկված, համակրգված որոշումների միջոցով կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

ՎՊՀ-ում որոշումների կայացման կառույցներում գործատուների և այլ արտաքին շահակիցների պաշտոնական թույլ ներգրավվածությունը և հետադարձ կապի անարդյունավետությունը կարող է սահմանափակել արտաքին պահանջների և զարգացումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Դրա օրինակ կարող է ծառայել բուհի գիտխորհրդում արտաքին շահակցիների բացակայությունը: Արտաքին միջավայրի վերլուծության ոչ բավարար լինելը կհանգեցնի բուհի ռազմավարական զարգացման հետագա ռիսկերի: Դասախոսների և, հատկապես, ուսանողների թույլ նախաձեռնողականությունը և ակտիվությունը բուհի որոշումներ կայացնելու գործընթացում իր հերթին նվազեցնում է նրանց կողմից խնդիրների վերհանմանն ու լուծմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ բուհում առաջիկա հինգ տարիների համար առկա չէ երակարաժամկետ պլանավորում: Երկարաժամկետ պլանավորման բացակայությունը բուհի համար ռիսկային է, բուհի ստորին օղակները իրականացնում են իրավիճակային կառավարում տարեկան կարճաժամկետ պլանավորմամբ՝ առանց ռազմավարական առաջնահերթությունների սահմանման: Այս դրությունը խոչընդոտում է բուհի համաչափ զարգացմանը:

Գնահատման առանցքային ցուցանիշների համակարգը կարող է նպաստել ՎՊՀ կառավարման հնարավորությունների ընդլայնմանը, այդուհանդերձ, այդ ցուցանիշները դեռևս բարելավման կարիք ունեն: Որակական և քանակական գնահատման առանցքային հստակ ցուցիչները հնարավորություն կտան բուհում առկա խնդիրների վերհանմանը, առաջընթացի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրականորեն ընդգծում է բուհում իրականացված մի շարք հարցումները, որոնց միջոցով վեր են հանվել որոշակի խնդիրներ: Սակայն, կատարված հարցումներից բացի, բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության

այլ հավաստի մեթոդների և գիտական վերլուծությունների բացակայությունը բավականին նեղացնում է իրավիճակի իրատեսական գնահատման հնարավորությունները: Կարիք կա բարձրացնել կատարվող հարցումների հավաստիության աստիճանը:

Բուհը կարիք ունի բարելավել իր կառավարման համակարգը՝ այն դարձնելով իր ռազմավարությանն ու գործունեությանն ավելի համահունչ, հիմք ընդունելով որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը:

Դրական է այն փաստը, որ հստակ գործող մեխանիզմներով մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ բուհում հավաքագրվում է վիճակագրական բնույթի տեղեկատվություն: Այդուհանդերձ, այս տեղեկատվությունն արդյունավետ կերպով գնահատելու մեխանիզմներ ՄՈՒՀ-ում առկա չեն: Սա կարող է հանգեցնել ՎՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ ոչ ճիշտ որոշումների կայացմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով այն, որ կազմակերպական կառուցվածքը հարմարեցված չէ բուհի ռազմավարական խնդիրների իրականացմանը, առկա է կառավարչական ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդիր, վարչարարությունը բոլոր ոլորտներում չի իրականացվում որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով, առկա չեն կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնող վերլուծություններ, բավարար չէ արտաքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներին, կառավարման համակարգում թույլ են հետադարձ կապի մեխանիզմները փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է անբավարար:

## III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:**

**Փաստեր**

**3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:**

ՎՊՀ 5 ֆակուլտետներում իրականացվում է բակալավրի 30 առկա և հեռակա, մագիստրոսի 13 առկա, հետազոտողի 7 գիտական ուղղություններով 11 հետազոտական կրթական ծրագրեր: Համալսարանի մանկավարժական և ոչ մանկավարժական մասնագիտությունների կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համահունչ են հաստատության առաքելությանը:

ՎՊՀ ՄԿԾ-ները ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության առաքելությանը, այն առումով որ հաստատությունը պատրաստում է հիմնարար գիտելիքներով, գործնական հմտություններով մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ իրականացվել է ՎՊՀ ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանեցում ՀՀ ՈԱՇ-ին. առկա են ՄԿԾ-ների և ՈԱՇ-ի համապատասխանության առանձին աղյուսակներ, որոնք սակայն ներառված չեն եղել ՄԿԾ-երի փաթեթներում:

ՄԿԾ-ների մոդուլները նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող արդյունքների: Վերջին տարիների ընթացքում բուհը համալսարան ձևափոխվելուց հետո, մշակել և ներդրել է բակալավրիական և մագիստրոսական 5 նոր համալսարանական կրթական ծրագիր, որոնք ընդհանուր առմամբ համահունչ են տարածաշրջանի աշխատանքային շուկայի պահանջներին: Այցի ժամանակ պարզ դարձավ, որ մասնագիտությունների գծով դիմորդների թիվը մեծ չէ կամ առհասարակ բացակայում է /բնապահպանություն բնօգտագործում, անձի հոգեբանություն/: Միաժամանակ, բուհը շեշտադրում է կատարում նաև այնպիսի մասնագիտությունների (մանկավարժական) վրա, որոնք ավելի մեծ պահանջարկ ունեն տարածաշրջանի աշխատաշուկայում: Համաձայն մշակված քաղաքականության կատարվել է համապատասխան բենչմարքինգ, որտեղ ներառված են հայաստանյան և արտասահմանյան բուհերը:

ՄՈՒՀ-ի բոլոր մասնագիտությունների գծով առկա են ընդունված ձևաչափին համապատասխան նկարագրված կրթական ծրագրեր, իրենց մասնագրերով և առարկայական նկարագրերով: ՄԿԾ-ները ներառում են վերջնարդյունքները, ուսումնառության մեթոդները ըստ առարկաների, ինչպես նաև գիտական հետազոտություններ իրականացնելու կոմպետենցիաները:

ՄԿԾ-ների փաթեթները և մասնագիտությունների տեղեկագրքերը տեղադրված են ՎՊՀ կայքում: ՄԿԾ-ների իրականացման գործընթացում առկա է ուսանողակենտրոն մոտեցում՝ կամընտրական առարկաների ընտրությամբ:

ՎՊՀ նախկին հավատարմագրման արդունքում բարելավման պլանով նախատեսվել էր բակալավրիական ավարտական աշխատանքներում գիտահետազոտական բաղկացուցիչը դարձնել 50%: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջինս չի իրականացվել: Ըստ հաստատության ներկայացրած ինքնավերլուծության ՎՊՀ-ի բակալավրիատի կրթական ծրագրի ուսումնական պլաններում գիտահետազոտական հատվածին հատկացվում է 15 կրեդիտ՝ ներառյալ կուրսային և ավարտական աշխատանքները:

**3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:**

Դասավանդման և ուսումնառության մեթոդները նկարագրված են ՄԿԾ-ներում: Սակայն առկա չէ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն: Հստակ նախանշված չէ ՎՊՀ-ում դասավանդման և ուսումնառության մեթոդների բարելավման ռազմավարությունը: Փորձագիտական այցի արդյունքում պարզվեց որ դասավանդման գործընթացում կիրառվում են դասավանդման տարբեր նորարական մեթոդներ՝ ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառմամբ /խաղային մեթոդներ, խմբային քննարկումներ/: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքում նկատվել են դասավանդման մեթոդների բարելավումներ, սակայն որոշ դեպքերում առկա են դասախոսությունների թելադրություններ և այլ անարդյունավետ մեթոդներ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների կատարելագործման համար ՄՈՒՀ-ը մասնակցում է PRINTeL ծրագրին և միջազգային ծրագրերում վերապատրաստված դասախոսների կողմից իրականացվել են դասավանդման մեթոդների ուսուցման դասընթացներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությանը վերաբերող ուղեցույց առկա չէ, սակայն այն գտնվում է մշակման փուլում:

Ուսանողակենտրոն ուսուցման միջավայր ստեղծելու կարևորությունը ընդգծվում է ՎՊՀ առաքելության մեջ: Չնայած դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մոտեցման որոշակի տարրեր բուհում իրականացվում են: Մասնավորապես, գործում է ընտրովի առարկաների համակարգ, կիրառվում է ակտիվ ուսուցման մեթոդներ:

Բուհում իրականացվել են նաև ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատման հարցումներ, որոնց արդյունքների վերլուծության ժամանակ նախանշվել են ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող ուսումնառության մեթոդների ընտրության որոշ ուղենիշներ, սակայն դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման ընթացակարգերը բացակայում են: Վերհանված խնդիրների փաստացի վերլուծության, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ չեն գործում, այդ գործընթացների հուսալիությունը ապահովված չէ:

Դասընթացների վերաբերյալ հայերեն լեզվով մասնագիտական մեթոդական համապատասխան մակարդակով շարադրված դասագրքերի, ձեռնարկների, մեթոդական ցուցումների, գործնական և սեմինար առաջադրանքների պակաս է դիտվել:

**3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:**

ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Համալսարանում գործում է «Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ»: 2015թ. ընդունվել է ակադեմիական ազնվության կարգ: ՄԿԾ-ների մշտադիտարկման արդյունքում իրականացվել է գնահատման համակարգի մոնիթորինգ, սակայն մոնիթորինգի արդյունքում փոփոխություններ չեն իրականացվել: Մշակվել և կիրառվում է ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման կարգ: Առկա են նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման չափանիշներ: ՄԿԾ-ների ակադեմիական նկարագրերում նկարագրված չէ տվյալ դասընթացի վերջնարդյունքների և գնահատման ձևերի միջև կապը:

Բուհը մշակել է ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված քաղաքականություն, սակայն չունի բավարար փորձ դրա իրականացման բնագավառում: Բացի բողոքարկման կարգից, Ակադեմիական ազնվության կարգից, բուհում մշակված չեն և չեն գործում ակադեմիական ազնվության ապահովման այլ արդյունավետ մեխանիզմներ: ՄՈՒՀ-ի ավարտական աշխատանքները ամբողջությամբ չեն ենթարկվում գրագողության ստուգման: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների ավարտական աշխատանքների թեմաները հիմնականում արտացոլում և անդրադառնում էին տարածաշրջանում առկա խնդիրներին:

**3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:**

ՎՊՀ-ում առկա է բենչմարքինիգի միասնական քաղաքականություն: ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ների շրջանակներում իրականացնում է բենչմարքինգ (Կառավարում, Ինֆորմատիկա, Կենսաբանություն): Բենչմարքինգի արդյունքում տեղայնացվել է նախ և առաջ ՀՀ առաջավոր բուհերի փորձը՝ մասնավորապես ՀԱՊՀ, ՀՊՏՀ, ԵՊՀ: Առկա է նաև արտասահմանյան բուհերի փորձի կիրառման օրինակներ: Միջազգային փորձի բավարար ուսումնասիրություն ծրագրերի շրջանակներում առկա չէ:

ՎՊՀ-ում մշակվել և կիրառվում է Ակադեմիական շարժունության կրեդիտների ընդունման կանոնակարգը: Ուսանողների շարժունություն և ուսանողների ու դասավանդողների շարժունությանը և միջազգայնացմանը նպաստելու նպատակով իրականացվում են տարբեր ծրագրերի շրջանակներում: Սկսած 2012թ– ից Համալսարանը՝ որպես գործընկեր երկրի ներկայացուցիչ, ներգրավված է Եվրամիության Erasmus Mundus և Erasmus+ շարժունության դրամաշնորհային ծրագրերում, որոնց շրջանակներում եվրոպական տարբեր բուհերում 1-2 կիսամյակ սովորելու հնարավորություն են ստացել ՎՊՀ շուրջ 70

ուսանողներ: Նկարագրված է միայն ուսանողների շարժունությունը, առկա չեն ՄԿԾ-ների համահունչության վերաբերյալ այլ վերլուծություններ: Բուհում միջազգային շարժունությունը իրականացվել է միայն դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

Ընդհանուր առմամբ, ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան բուհերի ծրագրերի հետ բովանդակային համահունչություն առկա չէ: Չնայած այն բանին, որ ամբիոններում նշվում էին այլ ՄԿԾ-ների ընդօրինակման առանձին դեպքեր առկա են, սակայն այդ առումով չկան նաև տեղայնացման հնարավորությունները արտահայտող վերլուծություններ:

**3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:**

ՎՊՀ-ում հաստատվել է ՄԿԾ-ների մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման որոշակի քաղաքականություն, որի նպատակը ՄԿԾ-ների բարելավման միջոցով՝ աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումն է, որը սակայն բուհում դեռ լիարժեքորեն ներդրված չէ: 2017-ին ընդունվել է <<Կրթական ծրագրերի մշտադիկարկման>> ընթացակարգ: Մշակվել և փորձարկվել են ՄԿԾ-ի մոնիթորինգի իրականացման ձևաթղթեր, որի հիմքում դրված է հետազոտության տրամաբանական շղթայի/ալգորիթմի մեխանիզմներ. տվյալների մուտքագրում/ պրոբլեմային իրավիճակի նկարագրություն, հետազոտության հիմնական քայլերի մշակում և իրականացում, ստացված արդյունքներ/ վերլուծություն և եզրակացություն, վերջնարդյունքներ/ համապատասխանությունը չափորոշիչներին:

Մշտադիտարկումներ իրականցվում են չորս տարվա ցիկլով՝ բակալավրիատի համար, երկու տարի կտրվածքով՝ մագիստրոսական կրթական ծրագիր համար:

ՄՈՒՀ-ում կիրառվում են ՄԿԾ-րի մշտադիտարկման և աուդիտի գործընթացներ, որոնք կանոնակարգված են: Այցի ընթացքում պարզվեց, որ ՄԿԾ-ների մշտադիտարկումների արդյունքում իրականացվել են որոշակի փոփոխություններ: Օրինակ, "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա" մասնագիտության ծրագրում "Գրաֆների տեսություն" առարկայի համար իրականացվել է գործնական աշխատանքների դասաժամերի նախատեսում, ծրագրավորման լեզվի ուսումնասիրության ժամերի ավելացում, և նախատեսվում է "Գործոյթների հետազոտում" և "Օպտիմիզացիա" առարկաների միավորում: "Կառավարում" կրթական ծրագրում ներառվել է "Բանկային գործ" առարկան: Տվյալ առաջարկները ներկայացվել են ամբիոնի և ֆակուլտետի նիստերում:

Փորձագիտական խումբը փաստում է, որ դիտարկված ՄԿԾ-ների շրջանակում մշտադիտարկման որոշակի քաղաքականություն տարվում է և առկա են որոշ օրինակներ, սակայն այդ քաղաքականությունը առավել արդյունավետ դարձնելու կարիք ունի:

Պարբերաբար ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում ՄԿԾ-ն իրականացնող ՊԴ կազմը և կրթական միջավայրը, վերհանվում են ՊԴ կազմի և ուսանողների կրթական կարիքները: Ուսանողների և ՊԴ կազմի շրջանակներում իրակնացվում են հարցումներ:

ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացներին հիմնականում մասնակցում են ՎՊՀ ներքին շահակիցները: Չնայած կանոնակարգը նախատեսում է արտաքին շահակիցների մասնակցությունը մշտադիտարկմնան գործընթացին, սակայն իրականում մշտադիտարկման գործընթացում արտաքին շահակիցների պասիվություն է արձանագրվել: Բացի դրանից համաձայն գործող կարգի մշտադիտարկման խմբերում արտաքին շահակից ներառված չէ: Ավարտական ատեստավորման հանձնաժողովների եզրակացությունները ներքին գնահատման չեն ենթարկվում և չեն վերլուծվում: Համալսարանում ՄԿԾ-ների մշտադիտարկման կարևոր մեխանիզմներից են հարցումները (մասնավորապես շրջանավարտների շրջանում): Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ նաև, որ ՄԿԾ-ների իրականացման արդյունավետության գնահատման նպատակով բացի հարցումներից, չեն կատարվում նաև առարկաների գնահատման վիճակագրական վերլուծություններ:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ վերջին հինգ տարիների ընթացքում բուհում գործող բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերը բարելավվել են բուհի Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված ներքին աուդիտի արդյունքում:
Իրականացված ներքին աուդիտը հնարավորություն է տվել բովանդակային փոփոխություններ իրականացնել՝ ծրագրերը համապատասխանեցնելով բուհի առաքելությանը և աշխատաշուկայի պահանջներին, որը նպաստում է շրջանավարտների զբաղվածությանը: Միևնույն ժամանակ փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ՎՊՀ-ում առկա են մասնագիտություններ /օրինակ՝ քիմիա/, որոնք պահանջված չեն աշխատաշուկայում, այդպիսով իսկ չեն ապահովում համապատասխան թվով դիմորդներ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ այս պարագայում բուհը շեշտադրում է կատարում նաև այնպիսի մասնագիտությունների (մանկավարժական) վրա, որոնք որոշակի պահանջարկ ունեն աշխատաշուկայում:
Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասավանդման բազմաբնույթ մեթոդների ներառումը և նկարագրությունները կրթական ծրագրերում, դասընթացների նկարագրերում և թեմատիկ օպերատիվ պլաններում, սակայն խնդրահարույց է այն փաստը, որ որոշ դեպքերում մեթոդի ընտրությունը պայմանավորված չէ վերջնարդյունքով և համապատասխան կարիքների վերհանմամբ: Ուսանողների որոշակի անբավարարվածությունը դասավանդման մեթոդներից, ոչ արդյունավետ դասախոսությունները կարող է խոչընդոտել ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև նախատեսված վերջնարդյուքների ձեռքբերմանը:
Դրական փաստ է, որ բուհում գործում է ակադեմիական ազնվության կարգ, ինչպես նաև կիրառվում է գնահատման արդյունքների բողոքարկման կարգ: Միևնույն ժամանակ փորձագիտական խմբի վերլուծությունների արդյունքնում պարզ դարձավ, որ գնահատման

համակարգը փոխկապակցված չէ ուսումնառության արդյունքների հետ այն առումով նաև, որ ուսումնառության արդյունքներում ներառված հմտությունների գնահատումը հստակ ընդգծված չէ գործող համակարգում, որը կարող է հանգեցնել գնահատման համակարգի ոչ արդյունավետ կիրառմանը և ուսանողների մոտ հրակտիկ հմտությունների ձեռքբերմանը:
Հեռակա կրթական համակարգում կրթական ծրագրերի իրականացումը կապված է մի շարք խնդիրների հետ, մասնավորապես՝ շեշտվել է դասաժամերի ոչ բավարար լինելը, որը հանգեցնում է հեռակա համակարգում կրթական ծրագրերի իրականացման անարդյունավետությանը:
Մշակված է ծրագրերի մշտադիտարկման, գնահատման և պարբերաբար վերանայման մեխանիզմներ և ընթացակարգեր: Հատկանշական է, որ բուհն ունի այդպիսի ընթացակարգերի մշակման ուղենիշներ: ՄԿԾ-ների իրականացվող աուդիտը հնարավորություններ է ստեղծում ՄԿԾ-ների շարունակական բարելավմանը: Բոլոր ամբիոններում դեռևս հստակորեն նախանշված և համակարգված չեն ՄԿԾ-ների հետ կապված վերհանված խնդիրների լուծման ռազմավարությունները: Սա կվտանգի շուկայի պահանջներին համապատասխան ծրագրերի և դասընթացների արդիականացումը, դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների ներառումը: ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացներում հիմնականում ակտիվություն ցուցաբերում են ներքին շահակիցները:
Ողջունելի է, որ արձանագրվել են մասնագիտության կրթական ծրագրերի առանձին բարելավումներ՝ հիմնված բենչմարքինգի վրա, սակայն բովանդակային բենչմարքինգի իրականացումը և դրա արդյունքնում կատարված փոփոխությունները բացակայում են, որը խոչընդոտում է ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով այն, որ բուհի բոլոր մասնագիտությունների համար մշակված են ընդունված ձևաչափին համապատասխան նկարագրված կրթական ծրագրեր, իրենց մասնագրերով և առարկայական նկարագրերով՝ հինված արտաքին դրական փորձի ուսումնասիրության վրա, բուհը գիտակցում է դասավանդման մեթոդների կատարելագործման խնդիրները և քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ, բուհում գործում է կանոնակարգված գնահատման գործընթաց, ինչպես նաև որոշակի առաջխաղացում է նկատվել ակադեմիական ազվություն ապահովելու ուղղությամբ, իրականացվում է կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման հստակ քաղաքականություն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:
Միաժամանակ նշում, որ դեռևս առկա չեն ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքներին համապատասխան դասավանդման մեթոդների ընտրության և բարեփոխման հստակ սկզբունքներ և մոտեցումներ, գնահատման համակարգի արդյունավետությունը բավարար վերլուծված չէ, դեռևս բավարար հիմքերի վրա չի դրված ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարը, արտաքին շահակիցների մասնակցությունը կրթական ծրագրերի մշակմանը, դեռևս թույլ է:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է բավարար:

## IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:**

**Փաստեր**

**4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:**

ՄՈՒՀ-ում ուսանողների հավաքագրման մեխանիզմները հստակ են: ՄՈՒՀ-ում ուսանողներ հավաքագրելու նպատակով իրականացնում են մի շարք միջոցառումներ: Ապահովվում է բուհ-դպրոց կապը, բուհում կազմակերպվում են դպրոցական օլիմպիադաններ: <<Ֆակուլտետային օրեր>> միջոցառման ընթացքում աշակերտները ծանոթանում են բուհի պայմաններին, անցկացվում են բաց դասեր, մարզի այլ քաղաքներում կազմակերպվում են տեղեկատվական արշավներ: Դիմորդները տեղեկատվություն են ստանում նաև ՎՊՀ կայքի միջոցով:

Համալսարանի ընդունելությանը նախապատրաստելու նպատակով քննական առարկաներից ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպվում են նախապատրաստական անվճար դասընթացներ: Համալսարանում սովորում են 23 օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողներ Վրաստանի Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Հունաստանից և, Համալսարանի պատմության մեջ 2017թ. առաջին անգամ ունեցել են դիմորդ Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Բակալավրիական և մագիստրոսական ծրագրերի առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների ընդունելությունն իրականացվում է համաձայն կառավարության և նախարարության որոշումների, կանոնակարգերի և ընթացակարգերի միջոցով:

ՎՊՀ-ում վերականգնված ուսանողների տոկոսը համեմատական կարգով ավելի բարձր է հեռակայում քան առկայում, որը նկատվել է նաև նախորդ հավատարմագրման ժամանակ: Ղեկավարության կարծիքով պատճառը հեռակա համակարգում ուսման վարձերի մատչելիությունն է,հեռակա համակարգում աշխատելու հնարավորությունը,գյուղերից և այլ մարզերից եկած ուսանողների ծախսերի կրճատումը: Նաև բուհն իր ինքնավերլուծության մեջ նշում է մի քանի այլ պատճառներ օրինակ՝ ՀՀ-ում դիմորդների թվի նվազում, մայրաքաղաքում գտնվող բուհերի գրավչությունը,տարածաշրջանում գտնվող ոչ պետական ՄՈՒՀ-երի վարձերի մատչելիությունը: Այցից պարզ դարձավ, որ հեռակա համակարգ են ընդունվում քոլեջներում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները:

ՄՈՒՀ-ը ստեղծել է մեխանիզմներ ուսանողների հավաքագրման նպատակով, սակայն դեռևս չի իրականացրել այդ մեխանիզմների արդյունավետության գնահատում:

**4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:**

ԲՈՒՀ-ում կիրառվում են ուսանողների կրթական կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ: Ուսանողները ներգրավված են ՎՊՀ-ի կառավարման մարմիններում՝ 25 տոկոս մասնակցությամբ. հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ: Ուսանողները հնարավորություն ունեն բարձրաձայնելու և լուծումներ առաջարկելու կրթական միջավայրի բարելավման նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեպետ ուսանողները ներգրավված են կառավարման մարմիններում, սակայն ուսանողներն ակտիվություն չեն դրսևորում:

Բուհում կիրառվում է SWOT վերլուծության մեթոդաբանություն, որով իրականացվել է ուսանողների կարիքներին վերաբերվող վերլուծություն: Համաձայն ինքնավերլուծության իրականացվել են աշխատանքներ. ֆոկուս խմբերի, սոցիալական հարցումների միջոցով: Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ՎՊՀ ռեկտորի, դեկանների հետ ուսանողների մասնակցությամբ, որտեղ ուսանողները բարձրացնում են իրենց հուզող հարցերը:

ՎՊՀ կրթական կարիքները վերհանելու նպատակով ՈԱԿ-ի կողմից պարբերաբար անցկացվում է <<Դասախոսը ուսանողի աչքերով>> հարցումը, որին մասնակցում են բուհի ուսանողները: Համալսարանի նոր կայքն ունի «on-line խորհրդատու» էջը, որը ուսանողների համար ընձեռում է անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու հնարավորություն, ուղղորդում է կրթական գործընթացի հետ առնչվող իրենց կարիքները ներկայացնելու, Համալսարանի ցանկացած աշխատակցի դիմելու հարցում: Ուսանողների ձայնը լսելի դարձնելու հարցում մեծ դեր ունի ՎՊՀ ֆեյսբուքյան էջը, որով բացի վերոնշյալ գործընթացներից:

**4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:**

2016թ. մշակվել և ընդունվել է ՎՊՀ ակադեմիական խորհրդատուների գործունեության կանոնակարգ: Գործում են նաև. «Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման», «Կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության», «Ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման» կարգերը, որոնք նպաստում են լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու գործունեությանը:

Խորհրդատվական ծառայությունների մասին տեղեկացված է ուսանողների *82%*-ը, որը աճ է արձանագրում նախորդ հավատարմագրումից հետո: Ռեկտորի թիվ N 203Լ/ՈՒ (24 մարտի 2016թ.) հրամանով կարգավորվում է չառաջադիմող ուսանողների հետ աշխատանքի կազմակերպման ժամանակացույցերի ներկայացման/հաստատման ժամկետները: Խորհրդատվական ծառայություններ են իրականացնում հոգեբանական և իրավաբանական ուսանողական խորհրդատվական կենտրոնները:

Համալսարանում «Փիլիսոփայության և քաղաքագիտության» ամբիոնին կից գործում է Իրավաբանական խորհրդատվական կենտրոն, որի նպատակն է իրավագետ-ուսանողների և դասախոսների ջանքերով պաշտպանել այլ ուսանողների ու դասախոսների իրավունքներն ու օրինական շահերը: Բուհում իրականացվում է օտար լեզվի (մասնավորապես՝ անգլերենի) լրացուցիչ պարապմունքներ, որոնք ինչպես այցից պարզ դարձավ իրականացվում են վճարովի հիմունքներով (եռամսյա դասընթացների համար ուսանողները վճարում են 12.000 դրամ գումար): ՎՊՀ-ում առկա չեն մասնագիտական կրթական ծրագրերի փոփոխության դեպքում կազմկերպվող այսպես կոչված ՝բրիջ կուրսեր՞՞, որոնք կնախապատրաստեն ուսանողին տվյալ կրթական ծրագրի Բուհի մի քանի կանոնակարգերում նեռարված են լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ դրույթներ («Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման», «ՎՊՀ-ում ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման», «Դասընթացի կոմպետենցիաների անձնագրի մշակման մեթոդական ուղեցույց», «ՎՊՀ խորհրդատուների կողմից կատարվող աշխատանքների ուղեցույց» (վերանայված տարբերակ), «Հետազոտական աշխատանքների կատարման հուշաթերթ»):

**4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:**

ՄՈՒՀ-ում ուսանողների համար վարչական աշխատակազմին դիմելու առանձին հստակ կանոնակարգ և ժամանակացույց մշակված չէ: Սակայն ուսանողները առաջացած խնդիրների կամ հարցերի դեպքում կարող են ազատ դիմել դեկանատ և ստանալ օժանդակություն: Ուսանողների, ծնողների ընդունելության համար ռեկտորը և պրոռեկտորները ունեն սահմանված ժամեր: ՎՊՀ ուսանողների 70%-ը տեղյակ է վարչական ծառայությունների մասին, որը աճ է արձանագրում նախորդ հավատարմագրումից հետո:

Ուսանողներն ընդգրված են ՄՈՒՀ-ի հոգաբարձուների խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետային խորհուրդներում, տարբեր հանձնաժողովներում և հնարավորություն ունեն բարձրաձայնելու իրենց հուզող հարցերը, հանդես գալու ՄՈՒՀ-ի գործունեության բարելավմանը միտված առաջարկություններով:

ՎՊՀ-ն ունի «Ակադեմիական խորհրդատուների գործունեության կանոնակարգը», որը որոշակի փոփոխություններով վերահաստատվել է 30.06.2016թ.-ին: ՎՊՀ-ն իրականացնում է խորհդատվական/աջակցային գործընթացներ, որոնք նպաստում են ուսանողի առարկայական գիտելիքների բարելավմանը, իրավաբանական ձայնի պաշտպանությանը, և տարբեր հոգեբանական գործոնների բարելավմանը: Լրացուցիչ խորհդատվական ծառայությունների մեջ ընդգրկված ուսանողների (18%) մեծամասնությունը (15%) բավարարված է ծառայություններից: Ռեկտորը պարբերաբար կազմակերպում է արտադրական խորհրդակցություններ ուսխորհրդի,՝ ուսանողների, ավագների մասնակցությամբ /առանց դասախոսական կազմի և խորհրդատուների/:

Յուրաքանչյուր առաջին կուրսի ուսանողի տրվում է <<Ուսանողի ուղեցույց>>, որտեղ ոչ միայն նկարագրված է բուհը, կրթական համակարգը, այլ նաև տրամադրվում են ստորաբաժանումների հեռախոսահամարները և վարչակազմի էլեկտրոնային փոստի հասցեները: Բարձր կուրսերի ուսանողներին նշված ուղեցույցը տրամադրվում է www.OneLoveDrive.com համակարգով: Սակայն այցի արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողների շրջանում <<Ուսանողի ուղեցույց>>-ի մասին տեղեկացվածության մակարդակը բարձր չէ:

**4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:**

Կարիերայի աջակցման ծառայությունների մասին տեղեկատվություն ՎՊՀ ուսանողները ստանում են բուհ ընդունվելուն պես՝ «Ուսանողի ուղեցույց» ձեռնարկի, կազմակերպվող հանդիպումների միջոցով: Ակադեմիական տարվա ընթացքում երկու անգամ իրականացվում են պլանային սեմինար – վերապատրաստումներ բոլոր այն ուսանողների համար, ովքեր ցանկություն ունեն ձեռք բերել պրակտիկ հմտություններ ռեզյումեների, մոտիվացիոն նամակների կազմման, հարցազրույցների մասնակցության և աշխատանքի որոնման բնագավառում: Սեմինար վերապատրաստումներից բացի իրականացվում են նաև անհատական խորհրդատվական ծառայություններ:
ՎՊՀ-ի շրջանավարտների և կարիերայի աջակցման կենտրոնը ըստ վերջինիս կանոնակարգի /2015 թվականին հաստատված/ հանդիսանում է համալսարանի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում: Կենտրոնը նախատեսված է իրականացնելու հետազոտություններ՝ շրջանավարտների, բուհ-գործատու կապի արդյունավետության վերաբերյալ:
Փորձագիտական աշխատանքների ընթացքում պարզ դարձավ, որ որպես առանձին կառուցվածքային միավոր՝ Շրջանավարտների և կարիերայի աջակցման կենտրոն ՎՊՀ-ում առկա չէ: Առկա է շրջանավարտների և կարիերայի աջակցման պատասխանատու, ինչպես նաև աշխատանքներում ներգրավված 10 կամավոր, որը ՎՊՀ կազմակերպական կառուցվածքում գտնվում է Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնում: Կամավորները մասնակցել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի ավագ դպրոցներում: Իրականացվել են շրջանավարտների բազայի և կադրային ռեզերվի համալրման աշխատանքներ, ընդունվել և դասակարգվել են ՎՊՀ , նաև այլ բուհերի շրջանավարտների ռեզյումեները:
«Վանաձորի զբաղվածության կենտրոնի» հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառումը: ՎՊՀ-ն աշխատանքներ է կատարում գործատուների հետ, ուսանողների պրակտիկայի և հետագայում նաև աշխատանքի տեղավորման հարցում: Բուհ-ն ունի հուշագիր ստորագրած ՎՏԲ բանկի հետ, որի շնորհիվ իրականացվում է բուհում ամեն տարի մեկ ուսանողի ուսման վարձը ամբողջությամբ փոխհատուցում: Հուշագիր ունի ստորագրած նաև ՎԻՎԱ-ՍԵԼ ՄՏՍ ընկերության հետ, որը նույնպես կատարում է մի շարք ուսանողների ուսման վարձերի ամբողջական փոխհատուցում: Սակայն այս ամենին զուգահեռ ուսանողների միայն 12% է տեղեկացված կարիերային նպաստող ծառայություններից: ԲՈՒՀ-ի խոսքով դա պայմանավորված է

նրանով, որ հիմնականում կարիերայի կենտրոնից օգտվում են բուհի բարձր կուրսի ուսանողները:

**4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:**

ՎՊՀ-ում առկա է Ուսանողական գիտական ընկերություն, որը գործում է ըստ «Ուսանողական գիտական ընկերության կանոնադրության»: Համալսարանում գործում են գիտական կաբինետ, մասնագիտական կաբինետներ, գիտահետազոտական համալիր լաբորատորիա: Վերջինս բնագիտական մասնագիտությունների ուսանողներին հնարավորություն է տալիս կատարել փորձեր նորագույն սարքերի և սարքավորումների միջոցով, ստանալ առավել ճշգրիտ տվյալներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողական գիտական ընկերությունն գիտական աշխատանքներ նախաձեռնելու և իրականացնելու գործընթացներում ակտիվություն չի դրսևորում:

ՎՊՀ-ն ուսանողին տրամադրում է համապատասխան միջավայր հրապարակումներ կատարելու համար. <<Մագիստրոս>> ամսագիրը: Ուսանողները հրապարակումները կատարում են անվճար հիմունքներով: Հրատարակվում են ուսանողական գիտական հոդվածների ժողովածուներ այլ բուհերի հետ համագործակցության արդյունքում: Կազմակերպվում են հայագիտական ամառային գիտարշավներ: Այդուհանդերձ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՎՊՀ հետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը մեծ չէ՝ հատկապես բակալավրիատում: 2018 թվականին ընդհանուր առմամբ տպագրվել է 110 հոդված, որոնցից 47-ը տպագրվել են ՎՊՀ-ի ՈՒԳԸ-ի 7-րդ գիտաժողովի հրապատարակումներում, 15-ը ՎՊՀ-ի գիտական տեղեկագրում՝ համահեղինակությամբ, 7-ը՝ Արցախի պետական համալսարանի «Գիտական ընթերցումներ»-ում, 1-ը՝ էլեկտրոնային գիտական ամսագրում, 39-ը՝ «Մագիստրոս» հոդվածների ժողովածուում: Շատ քիչ թվով աշխատանքներ տպագրվել են արտասահմանյան ամսագրերում /1-ը՝ Վոլգոգրադում/:

**4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:**

Համալսարանում ուսանողների իրավունքները ամրագրված են մի քանի փաստաթղթերում. ՎՊՀ կանոնադրությունում, ուսանողի հետ կնքվող պայմանագրում, Ուսանողական խորհրդի կանոնադրությունում, ներքին կարգապահական կանոններում, «Ուսանողի ուղեցույց», կրթական գործընթացը կանոնակարգող փաստաթղթերում ըստ նպատակայնության:

Ուսանողների իրավունքների պաշպանության հիմնական մարմինը ՎՊՀ Ուսանողական խորհուրդն է, որի աշխատանքների համար համալսարանը հատկացնում է ֆինասական օժանդակություն: Համալսարանի Ուսանողական խորհուրդն ունի ֆեյսբուքյան էջ և բլոգ: Ուսանողական խորհուրդն ակտիվորեն մասնակցում է «Լավագույն կուրս», «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության կազմակերպչական աշխատանքներին՝ գնահատելով ուսանողների կատարած հասարակական աշխատանքները, ակտիվ մասնակցությունը ներբուհական կյանքին, ուսանողական ինքնակառավարման աշխատանքներին: Ուսանողական խորհուրդը ունի նաև հեռակա բաժնում սովորող ուսանողների համար

առանձին պատասխանատու: Ուսանողական խորհուրդը խնդիրները բարձրացնում է երկու եղանակով՝ անանուն հարցումների իրականացման միջոցով և ուսանողների հետ հանդիպումների միջոցով: Սակայն, ՎՊՀ ուսանողների խնդիրների բացահայտման նպատակով, ՈՒԽ-ի կողմից կազմեկրպվող հանդիպումների հստակ ժամանակացույց տարեկան կտրվածքով առկա չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՎՊՀ ուսանողները առաջացած խնդիրների դեպքում սովորաբար դիմում են դեկաններին, պրոռեկտորներին, տարբեր դեպքերում նաև դասախոսներին:

**4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:**

Համալսարանում ուսանողների, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատումը հիմնականում իրականացվում է հարցումների, ֆոկուս խմբերի միջոցով, որոնք հիմնականում կազմակերպում է որակի ապահովման կենտրոնը, երբեմն ուսումնամեթոդական վարչությունը, ուսխորհուրդ: Հարցումները կանոնակարգված են («Վանաձորի պետական համալսարանում «Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման» կանոնակարգ) և կրում են պարբերական բնույթ: Հարցումը ՎՊՀ ուսանողների շրջանում կատարվում է տարին երկու անգամ, որի արդյունքում իրականացվում են վերլուծություններ: Ըստ վերոնշյալ հարցման 2018 թվականի արդյունքների վերլուծության ուսանողները հիմնականում բավարարված են մատուցվող ծառայություններից: Ուսանողների դժգոհությունները հիմնականում վերաբերել են պրակտիկաներին, մասնագիտական գրականության պակասին: ՎՊՀ-ն այս խնդիրները հաշվի առնելով նախատեսում է որոշակի քայլեր ձեռնարկել պրակտիկաների ավելացման և գրադարանի համալրման ուղղություններով:

Համալսարանը սկսել է կիրառել էլեկտրոնային հարցման համակարգը, որը ժամանակի կառավարման և արդյունքների վերլուծման տեսանկյունից բավականին արդյունավետ գործիք է:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՎՊՀ-ում գործում է ուսանողների համաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ, որոնք նպաստում են ընդունելության թափանցիկ և արդյունավետ իրականացմանը, ընդունելության պահանջների մասին տեղեկատվության հասանելիությանը: Բուհում գործում է ուսանողների կարիքների վերհանման քաղաքականություն, անցկացվում են հարցումներ, որոնց մասնակցում են նաև հեռակա համակարգում սովորող ուսանողները: Այդ հարցումները նպաստում են ուսանողների խնդիրների վերհանմանը և լուծմանը: Ուսանողները ներգրավված են կառավարման մարմիններում: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՎՊՀ-ի մի քանի կանոնակարգերում ներառված են լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ դրույթներ: ՎՊՀ-ում ուսանողների համար վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց մշակված չէ: Այդուհանդերձ, ուսանողները խնդիրների դեպքում ցանկացած ժամի դիմում են դեկանատներ և դեկաններին, ինչը նպաստում է ուսանողների խնդիրներին արագ և օպերատիվ արձագանքմանը: ՎՊՀ-ն ուսանողներին տրամադրում է <<Ուսանողի ուղեցույց>>, ինչպես նաև հրապարակում է բուհի կայք էջում, ինչը նպաստում է

ուսանողների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածությանը: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ոչ բոլորի ուսանողներ են ծանոթ ուղեցույցի բովանդակությանը, ինչի ուղղությամբ բուհը կարող էր քայլեր և աշխատանքներ իրականացնել:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ թեև ՎՊՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող որոշակի ծառայություններ, սակայն ՎՊՀ-ում կարիերայի կենտրոն որպես այդպիսին չկա, առկա է միայն մեկ պատասխանատու և 10 կամավոր ուսանող: Սա կարող է խոչընդոտել ուսանողների կարիերայի ծառայությունների համակարգված իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՎՊՀ-ն խրախուսում է գիտական հոդվածների հրապարակումը, ունի ուսանողների համար ամսագիր, որտեղ տարին մեկ անգամ ուսանողները հրապարակումներ են ունենում, ինչը նպաստում է ուսանողների շրջանում հետազոտության և ուսումնառության միջև կապի ստեղծման, ինչպես նաև ուսանողների հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը: ՎՊՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին՝ Ուսանողական խորհուրդը, որը նպաստում է կարող է նպաստել ուսանողների կարիքների համակարգված վերհանմանը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ ոչ բոլոր ուսանողներն են տեղյակ ՈՒԽ-ի մասին և խնդիրների դեպքում չեն դիմում ուսանողական խորհրդին: Սա կարող է խոչընդոտել ուսանողերի կրթական կարիքների վեր հանմանն ու հետագա լուծմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՎՊՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ: Որակի ապահովման կենտրոնի կողմից անցկացվում են հարցումներ, կատարում են հարցումների վերլուծություններ, ինչը նպաստում է ուսանողների խնդիրների լուծմանն ու կարիքների բավարարմանը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով ուսանողների հավաքագրման առկա մեխանիզմների, կրթական կարիքների ուսումնասիրության կառուցակարգերի, լրացուցիչ պարապմունքների և կարիերային նպաստող ծառայությունների, ուսանողների գիտահետազոտական աշխատանքներում ընգրկելու մեխանիզմների և ուսանողական գիտական ընկերության, ուսանողական խորհրդի առկայությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն համապատասխանում է Չափանիշ 4-ի պահանջներին: Միաշամանակ նշելով, որ անհրաժեշտ է բարձրացնել ուսանողների նախաձեռնողականության մակարդակը, ուսանողներին մատուցվող ծառայությունների որակը:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՀՀ ՊԿԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

## V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:**

**Փաստեր**

**5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:**

Որակյալ պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) ձևավորումը, համալրումը և սերնդափոխության իրականացումը ՎՊՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացման մասն է կազմում: Նախորդ հավատարմագրման արդյունքում ձևավորված բարելավման գործողությունների պլանով՝ կատարվել է կադրային ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցում արդի պահանջներին: Ստեղծվել է մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) բաժինը և մշակվել է «ՎՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը» փաստաթուղթը, ինչպես նաև կազմակերպվել է մենթորների ինստիտուտ, որը նպաստում է աշխատանքային միջավայրում նոր աշխատողների ադապտացմանը: Առկա են նաև ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու կանոնակարգեր, պաշտոնի անձնագրեր:

Այցից պարզ դարձավ, որ համալսարանը ձևավորում և համալրում է իր պրոֆեսորադասախոսական անձնակազմը մրցութային հիմունքներով՝ համաձայն իրականացվող կրթական ծրագրերի և ՄՌԿ բաժնի կողմից մշակված պաշտոնների անձնագրերի պահանջների. համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների և դրույթների, ՎՊՀ ներքին կարգապահական կանոնների և կոլեկտիվ պայմանագրի դրույթների: Պրոֆեսորադասախոսական կազմի համալրմանը հետևում է ՎՊՀ-ի գիտխորհրդին կից գործող մրցութային հանձնաժողովը: Համալսարանի կրթական ծրագրերի պահանջներից ելնելով, Համալսարանը հրավիրում է դասախոսներ այլ ՄՈՒՀ-երից՝ համապատասխան աշխատանքային պայմանագրեր կնքելու միջոցով: Հաստիքների կրճատման արդյունքում դիտվում է պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային ժամային ծանրաբեռնվածության բարձր մակարդակ: 2018 թվականի տվյալներով ՎՊՀ-ն ունի գիտության 15 դոկտորներ (որոնցինց 1-ն՝ ժամավճարային հիմունքներով) և 123 թեկնածուներ (որոնցինց 6-ը՝ ժամավճարային հիմունքներով), որոնցից՝ 13 պրոֆեսորներ և 114 դոցենտներ:

**5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:**

ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ամրագրված են պաշտոնների անձնագրերում, ինչպես նաև ՎՊՀ-ի դասախոսական կազմի ձևավորմանը և համալրմանը նվիրված կարգերում և այլ փաստաթղթերում. «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման», «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու», «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման» կանոնակարգեր, «ՎՊՀ ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման» կարգ: Սակայն, հստակ չեն սահմանված ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

ՎՊՀ հատուկ մասնագիտական դասընթացներ դասավանդող դասախոսները ունեն գիտական աստիճան կամ գիտական կոչում, ինչպես նաև գործունեության համապատասխան ոլորտում աշխատանքային փորձ: Կամընտրական դասընթացները որպես կանոն ընտրվում են՝ հաշվի առնելով դասախոսի գիտական հետքրքրությունների ուղղվածությանը:

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման օրինականությանը հետևում է ՎՊՀ-ի գիտխորհրդին կից գործող մրցութային (նշանակումների) հանձնաժողովը: Մրցութային հանձնաժողովը և ղեկավարությունը առաջնորդվում են ընտրվող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներով:

**5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:**

Պարբերաբար կազմակերպվում են դասախոսներն ուսանողի աչքերով հարցումներ: ՎՊՀ-ի էթիկայի կանոնագրքում ամրագրված են էթիկայի սկզբունքների և նորմերի այն չափանիշները, որոնք համալսարանն ակնկալում է իր աշխատողներից: Կազմակերպվում են պարբերական դասալսումներ ըստ <<ՎՊՀ-ի ամբիոններում դասալսումների անցկացման եվ քննարկման կազմակերպման>> կարգի /2016թ.-ին հաստատված/: Դասալսումները կատարվում են ինչպես ըստ ամբիոնի նիստում հաստատված ժամանակացույցի, այնպես էլ Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտոր(ներ)ի կողմից սահմանված ժամանակահատվածում: Մշակված չեն հարցումների արդյունքում վերհանված խնդիրների լուծման մեխանիզմներ:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի անհրաժեշտ որակի ապահովման համար կիրառվում են հետադարձ կապի մեխանիզմներ և ընթացակարգեր՝ կրթական ծրագրերի

մշտադիտարկման, պարբերական ուսանողական հարցումների, դասալսումների անցկացման և վերլուծության միջոցով:

«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիալական հարցման հարցաթերթիկները ուղղված են պարզելու լսարանի՝ ուսանողների կարիքները. պարզելու տվյալ դասախոսի ուժեղ և թույլ կողմերը, մղելու նրան սեփական բացթողումները շտկելուն, վերանայելու առարկայի դասավանդման իր մոտեցումները, կիրառելու ավելի արդյունավետ գնահատման միջոցներ և այլն: Սակայն, հստակ մշակված չեն հարցումների արդյունքում վերհանված խնդիրների լուծման մեխանիզմները: Կատարվում են նաև դասալսումներ ինչպես ըստ ամբիոնի ներսում հաստատված ժամանակացույցի, այնպես էլ Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտոր(ներ)ի կողմից սահմանված ժամանակահատվածում: Բացակայում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության գնահատման ռեյթինգային համակարգը:

**5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:**

ՎՊՀ-ում ՊԴ կազմի գնահատումն իրականացվում է համաձայն 2015 թվականին մշակված և 2019 թվականին փոփոխությունների ենթարկված <<Դասախոսը ուսանողի աչքերով>> սոցիոլոգիական հարցման կանոնակարգի համաձայն: Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում, այնուհետև ֆակուլտետի խորհրդի նիստում: Անհրաժեշտության դեպքում քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և խորհուրդներ՝ ուղղված տվյալ դասախոսի դասավանդման որակի բարելավմանը և բացահայտված տարաբնույթ թերությունների շտկմանը: Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստում: Քննարկումից մեկ ամիս հետո ֆակուլտետի խորհրդում ամբիոնի վարիչը ներկայացնում է ցածր միավորներ հավաքած դասախոսների դասավանդման որակի բարելավմանն ուղղված քայլերը, արդյունքները: Ուսանողական հարցման ընդհանուր ամփոփ արդյունքներն օգտագործվում են հավակնորդի՝ պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացում:

ՎՊՀ-ում մշակվել են «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման» կանոնակարգ և ՎՊՀ շարունակական (հարատև) կրթության կենտրոնի 2019-2021թթ. գործունեության ծրագիր, որն ուղղված է աշխատակիցների որակավորման բարձրացմանը: Մշակված է նաև դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույց:

ՎՊՀ շարունակական կրթության բաժնի կողմից իրականացվող դասախոսների կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման հնգամյա ծրագրի շրջանակներում 2015-2018 թթ. վերապատրաստվել են 184 դասավանդող: Վերապատրաստումն իրականացվում է 5-ամյա պարբերությամբ 30 կրեդիտ ընդհանուր աշխատածավալով. այն ներառում է Անգլերենն ակադեմիական միջավայրում, Իրավական պատրաստություն, Մանկավարժահոգեբանական պատրաստություն, Մասնագիտական

պատրաստություն դասընթացները, ինչպես նաև հաշվի են առնվում հրատարակումները և համաժողովում զեկուցումները: Վերապատրաստումները համալսարանը իրականացնում է հիմնականում ներքին ռեսուրսների հաշվին կամ կազմակեպում վերապատրաստումներ այլ հայրենական և արտասահմանյան կենտրոններում: Հարկ է նշել, որ մասնագիտական վերապատրաստումներ անցել են ռուսաց լեզվի ամբիոնի 12 դասախոսներ, որը կազմակերպվել և անցկացվել էր «Ռոսստրուդնիչեստվո» գործակալության հայաստանյան գրասենյակի և ՀՊՄՀ-ի կողմից (ք.Երևան), ինչպես նաև հոգեբանության ամբիոնի երկու դասախոսներ՝ ՀՀ կառավարման ակադեմիայում և ԵՊՀ-ում, և օտար լեզվի ամբիոնի մեկ դասախոս՝ Գյոթեի ինստիտուտի կողմից կազմակերպված գերմաներենի դասավանդման դասընթացին: Այցից պարզ դարձավ, որ միջազգային ծրագերին մասնակցության, անգլերեն լեզվով դասաընթացների իրականացման համար պրոֆեսորադասախոսական անձնակազմը անգլերեն լեզվի տիրապետման խնդիր ունի, որի նկատմամբ համալսարանը առանձնահատուկ ուշադրություն է դրսևորում և կազմակերպում հավելյալ դասընթացներ:

ՎՊՀ-ում առկա են դասախոսների վերապատրաստման օրինակներ միջազգային ծրագրերի շրջանակներում: Վերջին տարիներին նկատվում է նաև ակադեմիական շարժունության միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում վերապատրաստման կարճաժամկետ դասընթացներին մասնակցած պրոֆեսորադասախոսական և աշխատակազմի ներկայացուցիչների թվի աճ: PRINTeL (ERASMUS+) նախագծում՝ «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» նախագծի շրջանակներում Համալսարանը համագործակցում է Լյովենի կաթոլիկ, Բարսելոնայի, Պորտոյի, Լինշոպինգի և Գրացի Կիրառական գիտությունների համալսարարնների հետ, որտեղ վերապատրաստվել են 6 երիտասարդ դասախոսներ: Վերադառնալուց հետո վերապատրաստվել են ավելի քան 60 դասախոս:

**5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:**

ՎՊՀ-ն մշակել է կրթական ծրագրերի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի կայունության ապահովման մեխանիզմներ: Առկա են «ՎՊՀ աշխատողների գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման», «ՎՊՀ աշխատակիցներին և ուսանողներին դրամական օգնություն և աջակցություն տալու, պարգևատրելու և խրախուսելու», ինչպես նաև «ՎՊՀ աշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տրամադրելու» կարգեր:

2017թ-ից Համալսարանը 10%-ով բարձրացվել է բոլոր աշխատակիցների աշխատավարձը: Ամեն տարի, ելնելով բյուջեի հնարավորություններից, ՎՊՀ–ի աշխատակիցները ստանում են 13-րդ (կախված միջոցներից՝ նաև 14-րդ աշխատավարձ):

ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մեջ մեծ է ՄՈՒՀ-ի շրջանավարտների թիվը (134 անդամ), որոնցից գիտական աստիճան և կոչում ունեն 77-ը: Որպես ֆինանսական լծակ դասախոսական կազմը ստանում է հավելավճար, որը հիմնված է մասնագիտական ստաժի վրա: Սակայն, ՎՊՀ-ում արդյունավետ չի գործում հետ բուհական կրթական համակարգը, որը խոչընդոտում է երիտասարդ դասախոսների համալրման գործընթացին:
Սակավաթիվ են մինչև 30 տարեկան դասախոսների քանակը, ինչպես նաև անփոփոխ է մնացել դասախոսների միջին տարիքային բաշխումը, որն կարող է սահուն սերնդափոխության խնդիր դառնալ: Սակայն դիտվում է ժամավճարային կարգով աշխատողների թվի կրճատում:

Չի արձանագրված մինչև 20% մոտիվացիայի բարձրացումը, որն ամրագրված է ՎՊՀ նախորդ հավատարմագրման արդյունքում կազմված բարելավման պլանում:

**5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:**
ՎՊՀ-ն մշակել է սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման, ինչպես նաև սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականություն և ընթացակարգեր: Սակայն, համալսարանում առկա ոչ բոլոր ուղղությունների ՊԴ կազմն է ստանում մասնագիտական առաջընթաց:
Մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդլայնմանը և խորացմանը մեծապես նպաստում են դասավանդող անձնակազմի վերապատրաստումները, որոնք կատարվում են տարբեր ուղղություններով՝ հատուկ մշակված ծրագրերով՝ հաշվի առնելով Համալսարանի ռազմավարական զարգացման տվյալ փուլի խնդիրները:

2018-19 ուս.-տարվա սկզբին մեկնարկել և շարունակվում են հեռավար կրթության ներդրման հետ կապված վերապատրաստումները՝ մոտ ապագայում ուսուցման նոր ուղղությունը զարգացնելու նպատակով: ՄՈՒՀ-ում առկա են ՊԴԿ կազմի մասնագիտական որակների բարձրացման և պաշտոնական առաջընթացի ապահովման ընթացակարգեր:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր առկա չեն: Շեշտը դրված է միայն վերապատրաստումների և որոշ գործուղումներին նպաստելու վրա: Առանձին քաղաքանություն առկա չէ:

**5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:**
Ռազմավարական նպատակների իրականացման համար բուհն ունի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ: Հստակեցվել են կրթական ծրագրերի և առանձին դասընթացների վերջնարդյունքները, մշակվում են այդ վերջնարդյունքների գնահատման հստակ մեխանիզմներ, ձևեր և մեթոդներ:

Ինքնավերլուծությունը չի անդրադարձել վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի խնդիրներին և պատասխան չի տրված աշխատակազմի անհրաժեշտ ծավալի վերաբերյալ:

Բացակայում են ՈԻՕ ռեսուրսների աշխատանքի մոնիթորինգի և որակի գնահատման խնդիրները: Մշակված է ՈւՕ անձնակազմի վերապատրաստման կարգ /հաստատված 30.05.2019թ./[1]: Մշակված չի աշխատակիցների մրցույթով անցկացման կարգը, որն ամրագրված է բարելավման պլանում:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը փաստում է, որ ՎՊՀ-ն ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Դրական է, որ ՊԴԿ-ի համալրումը տեղի է ունենում մրցութային հիմունքներով. հաշվի է առնվում կրթական ծրագրերի և ՄՌԿ բաժնի կողմից մշակված պաշտոնների անձնագրերի պահանջներ: Որոք նպաստում են անհրաժեշտ դասախոսական կադրերով համալրման համակարգված գործունեությանը: Հստակ չեն ձևավորված ՎՊՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, ինչը կարող է վտանգել ՄԿԾ-ների նպատակների արդյունավետ իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ ՎՊՀ-ում ՊԴԿ-ի երիտասարդացմանն ուղղված քաղաքականության է գործում. կիրառվում է երիտասարդ ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման համար մենթորության քաղաքականություն: Սա կարող է նպաստել ՊԴ կազմի սերնդափոխության իրականացմանը: Չնայած նրան, որ ՎՊՀ-ն իրականացնում է երիտասարդ կադրերի՝ մինչև 35 տարեկան անձնակազմի, խրախուսման տարբեր մոտեցումներ, այնուամենայնիվ, հետբուհական կրթական համակարգի հետ կապված խնդիրները խոչընդոտում են կադրերի երիտասարդացմանը: Աշխատավարձի ոչ բավարար մակարդակը հանգեցնում է երիտասարդների մոտիվացիայի ցածր մակարդակ: ՎՊՀ վերջին տարիներին նվազում է գիտական աստիճան ունեցող ՊԴ կազմի քանակը, ինչը կարող է վտանգել ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացին:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ համալսարանում գործում է ՊԴԿ-ի խրախուսման համակարգ, կատարվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ կրեդիտային հենքով կազմված ծրագրերով վերապատրաստումներ, իրականացվում է ՊԴ կազմի պարբերաբար գնահատում ուսանողների կողմից: Այս ամենը նպաստում է ՎՊՀ ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը և ՊԴ կազմի որակական հատկանիշների բարձրացմանը: Մասնագիտական վերապատրաստում անցնում են սակավաթիվ դասախոսներ, ավելին, բացակայում է տարբեր մասնագիտություններով ՊԴԿ-ի մասնագիտական վերապատրաստման հստակ քաղաքականություն: Սա կարող է խոչընդոտել ՄԿԾ-ների արդյունավետ բարփոխման գործընթացին: Ինչը կապվում է ՎՊՀ-

[1] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

ի ֆինանսական միջոցների, դասախոսական կազմի օտար լեզվի ցածր իմացության և այլ գործոնների հետ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ կատարվում են գործողություններ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ՎՊՀ միջազգային ծրագրերի մասնակցության համար, որը նպաստում է բուհի միջազգայնացման գործընթացին:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ՎՊՀ-ում առկա են ՊԴԿ-ի և ուսումնօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացվում է «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցում, իրականցվում են վերապատրաստումներ, գործուղումներ և համագործակցության միջոցառումներ, որոնք ուղղված են դասավանդողների կատարելագործմանը, ՎՊՀ-ն կարևորում է ՊԴ կազմի երիտասարդացումը փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին: Նշելով, որ դեռևս բավարար մակարդքակի վրա չէ ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստման գործընթացը, առկա են խնդիրներ օտար լեզվի իմացության և ՊԴԿ երիտասարդացման հետ կապված:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:**

**Փաստեր**

**6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:**

ՎՊՀ-ն իր նախորդ 2014-2018 թթ. Ռազմավարական ծրագրում սահմանել է հավակնություններ. դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կայուն զարգացումն ապահովող, կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոն: Հաշվի առնելով նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի առաջարկությունները ՎՊՀ-ն վերաձևակերպել է իր գիտական առաջնահերթությունները. առաջնահերթ զարգացման ոլորտներ սահմանելով՝ հայագիտությունը և գիտություններ կյանքի և երկրի մասին: Գերակայությունների վերաբերյալ փոփոխությունները կատարվել է գիտական խորհուրդը 2016 թ.-ին ապրիլի 28-ին թիվ 4 նիստի ընթացքում և վերահիմնավորել է համալսարանի գործող ՌԾ-ում առկա գիտության զարգացման գերակայությունները 2016-2019թթ-ի համար: Համալսարանի հետազոտական ռազմավարական ուղղությունները չեն արտահայտում ՎՊՀ հետազոտական զարգացման ամբողջական ռազմավարությունը: Բուհում գործում են մի

շարք մասնագիտական ամբիոններ, որոնց գիտական պոտենցիալը չի ներառվում հետազոտական համակարգում:

Ներկայումս հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող հստակ ռազմավարություն չի իրականացվում հաստատությունում, /չնայած այդ մասին ամրագրված էր հաստատության նախորդ հավատարմագրման արդյունքում կազմված բարելավման պլանում/ կատարվում են միայն առանձին միջոցառումներ, մասնավորապես գիտաժողովներ, հետազոտական նախագծերի իրականացում:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ՎՊՀ-ում իրականացվող գիտական աշխատանքները ոչ բոլոր դեպքերում են համապատասխանում տարածաշրջանի զարգացման նպատակների հետ /մասնավորապես ինֆորմատիկայի և կառավարում ոլորտները/:

Հետազոտության և զարգացման համար բուհի բյուջեից վերջին 3 տարիներին հատկացվել է համապատասխանաբար՝ 2016թ.-ին 103 մլն. (բյուջեի 13%), 2017թ-ին՝ 115 մլն. (14%) և 2018թ-ին՝ 92 մլն. (12%): Թվերը հիմականում ներառում են պրոֆեսորադասախոական անձնակազմի աշխատավարձի 22,2%-ը, խրախուսման համար հատկացված գումարները, գործուղումների, տպագրության և այլ ծախսեր և ուղղակիորեն չեն վերաբերում հետազոտական գործունեությանը, մասնավորապես՝ լաբորատոր սարքավորումների ձեռքբերմանը, միջազգային գիտաժողովների մասնակցությանը:

Փորձագիտական վերլուծությունից պարզ դարձավ, որ բուհում նյութատեխնիկական բազայի /լաբեր և այլ ռեսուրսներ/ համալրման համար ֆինանսական հատկացումներ ՎՊՀ բյուջեից չեն իրականացվում:

**6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:**

Ըստ ՎՊՀ ինքնավերլուծության, մինչ նախորդ հավատարմագրումը ամբիոնները հետազոտական աշխատանքները պլանավորում էին՝ դասախոսների նախասիրություններից ելնելով: 2016 թվականից, հաշվի առնելով նախորդ փորձագիտական խմբի դիտողություններն ու առաջարկությունները, ամբիոնները ներկայացրել են և հաստատել են գիտահետազոտական ծրագրեր՝ իրենց ժամանակացույցներով: ՎՊՀ Գիտական խորհրդի՝ 2018թ. փետրվարի 22-ին տեղի ունեցած թիվ 2 նիստին քննարկվել է ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների համապատասխանությունը ՎՊՀ ռազմավարությանը և ժամանակացույցին: Սակայն փորձագիտական վերլուծությունից պարզ դարձավ, որ նիստի արձանագրությունը ներառում է ամբիոնների դասախոսների կողմից իրականացվելիք հետազոտական թեմաները և ժամանակացույցը, իսկ տվյալ թեմաները ոչ միշտ էին արտահայտում բուհի հետազոտական ուղղությունները: Հստակ չէ նաև, թե ինչի հիման վրա են սահմանվել գիտահետազոտական երկարաժամկետ ծրագրերը, այն դեպքում, երբ ՎՊՀ ռազմավարական ծրագիրը /որտեղ ներառված են հետազոտական ուղղություններ 2014-2018 թթ-ների համար/ ավարտվել է 2018 թվականին:

2015 թ. ընդունվել ու 2016 թ.-ից ներդրվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհի տրամադրման» կարգը: Հայտագրված 9 աշխատանքներից փորձաքննության արդյունքում ընտրվել են 3 աշխատանք, որոնց տրամադրվել է 2,5 միլիոն դրամ: 2017թ. ապրիլ ամսին ևս հայտարարվել է գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհի մրցույթ՝ 6-ամսյա ժամկետով: Մրցույթում հաղթող են ճանաչվել 10 գիտահետազոտական նախագծեր: Դրամաշնորհի բոլոր նախագծերի մեջ ներգրավված են եղել 40 անձիք: Դրանց իրականացման համար ծախսվել է 30 մլն ՀՀ դրամ: Դրանցում խրախուսվել են 3 բնագիտական ուղղվածությամբ հայտեր: Հարկ է նշել, որ 9 դրամաշնորհներից միայն 3 են ուղղված եղել գիտական արդյունքի ստեղծմանը, որոշ ծրագրերի արդյունքում ստեղծվել են ուսումնամեթոդական նյութեր: Դրամաշնորհների ամփոփումը և վերլուծությունը ցույց է տվել, որ կարգի կիրարկումը որոշակի թերություններ ունի՝ կապված մրցույթների անցկացման, գումարների բաշխման, արդյունքների տպագրման հետ: Ուստի 2018 թվականին կարգի կիրառությունը կասեցվել է:

**6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:**

ՎՊՀ-ն 2017 թվականից ներդրվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակությանին որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգը»: Բուհում առկա են «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման», ինչպես նաև «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտաժողովների կազմակերպման և անցկացման» կանոնակարգեր, որտեղ սահմանված են հոդվածներին և զրախոսմանը ներկայացվող պահանջները: «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագրերի» Ա և Բ պրակները (2015-2018 թթ.) ներառված են եղել ԲՈԿ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում: 2019 թվականից ՎՊՀ-ն նախատեսվում է տեղեկագիրը հրատարակել տարեկան 2 անգամ պարբերականությամբ: 2015-2018 թթ. ՎՊՀ-ում անցկացվել է 5 միջազգային գիտաժողով, որոնց մասնակցել է 17 երկրից 264 մասնակից: Գիտաժողովները նվիրված են եղել լեզվի և արդի գրականության հիմնախնդիրներին: Համալսարաում տպագրվող գիտահետազոտական աշատանքները պարտադիր ստուգվում են գրագողությունը հայտնաբերող համակարգչային ծրագրերով:

Տարբեր կանոնակարգերում նախատեսված են երիտասարդ (մինչև 36 տարեկան) գիտնականներին խրախուսող դրույթներ: Պարբերաբար կատարվում են գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության վերլուծություններ. յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, ամփոփելով ուս.-տարվա արդյունքները, բուհը մշակել է գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության

վերլուծության (ԳԱԱՎ) մոտեցում, որն հիմված է ամբիոնների գիտական արդյունավետության գործակցի վրա: Վերջինս որոշվում է հատուկ բանաձևով՝ քանակական 3 ցուցանիշների հիման վրա /C = A – B; A - հրատարակած աշխատանքների քանակը բաժանվում է ամբիոնի աշխատակիցների թվի վրա (եթե ամբիոնի աշխատակիցների 50 % և ավելին հրատարակած աշխատանքներ ունի), B – ոչինչ չտպագրած աշխատակիցների թիվը բաժանվում է ամբիոնի աշխատակիցների թվի վրա/: Սակայն այս քանական մոտեցումը որակապես չի բնութագրում տպագրված գիտահետազոտական աշխատանքները, իսկ կատարված աշխատանքների որակի գնահատում արված չէ:

2015-2018 թթ. Համալսարանի տարբեր ամբիոններում ձևակերպված են ընդամենը 11 հայցորդներ, չկան ասպիրանտներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՎՊՀ-ում ասպիրանտական կրթության զարգացման խոչընդոտ է հանդիսանում Երևանում անցկացվող նախապատրաստական դասընթացներին ընդունելության նախապայմանի՝ տեղեկաբանության և հատկապես օտար լեզվի իմացության «TOEFL ibt» («IELTS», «Alliance Francaise», «on DAF») մակարդակների համապատասխանության քննությունների հանձնումը:

Ակադեմիական ազնվությունը ՎՊՀ-ում երաշխավորվում է «Ակադեմիական ազնվության կարգով», «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի էթիկայի կանոնագրքով», ինչպես նաև այլ կարգերում («Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման կարգ», «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտաժողովների կազմակերպման և անցկացման կարգ»:

**6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:**

Ըստ հաստատության ինքնավերլուծության արտասահմանյան պարբերականներում, միջազգային գիտաժողովների նյութերում, ինչպես նաև *SCOPUS* և *WEB OF SCIENCE* շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում հրապարակումների համար նախատեսվում են դրամական խրախուսումներ:

ՎՊՀ դասախոսների 2015-2018 թթ. միջազգային ընդհանուր հրապարակումների թիվը հասնում է 82-ի, սակայն դասախոսական ընդհանուր թվի հետ համեմատած սա փոքր թիվ է կազմում: Սակայն, դրանք տպագրված չեն միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում: Չեն իրագործվում միջազգային գիտական ծրագրեր, համատեղ թեմաներ արտասահմանյան բուհերի համապատասխան ամբիոնների հետ:

Գործում է նաև "ՎՊՀ աշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տրամադրելու" կարգ: ՎՊՀ-ն պայմանագրեր ունի և համագործակցում է 17 կազմակերպությունների հետ, սակայն չեն համագործակցում հետազոտության առումով: Որոշ դեպքերում ՎՊՀ դասախոսները և ուսանողները մասնակցում են ԱՊՀ և արտասահմանյան բուհերում անցկացվող գիտագործնական գիտաժողովներին:

Այցից պարզ դարձավ, որ ՎՊՀ աշխատակիցները ակտիվ չեն մասնակցում տեղական և արտասահմանյան գիտական դրամաշնոհների մրցույթներին և չունեն անհատական գիտական դրամաշնորհներ: Ինչպես նաև դասախոսները չեն տիրապետում միջազգային գրախոսվող ամսագրերում ազդեցության գործակցով հոդվածների տպագրման ընթացակարգերին և հնարավորություններին:

**6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:**

ՎՊՀ-ում որոշ դեպքերում առկա են ուսումնական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներդրման օրինակներ: Առկա են ուսանողների հետ համահեղինակությամբ որոշ հրապարակումներ: Այդուհանդերձ, փորձագիտակա այցից պարզ դարձավ, որ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածությունը թույլ է: Նկարագրված չեն մագիստրոսական թեզերի թեմատիկայի ձևավորման, ընտրության և կատարման սկզբունքները: Առկա չեն ուսանողների մասնակցությամբ արտաքին շահառուների պատվերով կամ ղեկավարությամբ իրականացվող հետազոտական աշխատանքներ:

Բուհում առկա են հետազոտական և ուսումնական գործունեության փոխկապակցման որոշ մեխանիզմներ, այդուհանդերձ, իրականացված օրինակներ առկա չեն: Կարևորվում է ուսանողների ավարտական աշխատանքներում հետազոտական բաղադրիչի առկայությունը. 2015-2016 ուսումնական տարուց մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչին տրվել է 48 կրեդիտ (40 %): Այցից պարզ դարձավ, որ մագիստրատուրայի ավարտին ուսանողների գիտահետատեազոտական աշխատանքները տպագրվում են հոդվածի տեսքով /<<Մագիստրոս>> հանդեսում/, որը գնահատվում է մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ: Հարկ է նշել նաև, որ մագիստրատուրայի ուսանողների ավարտական աշխատանքների միայն մի մասն է առնչվում ամբիոնների գիտահետազոտական թեմաներին:

Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի վերլուծություններից պարզ դարձավ, որ դասախոսների կողմից կատարված հետազոտական աշխատանքների արդյունքները ոչ միշտ են կիրառվում ուսումնական գործընթացում:

**Դատողություններ**. ՎՊՀ-ն, հաշվի առնելով նախորդ հավատագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունը, վերանայել է հետազոտական գերակա ուղղությունները և քայլեր ձեռնարկել գիտահետազոտական աշխատաքների կատարման խթանման և որակի բարելավման համար: Սակայն, հաստատված ուղղությունները ամբողջովին չեն ներառում համալսարանի գիտական ողջ ներուժը, ինչը վտանգներ է ստեղծում այլ ուղղություններով հետազոտական գործունեության նկատմամբ մոտիվացիայի անկմանը: Սա համահունչ չէ համալսարանական գիտական համակարգված գործունեության տրամաբանությանը: Ավելին, իրականացված փոփոխությունների հիմքում դրված չեն վերլուծական աշխատանքներ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ համալսարանը մշակել է աշխատակիցների գիտահետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև որոշակի քայլեր ձեռնարկել ուսումնական գործընթացի և գիտահետազոտական գործունության փոխկապակցվածության ստեղծման համար: Սակայն մտահոգիչ է ՎՊՀ գիտահետազոտան ուղղությունների և առկա ռեսուրսների ոչ լիարժեք կառավարումը, ինչը խոչընդոտում է ՄՈՒՀ-ում հետազոտական համակարգի արդյունավետ զարգացմանը: Համալսարանի գիտահետազոտական գործունեության վերահսկումը կենտրոնացած է միայն քանակական ցուցանիշների վրա: Ինչը թույլ չի տալիս գրանցել ՎՊՀ հետազոտական ոլորտում որակական զարգացումներ: Գիտական աշխատանքների ֆինանսավորման համալսարանական մրցույթները մեծամասամբ ուղղված են եղել ոչ թե գիտական հետազոտությունների, այլ դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման համար, ինչը չի նպաստում ՎՊՀ հետազոտական նպատակների արդյունավետ իրականցմանը:
Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ գիտահետազոտական աշխատանքների կատարման և խրախուսման, բնագիտական հոսքում նյութատեխնիկական ռեսուրսների (սարքեր, նյութեր) հատկացումը սահմանափակ է: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում նաև այն, որ գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացումը խրախուսող մեխանիզմներ ՎՊՀ-ում առկա չեն: Սա խոչընդոտում է ՎՊՀ-ում իրականացվող հետազոտությունների, դրանց արդյունքում դուրս բերած լավագույն փորձի միջազգայնորեն հրապարակային դարձնելը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ ՎՊՀ-ն ունի գիտական հետազոտությունների ֆինանսավորման հետ կապված խնդիր. առկա չեն պետության կողմից բազային և թեմատիկ հետազոտությունների շրջանակում իրականացվող թեմաներ, ինչպես նաև բավարար չեն ֆինասավորման ներքին ռեսուրսներ: Ինչը կարող է խոչընդոտել ՎՊՀ հետազոտական նպատակների իրականացմանն ու հետազոտության ոլորտի զարգացմանը: ՎՊՀ-ի անձնակազմի շրջանում առկա գիտական տարբեր դրամաշնորհներին դիմելու հմտությունների բացը ևս չի խրախուսում հետազոտական դրամաշնորհներին մասնակցությանը: Բուհի աշխատակիցների տպագրված գիտական աշխատանքների ցուցանիշները բարձր չեն, բացակայում են գրախոսվող և ազդեցության գործակցով, միջազգային ամսագրերում տպագրված հոդվածները: Ինչը չի նպաստում համալսարանում վարվող հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

Մտահոգիչ է, որ ՎՊՀ-ում երիտասարդների ներգրավվածությունը գիտական հետազոտություններում ցածր է: Ուսանողների շրջանում ևս, թեև առկա են գիտահետազոտական կենտրոն և գիտահետազոտական լաբորատորիա, ՈւԳԸ, այդունադերձ ակտիվությունը բարձր չէ: Առկա չեն երիտասարդների գիտությամբ զբաղվելու մոտիվացիան բարձրացնելու մեխանիզմներ. հայցորդների քանակը քիչ է, ասպիրանտեր չկան: Այս փաստը խոչընդոտում է ՎՊՀ-ում գիտության երիտասարդացմանը, ինչպես նաև վտանգում է երիտասարդ կադրերի պատրաստման գործընթացը:

ՎՊՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներն ունեն բարելավման կարիք, քանի որ առկա չեն կրթական գործընթացում գիտական հետազոտությունների, ատենախոսությունների և դրանց արդյունքների ներդրման բավական օրինակներ[2]: Ինչպես նաև այն, որ ուսանողների կողմից քիչ են կատարվում վերլուծական/հետազոտական աշխատանքներ, որը խոչընդոտում է ուսանողների մոտ հետազոտական հմտությունների ձևավորմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուհում բացակայում է հետազոտական ուղղություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, գերակա հետազոտական ուղղությունները չեն ընդգրկում համալսարանի ամբողջական գիտական ներուժը, առկա չեն բուհի զարգացման ուղղություններն արտահայտող երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, դասախոսների կողմից կատարվող հետազոտական աշխատանքները սակավաթիվ են, բացակայում է գիտության միջազգայնացումը և հետազոտական արդյունքների առևտրայնացումը, ակտիվ չէ բուհի գիտահետազոտական աշխատաներին ուսանողների մասնակցությունը, ինչպես նաև հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները դեռևս ունեն բարելավման կարիք[3], փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՀՊ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է անբավարար:

## VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:**

**Փաստեր**

**7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:**

ՎՊՀ-ում կրթական կարիքներն ապահովելու և հագեցած կրթական միջավայր ստեղծելու համար առկա են 1 վարչական, 3 ուսումնական մասնաշենքեր, որոնցից մեկը գրանցված է Գր. Լուսավորիչի 47 հասցեում՝ Համալսարանի հիմնական տարածքից դուրս:

Բուհում կան տեղեկատվական ծառայություններ մատուցող և տեխնոլոգիական լսարաններ, սպորտդահլիճ, ինֆորմատիկայի և լեզուների ուսուցման համար

[2] Նախադասությունը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:
[3] Նախադասությունը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

նախատեսված լսարաններ, որոշակիորեն հագեցված ուսումնական և հետազոտական լաբորատորիաներ: Համալսարանի լաբորատորիաները, կաբինետները, 10-ը լսարաններ հագեցված են համակարգիչներով և SS այլ սարքերով:

Հաշվետու ժամանակաշրջանում բուհի ուսումնական միջավայրը էականորեն բարելավվել է: ՎՊՀ-ում վերջին երկու տարվա ընթացքում բարելավվել են Ս.Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնի (25%), Բուսաբանության և աշխարհագրության կաբինետների, Թիվ 3 լաբորատորիայի հնարավորությունները: Ստեղծվել է թիվ 8 համակարգչային լսարանը, որը ծառայում է «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության կրթական գործընթացին: Հաշվետու ժամանակաշրջանում ավելացել է մեկ լաբորատորիա: Բուհի տարածքի 90%-ում գործում է անվճար Wi-Fi: Համացանցի մատչելիությունը հասու է 24 լաբորատորիաներում և կաբինետներում, ինչպես նաև բոլոր մասնաշենքերի տարբեր ստորաբաժանմունքներում, սակայն դեռևս այն լիովին չի բավարարում ուսանողների պահանջները (սոցիոլոգիական վերջին՝ 2019 թ. հունվար հարցման ժամանակ խնդիրը ընդգծել է հարցվողների 55.4 %-ը):

Կրթական միջավայրի գնահատման համար բուհն անցկացրել է հարցում ուսանողների շրջանում և ստացված տվյալների հիման վրա բուհը բարեփոխել է գրադարանային որոշ պայմաններ: Ուսումնառողները ռեսուրսների ապահովվածությունից բավարարված են 64%-ով, իսկ դասախոսները՝ 56%-ով:

Բուհն ունի գրադարան, որը մասամբ ապահովված է անհրաժեշտ գրականությամբ և ամեն տարի համալրվում է նոր գրքերով (տարեկան մոտ 2000 միավոր, որից մոտ 60%-ը մասնագիտացված): Չնայած դրան, գրադարանն ունի գրականության պակաս, հատկապես համեմատաբար նոր բացված, ոչ մանկավարժական ՄԿԾ-ների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա է գրադարանի վերազինման անհրաժեշտություն: Բուհում ներդրվել է էլեկտրոնային դասախոսությունների և ուսումնամեթոդական նյութերի համակարգ (էլեկտրոնային գրադարան), որը զգալիորեն մեղմում է պահանջված գրականության պակասը: Թվայնացվել է քարտադարանները, ունեն համակարգ առցանց գրքեր պատվիրելու, գրքերի շարժին հետևելու, վիճակագրություն հավաքելու, ինչը թույլ է տվել կտրուկ նվազեցնել գիքերի կորուստները: Հաշվետու ժամանակաշրջանում վերակառուցվել և շահագործման է հանձնվել նոր ճաշարանը:

Էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և սպասարկման բաժինը նախատեսում է ներդնել հեռավար կրթություն: Այս առումով ներդրման փուլում է MOODLE համակարգը, որի համար արդեն վերապատրաստվել է տասը դասախոս, համալրվել երկու բլոկ սերվեր: Որոշ սարքավորումներ ձեռք են բերվել Եվրամիության՝ MAHATMA, SSRULI, VERITAS, PRINTeL, BOOST դրամաշնորհային ծրագրերի միջոցներով:

**7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:**

ՎՊՀ-ում իրականացվում է տարեկան ֆինանսական պլանավորում: Ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և արտաբյուջետային մուտքերի հաշվին: 2018թ. բուհի ֆինանսական ռեսուրսների (եկամուտների) մոտ 74%-ը կազմվում է ուսանողական վարձավճարներից, մոտ 22%-ը՝ պետ-բյուջեի հատկացումներից, մոտ 4%-ը՝ այլ մուտքերից: Ուսման վճարները կազմում են ՎՊՀ բյուջեի մուտքային մասի գերակշիռ զանգվածը և Էական կշիռ չեն կազմում ֆինանսական այլ աղբյուրները:

Բուհի ֆինանսական միջոցները բաշխվում են ըստ առանջնահերթության՝ բուհի տարբեր ստորաբաժանումների և մարմինների կարիքներից ելնելով: Ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության տեսակետից բուհում առկա է տարեկան ֆինանսական պլանավորում և հաշվետվողականություն: Բուհի դրամական միջոցների ծախսերը կատարվում են ըստ հետևյալ ոլորտների. աշխատավարձ՝ մոտ 75%, կրթաթոշակներ՝ մոտ 2-3% և այլն: Բավարար միջոցներ չեն հատկացվում գիտահետազոտական գործունեությունն ակտիվացնելու համար: Ըստ էության չեն հատկացվում գիտահեետազոտական աշխատանքներին ուղղված ֆինանսական միջոցներ, ինչը փաստեցին նաև բուհի ներկայացուցիչները:

Ըստ ԳԱՑ-ի վերլուծության ավելանում են մեկ ուսանողի հաշվով կատարված ծախսերը, սակայն ֆինանսական մուտքերը սկսել են աստիճանաբար նվազել:

Կատարվել է մասնաշենքերի էական վերանորոգում: Շարունակական կրթության բաժնի կենտրոնի ծառայությունների հաշվին ապահովում են լրացուցիչ ֆինանսական մուտքեր:

Գրականություն ձեռքբերելու նպատակով հատկացվում են ամենամյա ծախսեր: Ուսանողների գիտահետազոտական աշխատանքները ակտիվացնելու նպատակով որոշակի գրահրատարակչական ծախսեր են կատարվում:

ՎՊՀ-ում առկա է ֆինանսական ռեսուրսների սակավություն՝ միջազգայնացման գործընթացներում, ռեսուրսների լրացուցիչ ապահովվածության նպատակով: համակարգչային հագեցվածությունը բարձրացնելու խնդիրը պարզաբանվել է փորձագիտական հանդիպումների ժամանակ:

Բուհ-ում աշխատավարձի մակարդակը էականորեն չի զիջում այլ բուհերի աշխատավարձի մակարդակներին:

**7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:**

Բուհում գործում է ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն և ընթացակարգ՝ ըստ առանձնահատկության և կարիքներից ելնելով: Բյուջեի նախագիծը կազմվում է ռեկտորի, պրոռեկտորների և բուհի ֆինանսական ծառայությունների կողմից՝ հիմքում ունենալով բուհի զարգացմանն ուղղված քայլերը, նախօրոք հաշվված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը, ինչպես նաև բուհի ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը, միաժամանակ հիմնվում նախորդ տարիների փաստացի կատարողականի վրա:

Բյուջեի նախագիծը քննարկվում է բուհի ԳԽ-ում և հավանության արժանանալու դեպքում՝ ներկայացվում բուհի Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Ֆինանսների բաշխման ընթացակարգի առկայությունը նպաստավոր հանգամանք է ֆինանսական միջոցների ճիշտ, նպատակային օգտագործման, հետագծելիության ապահովման տեսակետից: Սակայն ֆինանսական միջոցների պլանավորման և բաշխման գործող քաղաքականության արդյունավետության գնահատման մեխանիզմները դեռևս գնահատված չեն:

Առանձին կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների բաշխման ընդգծված քաղաքականություն առկա չէ և արտացոլված չէ ծախսերի նախահաշվում: Բյուջեի կառուցվածքում առկա չէ ուղղակիորեն ՄԿԾ-ների ուղված հատկացումների բացակայություն: Բյուջեն ձևավորման համար հիմք չեն ծառայում ՄԿԾ-ների բարելավման նպատակները: Առկա է երիտասարդ դասախոսների ներգրավման խնդիրներ ցածր աշխատավարձի համար:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կատարվում է արտաքին աուդիտ՝ ըստ ՀՀ-ում գործող կարգի: Աուդիտի եզրակացությունը ներկայացվում է հոգաբարձուների խորհրդին, տեղադրվում կայքում:

**7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:**

Ընդհանուր առմամբ, բուհի ռեսուրսային բազան հնարավորություն է տալիս իրականացնել բուհի կրթական գործընթացները և վերջիններիս բնականոն ընթացքի ապահովումը: Այս տեսակետից բավարար է տեսական բնույթի դասընթացների իրականացումը, իսկ կիրառական բնույթի դասընթացների իրականացման տեսակետից դեռ կան անելիքներ՝ ռեսուրսային բազայի հարստացման ուղղությամբ: Վերջին տարիներին կատարվել են որոշակի բարելավումներ բուհի ռեսուրսային բազայի բարելավման ուղղությամբ, որը նկատվել փորձագիտական այցի ընթացքում և նշվել է նաև ներքին և արտաքին շահակիցների կողմից: Չեն ներկայացված վերլուծություններ ֆինանսական և այլ

ռեսուրսների ներդրման արդյունքների և արդյունավետության վերաբերյալ և չի ընդգծված ներդրումների նպաստումը որակի շարունակական բարելավմանը:

Բուհը դառնալով հիմնադրամ մեծացնում է իր ֆինանսական անկախությունը լրացուցիչ մուտքեր ապահովելու հանարավորությամբ:

**7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:**

Բուհում փաստաթղթաշրջանառությունը կատարվում է գործավարության կարգով և «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ընդհանուր բաժնի կանոնակարգով: 2017թ.-ից GOVERN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվում են eBuh համալսարանի կառավարման համակարգի ներդրման աշխատանքներ:

Կայքը ապահովում է տեղեկատվության հասանելիություն՝ հաշվետվությունների, կանոնակարգերի և ՄԿԾ-ների վերաբերյալ: Համալսարանի կայքում տեղադրված են 2018-19 թթ. ստորաբաժանումների հաշվետվությունները: Կայքում տեղադրվում են (ռեկտորի հրամանով վավերացումից հետո) բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, ինչպես նաև ՎՊՀ կանոնադրությունը, ռազմավարական պլանը և այլ հիմնարար փաստաթղթեր: Կայքի հնարավորությունները նաև օգտագործվում են թափուր տեղերի մրցույթների հայտարարության համար: ՄՌԿ բաժում գործում է կադրերի բազա, առկա է նաև շրջանավարտների բազա:

Առկա է փաստաթղթաշրջանառության կազմակերպման տեխնոլոգիական սպասարկման խնդիր: Չի բավարարում սերվերի հզորությունը: Տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները SS միջոցներով կառավարելու ընթացակարգեր ներկայացված չեն:

**7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:**

ՎՊՀ-ն ունի բուժկետ, որի միջոցով իրականացնում է կոլեկտիվի անդամներին ցույց տրվող առաջին բուժօգնությունը (աշխատում է 1 բուժքույր): Բուժկետը բարելավման կարիք ունի:

Բոլոր առաջին կուրսեցիներն անցնում են պարտադիր բուժզննում, այն կիրառվում է նաև ողջ աշխատակազմի համար: Յուրաքանչյուր բյուջետային տարի առանձին տողով ֆինանսական միջոցներ են տրամադրվում և՛ բուժկետը առաջին անհրաժեշտության դեղորայքով ապահովելու, և՛ բուժզննումները կազմակերպելու համար:

Մարզահրապարակի ոչ բավարար վիճակը չի կարող գոհացնել ուսանողներին: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների հետ կապված վերջին տարիներին նկատվել են որոշակի

զարգացումներ,մասնավորապես հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար բոլոր մասնաշենքերն ունեն մուտքերում թեքահարթակներ, որոնց միջոցով հնարավոր է մուտք գործել միայն առաջին հարկերը, սակայն առկա է հետագա բարելավման անհրաժեշտություն: Վերելակների բացակայությունը չի տալիս հնարավորություն վերոհիշյալ ուսանողներին անհրաժեշտության դեպքում բարձրանան 2-րդ և ավելի հարկեր: Լսողական և տեսողական խնդիրներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումներ: Անվտանգության նկատառումներով բուհում կա պահակային ծառայություն և քարտային համակարգով անցակետ: Ունեն հակահրդեհային ծառայություն:

**7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:**

Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումը կատարվում է հիմնականում տարբեր սոցիոլոգիական հարցումների միջոցով: Հարցումները բացահայտել են ռեսուրսների կիրառելիության և հասանելիության որոշ խնդիրներ (լսարանների և լաբորատորիաների վիճակ, գրադարան, համակարգչային հագեցվածություն): Պետք է նշել, որ կատարված հարցումները չեն ընդգրկում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության ամբողջական գնահատումը, դիտարկված չեն ֆինանսական ռեսուրսների ներդրման արդյունավետության հարցերը:

Իրականացված հարցումների բացի այլ վերլուծական մեխանիզմներ չեն կիրառվում, օրինակ՝ պարբերական մոնիթորինգ և այլն: Փորձագիտական խումբը չնկատեց բուհի այլ ներքին շահակցիների շրջանում կատարված հարցումներ՝ տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ: Մասնավորապես դասավանդողների շրջանում գնահատում չի կատարվել. նման գնահատում նախատեսվում է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Բավարար ֆինանսական վերլուծություն չի իրականացվում, որը կարող էր լիներ ներքին գնահատման ցուցանիշ:
Բուհը ջանքեր է գործադրում ֆինանսական կրճատումների բացասական ազդեցությունները մեղմելու ուղղությամբ (հարցը քննարկվել է հոգաբարձուների խորհրդի ժամանակ):

**Դատողություններ:** ՎՊՀ-ում կրթական կարիքներն ապահովելու և հագեցած կրթական միջավայր ստեղծելու համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, սակայն չնայած առկա կրթական ռեսուրսներին (լաբորատորիաներ, համակարգիչներ, պրոյեկտորներ և այլն), այնուամենայնիվ նկատվում է տեխնիկական միջոցների և լաբորատորիաների վերահագեցման անհրաժեշտություն, որի համալրումը կնպաստի բուհի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Նախորդ չորս տարիների ընթացքում հիմնվելով բարելավման պլանի վրա բուհն իրականացրել է մի շարք միջոցառումներ ռեսուրսային բազան հարստացնելու և

համապատասխան մակարդակի բերելու ուղղությամբ, այնպիսով իսկ ստեղծել է բավարար հիմքեր բուհի առաջընթացի համար:

Ֆինանսական աղբյուրների մեծ մասը ուսանողական վարձավճարներն են, ինչը ուսանողների թվաքանակի նվազման պայմաններում վտանգում է բուհի ֆինանսական կայունությունը: Այդ նույն տեսակետից ֆինանսական այլ մուտքերը համալրում են բուհի ֆինանսական միջոցների ընդհամենը 4%-ը, այդ իսկ պատճառով բուհը՝ որպես արդեն հիմնադրամ, պետք է ունենա հստակ մեխանիզմ՝ ֆինանսական ներհոսքի աղբյուրների բազմազանեցման, հատկապես՝ այլ աղբյուրների տոկոսային մասնաբաժնի ավելացման ուղղությամբ:

Բուհում առկա է ֆինանսների բաշխման գործող համակարգ, որը կարելի է դրական գնահատել: Դա բարձրացնում է ֆինանսների կառավարման արդյունավետությունը: Բուհը պլանավորում է որոշակի ծախսեր որոնք ուղղված են բուհի նպատակների իրականացմանը: սակայն բյուջում ներառված ծախսերի և կրթական ծրագրերի փոխկապակցվածությունը բավարար ներկայացված չէ:

Բյուջեում աշխատավարձի բարձր տոկոսը (մոտ 75%) չի խրախուսում բուհի զարգացմանն ուղղված այլ ծախսերի բավարար լինելուն:

ՄՈՒՀ-ում կիրառվում է կրթական միջավայրի գնահատման հարցումների մեխանիզմ ինչը կարող է նպաստել կրթական կարիքների վերհանմանը: Սակայն տրամադրվող ռեսուրսների գնահատման վերաբերյալ գործունեությունը դեռևս անբավարար է, քանի որ հարցումներն անցկացվել են միայն շրջանավարտների շրջանում: Արտաքին շահակիցների առավել ակտիվ ներգրավումը և մասնակցությունը կրթական միջավայրի գնահատման և բարելավման գործընթացներին կամրապնդի ռեսուրսների առավել արդյունավետ կիրառմանը, կարող է ապահովել նաև հավելյալ ռեսուրսային մոտքերով:

Բուհում դեռ չկան լիարժեք պայմաններ, որոնք կնպաստեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսումնառությանը արդյունավետ կազմակերպմանը, և այդ տեսակետից բուհում դեռ բավական անելքիներ կան:

ՎՊՀ ընդհանուր աշխատակիցներ-ուսանող հարաբերակցությունը ներկայումս 1-ը 5,7-ի է՝ /2018 թվականի ՌԾ վերլուծության ըստ ԳԱՑ-երի/, ինչը վկայում է ուսանողների բավական փոքր թվաքանակի մասին: Անձնակազմի նման բարձր թվաքանակը կարող է սահմանափակել այլ առանցքային ոլորտներում ներդրումներ կատարելու հնարավորությունը (օր.՝ հետազոտություն, գրադարան, միջազգայնացում) և թուլացնել ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետությունը:
Ուսումնառողների և դասախոսների առկա ռեսուրսներից ոչ բարձր բավարարվածությունը (64% և 56%) կարող է ռիսկային դիտվել ՄԿԾ-ների և համալսարանի այլ գործառույթների արդյունավետ իրականացման համար:
ֆինանսական մուտքերի աստիճանաբար նվազումը, պայմանավորված դիմորդների թվաքանակի պակասով կարող է հանգեցնել ֆինանսական անկայունության:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով բուհում առկա լսարանային և կաբինետային ֆոնդը, կրթական գործընթացի իրականացմանն օժանդակող ռեսուրսների (գրադարան,

մարզադահլիճ, բուժկետ և այլն) առկայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերջին տարիներին բուհը ջանքեր է ներդրել և տեսանելի հաջողությունների հասել բուհի ռեսուրսների բարելավման և հարստացման ուղղությամբ, փորձագիտական խումբը 7-րդ չափանիշը համարում է բավարար, միաժամանակ նշելով, որ բուհում կան խնդիրներ կապված հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ կրթական միջավայրի ստեղծման հետ, ինչպես նաև ՄԿԾ-ների ֆինանսական ուղղակի պլանավորման առումով:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է բավարար:

## VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:**

**Փաստեր**

**8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:**

ՎՊՀ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով և ներբուհական մի շարք իրավական փաստաթղթերով, գործում է հաշվետվողականության աստիճանակարգային (ներքնից՝ վերև) սկզբունքը:

Սահմանված կարգի համաձայն՝ հիմնադրամի տնօրենը (ռեկտորը) յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում հաշվետվություն է ներկայացնում կառավարման բարձրագույն մարմնին՝ ՎՊՀ հոգաբարձուների խորհրդին:

ՄՈՒՀ-ի ռեկտորի հաշվետվողականության հիմքում ընկած են ՎՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները և ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունները, որոնք տեղադրված են նաև ՎՊՀ կայքէջում: Առկա է հաշվետվողականության ապահովման մեխանիզմների բարելավման անհրաժեշտություն:

**8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:**

ՎՊՀ-ն ունի պաշտոնական կայք: Համալսարանի պաշտոնական կայքէջի համապատասխան բաժիններում ներկայացված են Համալսարանի ուսումնական, գիտական, ինչպես նաև ֆինանսական գործունեությանը վերաբերող՝ վերջին տարիների հաշվետվությունները, ինքնավերլուծությունները, զեկույցները:

Վերջին 4 տարվա ընթացքում քայլեր են ձեռնարկվել հաշվետվողականության արդյունավետությունը և հասանելիությունը բարձրացնելու ուղղությամբ:

2018-2019 թթ. իրականացվել են կայքէջի արդիականացման գործառույթներ՝ ակտիվ կիրառվում են սոցիալական ցանցերը. Համալսարանն իր համացանցային տիրույթն ունի նաև Facebook-ում ինչպես նաև Youtube-ում որտեղ տեղեկատվությունը նաև տեսանյութերի եղանակով է հասանելի դառնում օգտատերերին:

ՎՊՀ-ն իր ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվություն է տրամադրվում «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթի, տեղական «Ֆորտունա» հեռուստաալիքի, «Լոռու մարզ» մարզային թերթի և, բնականաբար, պաշտոնական կայքէջի միջոցով: Հոգաբարձուների խորհուրդի նիստերը հեռարձակվում են ուղիղ եթերով:

**8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:**

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը սոցիալական ցանցերում կիրառվող տեխնոլոգիաների շնորհիվ հավաքագրում է տեղեկատվություն իր ֆեյսբուքյան էջի այցելությունների վերաբերյալ և տիրապետում է որոշակի վիճակագրության: Այդուհանդերձ, ՎՊՀ ինքնավերլուծությունը փաստում է հետադարձ կապի անկատարության և որոշ խնդիրների մասին: Հետադարձ կապի արդյունավետությունը և հուսալիությունը բարելավման կարիք ունեն:

Այցի ընթացքում պարզվեց նաև, որ ՄՈՒՀ-ի կողմից տրամադրվող վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար դիմած անհատներից հարցում է կատարվել այդ դասընթացների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրի մասին: Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները հիմնականում զարգացման փուլում են և դեռ լիարժեքորեն համակարգված և ներդրված չեն:

**8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:**

Հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման ուղղությամբ ՄՈՒՀ-ում գործում են հետևյալ մեխանիզմները. շարունակական կրթության կենտրոն, որն ապահովում է վերապատրաստման և լրացուցիչ կրթության դասընթացներ, համագործակցության և կապերի բաժինը, որն իրականացնում է սեմինարներ, օլիմպիադաներ, մրցույթներ, գիտելիքի տոնավաճառներ և վիկտորինաներ, մշակութային կենտրոն, որը կազմակերպում և իրականացնում է մշակութային միջոցառումներ:

ՄՈՒՀ-ի տարածաշրջանում գիտելիքների և արժեքների փոխանցումը փաստվում է նաև նրանով, որ տարածաշրջանի ուսուցիչների շուրջ 70%-ը բուհի շրջանավարտներ են: Համալսարանը համագործակցում է նաև Հ1, «Երկիր», «Շողակաթ» հանրապետական և «Ֆորտունա» մարզային հեռուստաընկերությունների հետ: Համալսարանի ղեկավար կազմը մասնակցում է հեռուստատեսային կլոր սեղանների, բանավեճ-քննարկումների, մամլո ասուլիսների:

**Դատողություններ:** ՄՈՒՀ-ի կանոնակարգված հաշվետվողականությունը ապահովում է ՎՊՀ գործունեության արդյունավետության գնահատման հնարավորությունը կառավարման բարձրագույն մարմնի կողմից: Հաշվետվությունների,

կանոնակարգերի, և ՄՈՒՀ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների հրապարակումներն ապահովում են ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, ինչը կարևոր է հետադարձ կապի մեխանիզմների գործունեության և դրանց միջոցով ՄՈՒՀ-ի կայուն զարգացումն ապահովելու համար: Թվային տեխնոլոգիաների կիրառումը հասարակության հետ հետադարձ կապի արդյունավետության գնահատման համար դրական և հեռանկարային մոտեցում է, ինչը կնպաստի այդ կապերի ամրապնդմանը և ՄՈՒՀ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության որակի և բովանդակության բարելավմանը, ինչպես նաև նպատակային կիրառմանը հասարակության կողմից: Սա նպաստում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությանը և ՄՈՒՀ-ի հետ անմիջական կապի հասանելիությանը: Համալսարանը կարևոր դեր ունի տարածաշրջանում հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման առումով և կիրառում է հաստատված գործընթացներ այդ ուղղությամբ, ինչը կարևոր դեր կարող է ունենալ տարածաշրջանի զարգացման հարցում:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով ՎՊՀ-ի գործունեության թափանցիկությանն ուղղված մոտեցումները, հասարակության հետ հետադարձ արդյունավետ կապերի ստեղծման գործում կիրառվող թվային տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված քայլերը, ինչպես նաև տարածաշրջանում հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման գործում դերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

**ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:**

**Փաստեր**

**9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:**

ՎՊՀ-ում 2016 թ.-ին ընդունվել է միջազգայնացման ռազմավարությունը: Առկա է նաև 2019-2021 միջազգայնացման պլանի նախագիծը: ՎՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացը համակարգում է Համագործակցության և կապերի բաժինը, որը գործում է 2013 թ-ից: Բաժնի հաշվետվություններում նշվում է հավելյալ մարդկային ռեսուրսների և միջոցների ներգրավումը միջազգայնացման գործընթացների արդյունավետության բարձրացման համար: Բաժնի հիմադրման և դրամաշնորհներին դիմելու նպատակաուղղված աշխատանքների շնորհիվ 2013-14 թթ բուհին հաջողվեց ներգրավվել Տեմպուս ծրագրի հինգ և Էրազմուս Մունդուս ծրագրի շարժունության չորս նախագծերին:

ՄՈՒՀ-ում 2017 թ.-ից գործում է ՎՊՀ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգը, որի հիմքերից են համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հիմնական հասկացությունները: 2015 թ.-ից գործում է ՎՊՀ ուսանողների միջազգային շարժունության կազմակերպման, արտասահմանյան բուհերում ձեռք բերած կրեդիտների ընդունման և հաշվառման կանոնակարգը:

Միջազգայնացման գործընթացը ՎՊՀ-ում հիմնականում իրականացվում է միայն արտաքին ֆինանսավորման աղբյուրներ ունեցող ծրագրերի շրջանակներում, արտաքին կապերի հաստատումը խրախուսող հստակ քաղաքականություն և մշակված ընթացակարգեր առկա չեն: Առկա է միայն ՎՊՀ աշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տրամադրելու մասին կարգը: Համաձայն նշված կարգի կարող է փոխհատուցվել միջազգային գիտաժողովին, գիտական կոնֆերանսին, սեմինարին գործուղվող աշխատակցի ճանապարհածախսը ոչ ավելի քան 200 000 ՀՀ դրամի չափով:

**9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:**

ՎՊՀ-ի Համագործակցության և կապերի բաժնի գործունեությունը ունի երկու ուղղություն՝ միջազգային և ներպետական համագործակցություն, բուհ-դպրոց կապերի ամրապնդում: Բաժնի աշխատակիցներն են բաժնի վարիչը, միջազգային համագործակցության աշխատանքները խթանող ավագ մասնագետը և բուհ-դպրոց կապի մասնագետը:

Բաժինն իր գործունեությունն իրականացնում է համաձայն 2016 թ.-ից գործող ՎՊՀ համագործակցության և կապերի բաժնի կանոնադրության:

Միջազգային համագործակցության բնագավառում համագործակցության և կապերի բաժինը կատարում է մի շարք հստակ ձևակերպված գործառույթներ, որոնց տարեկան պլանները հաստատվում են ՎՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից, իսկ կատարված աշխատանքների վերաբերյալ բաժնի հաշվետվությունները հասանելի են ՎՊՀ կայք-էջից:

Փորձագիտական այցից պարզվեց, որ համագործակցության և կապերի բաժնի կողմից մշակվում է ուսանողների և դասախոսների միջազգային ծրագրերին դիմելու կարգը, կրեդիտների ճանաչման ուղեցույցը, ինչպես նաև կրթական ծրագրերի ազգային մոդելի ձևաչափը: Այդուհանդերձ, միջազգայնացման գործընթացների իրականացման համար սեփական ռեսուրսների հատկացման ուղղությամբ ՄՈՒՀ-ի հստակ քայլերն առկա չեն:

**9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:**

ՎՊՀ-ն միջազգային ծրագրերի շրջանակում համագործակցում է արտասահմանյան բուհերի հետ: Բուհն ունի ԵՄ 7 բուհերի հետ կնքված երկկողմանի շարժունության պայմանագրեր: Տեղական մակարդակում ՎՊՀ-ն համագործակցում է շուրջ 19 ՀՀ բուհերի հետ: Սակայն կնքված պայմանագրերի արդյունավետությունը համակողմանի վերլուծված չէ. արտացոլված են միայն ուսանողների և դասախոսների շարժունության արդյունքները: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՎՊՀ-ի համագործակցությունը մարզի այլ ՄՈՒՀ-երի հետ ակտիվ չէ, քանզի դրանք դիտարկվում են որպես մրցակից բուհեր ՎՊՀ-ի համար: ՎՊՀ-ն համագործակցում է ԵՄ, ԱՊՀ երկրների, Չինաստանի բուհերի հետ:

2013 թ-ից սկսած բուհն ունեցել է թվով 77 արտագնա ուսանողներ: Վարչական և դասախոսական աշխատակազմի 31 ներկայացուցիչներ վերապատրաստվել են և դասավանդել ԵՄ բուհերում:
Եվրոպական համալսարանների մասնագետների կողմից կազմակերպված դասընթացներին մասնակցել են բուհի երիտասարդ 6 դասախոսներ, որոնք կարողացել են շատ բարձր մակարդակով իրականացնել փորձի փոխանակում ՎՊՀ-ում ավելի քան 60 դասախոսների շրջանում:
Որպես շարժունության խոչընդոտ նշվում է աշխատակիցների օտար լեզուների իմացության ոչ բարձր մակարդակը, մասնավորապես՝ անգլերեն լեզվի առումով, ինչը դժվարություններ է առաջացնում որպես ընդունող կողմ շարժունությանը նպաստելու:
Բուհի ոչ բոլոր ամբիոններն ակտիվությամբ մասնակցում միջազգայնացմանն ուղղված աշխատանքներին, սակայն այս ուղղությամբ տարվում են աշխատանքներ, մասնավորապես, կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի մասնագիտության ուղղությամբ շարժունությունն ապահովելու համար ՄՈՒՀ-ը նախատեսում է համագործակցել Տալինի տեխնոլոգիայի համալսարանի հետ:
Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն և գործունեությունը ծավալվում է միայն դրամաշնորհային միջոցների հաշվին:

**9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:**

Վերջին տարիներին նկատվում է օտար լեզուներին տիրապետող բուհի աշխատակիցների թվաքանակի աճ: ՎՊՀ-ն BOOST /Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքետինգի խթանում/ դրամաշնորհային ծրագրի կոնսորցիումի անդամ է: Ծրագրի շրջանակներում միջազգայնացման բնագավառում կատարվել է բենչմարքինգ՝ հիմնվելով շվեդական, իսպանական, էստոնական և պորտուգալական բուհերի միջազգայնացման գործընթացների փորձի ուսումնասիրման վրա: Համեմատական վերլուծություն է կատարվել կարողությունների ձևավորման և միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում ՎՊՀ-ի հետ համագործակցող բուհերի միջազգային գործունեության հիման վրա:

Համագործակցության և կապերի բաժինը համագործակցում է գերմանական DAAD գործակալության և այլ միջազգային կազմակերպությունների հետ ՄՈՒՀ-ի ուսանողների օտար լեզուների տիրապետման մակարդակի բարձրացման և օտար լեզուների գծով արտասահմանում կրթության շարունակության առումով:

Համալսարանի շարունակական (հարատև) կրթության բաժնի կողմից իրականացվում է դասախոսների վերապատրաստում նաև օտար լեզուների ուղղությամբ, ուսանողների համար բաժնի կողմից տրամադրվող օտար լեզվի վերապատրաստման դասընթացները զեղչվում են 50 տոկոսով:

Բավարար չէ օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզվով դասավանդվող դասընթացների թիվը: 2018 թվականին այդ ցուցանիշը եղել է 0, ինչը պայմանավորված է դասախոսական կազմի օտար լեզուների իմացության մակարդակով, անգլերեն լեզվով դասավանդվող առարկաների սակավ քանակով և օտարալեզու դասընթացների արտասահմանյան բուհերի կողմից առաջադրվող պահանջների հետ համապատասխանեցման խնդրով:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՎՊՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատանն ուղղված որոշ մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնցով զբաղվում է ՎՊՀ Համագործակցության և կապերի բաժինը: Այս ամենը դրական է ազդում ՄՈՒՀ-ի միջազգայնացման գործընթացների ակտիվացման վրա: Այդուհանդերձ, սեփական միջոցների տրամադրման ցածր մակարդակը կարող է առաջացնել ռիսկեր միջազգայնացման գործընթացների իրականացման կայունության և արդյունավետության ապահովման առումով:

Դրական է, որ ՎՊՀ միջազգայնացմանն ուղղված գործունեությունը հիմնականում կանոնակարգված է, ինչը նպաստում է գործունեության վարման նպատակայնությանը, հստակությանը, հաշվետվողականության համակարգվածությանը և բարելավմանն ուղղված քայլերի նախանշմանը: Այնուամենայնիվ, ուսանողների և ՊԴԿ-ի միջազգայնացման գործընթացներին մասնակցությունը խրախուսող բավարար մեխանիզմներ ՎՊՀ-ում մշակված չեն: Սա կարող է խոչընդոտել ՎՊՀ միջազգայնացման զարգացմանը: Այդուհանդերձ, այս ամենի կանոնակարգման ուղղությամբ համագործակցության և կապերի բաժինն աշխատանքներ է սկսել իրականացնել:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն ակտիվորեն համագործակցում է տեղական՝ պետական, միջազգային բուհերի և կառույցների հետ, ինչպես նաև փնտրում է համագործակցության նոր տարբերակներ, ինչը դրական ազդեցություն է թողնում ՄՈՒՀ-ի միջազգայնացման և նորամուծությունների ներդրման առումով: Սակայն համագործակցության պայմանագրերի համակողմանի վերլուծություններ և համագործակցության հստակ պլանավորում դեռ իրականացված չէ: Սա թույլ չի տալիս գնահատել վերջիններիս արդյունավետությունը և նախանշել համագործակցության զարգացման հետագա ուղղությունները:

ՎՊՀ-ում շարժունության մակարդակը դեռևս ունի բարելավման կարիք: ՄՈՒՀ-ն իրականացնում է որոշակի գործառույթներ ներքին շահակիցների օտար լեզվի իմացության բարձրացման ուղղությամբ, ինչը կարող է դրական ազդեցություն թողնել՝ նպաստելով ՎՊՀ միջազգայնացմանը: Այդուհանդերձ, բարելավման ենթակա է ներքին շահակիցների, մասնավորապես՝ ՊԴԿ-ի, օտար լեզուների տիրապետման մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերը: Ինչը կաշխուժացնի բուհում միջազգայնացման գործընթացները:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի ակտիվ մասնակցությունը միջազգայնացման գործընթացներին, տեղական և միջազգային բուհերի հետ համագործակցության բավարար մակարդակը, այդ ուղղությամբ զբաղվող հատուկ ստորաբաժանման կանոնակարգված և հաշվետու գործունեությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին՝ չնայած

որոշակի համագործակցության վերլուծական, միջազգայինացման գործընթացներին դիմելու կանոնակարգման և օտար լեզուների տիրապետման մակարդակի հետ կապված բարելավման կարիքներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:**

**Փաստեր**

**10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:**

Բուհում գործում է Որակի ապահովման կենտրոն (ՈԱԿ): Կենտրոնի նպատակն է ապահովել բուհի ուսումնական, գիտահետազոտական և կառավարման գործընթացների որակի վերահսկումը, հաշվետվողականությունը և շարունակական բարելավումը: ՎՊՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը իրականացվում է ըստ Համալսարանի որակի ապահովման համակարգում մշակված կանոնակարգերին համապատասխան ընթացակարգերով, մասնավորապես որակի ապահովման համակարգի կանոնակարգի, որն ընդունվել է 2015թ.: Վերջին չորս տարիների ընթացքում բուհի կողմից մշակվել են մի շարք փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են որակի ապահովման գործառույթները, ինչպես օրինակ՝ Որակի ապահովման ինքնագնահատման և վերանայման կանոնակարգ և ընթացակարգ, Որակի ապահովման հայեցակարգ, Որակի ապահովման ձեռնարկ ուսանողների համար, Որակի ապահովման քաղաքականություն, ՄԿԾ-ների ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգ և այլն: Ըստ ՎՊՀ ինքնավերլուծության համալսարանի որակի ապահովման և զարգացման ռազմավարությունը նպատակաուղղված է համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում որակի գործընթացների արդյունավետության բարձրացմանը, որակի մշակույթի զարգացմանը՝ բոլոր շահակիցների ներգրավվմամբ և մասնակցության շարժառիթների և արդյունավետության բարձրացմամբ: Համաձայն կանոնակարգերի ՎՊՀ ՈԱԿ-ն աշխատանքներ է իրականացնում մի շարք ուղղություններով՝ կազմակերպչական, վերլուծական, մեթոդական, խորհրդատվական, տեղեկատվական և այլն:

ՈԱԿ-ի կողմից առկա են մի շարք ՄԿԾ-ների աուդիտի եզրակացություններ, որոնք իրականացվել են համապատասխան ընթացակարգի և պարունակում են որոշակի վերլուծություններ: Գործընթացին մասնակցել են ՎՊՀ ներքին և արտաքին շահակիցները՝ հնարավորություն ունենալով բարձրաձայնելու իրենց խնդիրներն ու առաջարկությունները:

Առկա են որոշ դեպքեր, երբ առկա ընթացակարգերը և կանոնակարգերը չեն իրագործվում ամբողջությամբ:

**10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:**

ՈԱ համակարգի՝ սահմանված առաքելության և նպատակների իրականացման համար, ինչպես նաև որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով Համալսարանը ընդհանուր առմամբ տրամադրում է նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: 2017 թվականին ֆինանսական վերլուծությունների արդյունքում ՈԱ համակարգից կրճատվել է մեկ հաստիք: Ներկայումս ՈԱԿ-ը ունի 4 աշխատակից /3 հաստիք/: ՈԱԿ-ի աշխատանքները ապակենտրոնացնելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել են Որակի ապահովման ֆակուլտետային աշխատախմբեր (ՈԱՖԱ), որոնց աշխատանքներն իրականացվում են ամբիոնների որակի ապահովման պատասխանատուների և ուսանողների միջոցով՝ որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուների համակարգմամբ: Այդ աշխատախմբերի կողմից կրթական գործընթացի պարբերաբար անցկացվող մշտադիտարկումների, ուսանողների և դասախոսների, այլ շահակիցների շրջանում անցկացվող հարցումների, վերլուծությունների տվյալները քննարկվում են տեղերում և ամփոփվում ՈԱ-ի կենտրոնում: Ներգրավված են նաև աշխատակիցներ հասարակական հիմուքներով՝ ինչը մոտիվացնող է տարբեր ներգրավված կողմերի համար:

Նյութական ռեսուրսների ձեռքբերումը կատարվում է կենտրոնի կողմից վերհանված կարիքների հիման վրա՝ ըստ տվյալ տարվա համար բուհի կողմից նախատեսվող ֆինանսական հնարավորությունների: ՈԱ մշակույթի ձևավորման, որակի կառավարման, որակի մշակույթի զարգացման նպատակով համալսարանում միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվել են կրթության որակի բարելավմանը միտված ծրագրեր և աշխատակիցների վերապատրաստումներ: Վերլուծված և բացահայտված չի որակի գործառույթներին տրամադրված ռեսուրսների արդյունավետությունը:

Որակի ներքին ապահովման համակարգում ներդրված են ինչպես բուհի կողմից տրամադրված, այնպես էլ միջազգային ծրագրերի շրջանակներում ձեռք բերված, մարդկային, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ: Որակի ներքին ապահովման համակարգի ձևավորմանը էակապես նպաստել են որոշ միջազգային ծրագրեր, որոնց շնորհիվ որակի ապահովման գործառույթները ապահովվել են անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: Վերջին տարիներին տարբեր ծրագրերի շրջանակում ՈԱԿ-ի կողմից ապահովվել են ֆինանսական լրացուցիչ մուտքեր, որոնց հաշվին կենտրոնը համալրվել է տեխնիկական միջոցներով ու սարքավորումներով:

**10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:**

Ֆակուլտետներում գործող ՈԱ պատասխանատու- աշխատախմբերը հնարավորություն են տալիս ներքին շահակիցներին ունենալու որոշակի մասնակցություն ՈԱ գործընթացներին (կրթական ծրագրերի, ուսումնառության, ուսումնական ռեսուրսների ՈԱ և այլն): ՈԱԿ-ը, համագործակցելով Ֆակուլտետային ՈԱ-ի աշխատախմբերի հետ, պարբերաբար համատեղ հետազոտություններ, վերլուծություններ, ուսումնասիրություններ և քննարկումներ է իրականացնում արտաքին և ներքին շահակիցների հետ /պրոֆեսորադասախոսական կազմ, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ, ուսանողներ և ուսխորհրուրդ, շրջանավարտներ, գործատուներ/:

Ներքին և արտաքին շահակիցները ընդգրկված են բուհի որակի ապահովման, մշտադիտարկման, աուդիտի, արտադրական պրակտիկայի, ամփոփիչ ատեստավորման, ինչպես նաև ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների շրջանակներում աուդիտին մասնակցած գործատուները վճարվել են բուհի կողմից: Ուսանողների հետ հանդիպումների և քննարկումների ժամանակ օգտագործվում են kahoot.it–ի միջոցով կազմված հարցումները, որոնք հնարավորություն են տալիս անմիջապես արձագանքելու բարձրացված հարցերին, «լսելի» դառնալ ավելի լայն շահակիցների խմբերում, սակայն SS-ի կիրառության աստիճանը կարիքների վերհանման գործընթացում դեռ ևս ցածր է (սակավաթիվ են առցանց հարցումները):

ՈԱԿ-ը համագործակցում է բուհի ուսանողական խորհուրդի որակի ապահովման խմբի հետ՝ ապահովելով նաև ուսանողների որոշակի մասնակցություն որակի ապահովման գործընթացներին: Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբում ներգարավված են եղել դեկաններ, ամբիոնի վարիչներ, դասախոսներ, ինչպես նաև ուսանողներ: Ցածր է հեռակա բաժնի ուսանողների ներգրավվածության և ակտիվության աստիճանը:

Համաձայն որակի ապահովման ներքին համակարգի ընթացակարգերի, արտաքին շահակիցները նույնպես պետք է մասնակցեն ՈԱ գործընթացներին, սակայն, այս մասնակցության մակարդակը դեռ բավարար չէ: Արտաքին շահակիցների հետ համագործակցությունը չի կրում համակարգված բնույթ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման կենտրոնի կողմից պարբերական բնույթ չեն կրում ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի շրջանում իրականացվող հարցումներն ու ֆոկուս խմբային քննարկումները: Այս խնդրի հաղթահարման նպատակով բուհը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ու ներգրավվածությունն ապահովող մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը:

**10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:**
ՎՊՀ ՈԱԿ-ի գործառույթները կազմակերպվել են շարունակական բարելավման սկզբունքով՝ հետևելով ՊԻԳԲ շրջափուլին: ՈԱԿ-ի գործունեությունը ներկայումս ուղղված է բուհում կատարվող գործընթացների պլանավորմանը և գործողությունների իրականացմանը: ՈԱԿ որոշ գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլը դեռևս փակված չէ, ինչպես նաև կարիք կա մշակել ընթացակարգեր, որոնցով կապահովվեն գնահատման և բարելավման գործընթացները:
Որակի ներքին ապահովման համակարգում հաշվետու ժամանակահատվածում կատարված են որոշ բարեփոխումներ, մշակված են մի շարք փաստաթղթեր. Որակի ապահովման ինքնագնահատման և վերանայման կանոնակարգ և ընթացակարգ 02.04.2019 թ. թիվ 205 Լ/Կ հրամանի: ՎՊՀ բարելավման պլանով նախատեսված. իրականացվել է ՈԱ համակարգի վերանայում. ՈԱ քաղաքականություն, և վերանայվել են որակի ապահովման և կառավարման քաղաքականությունները, բարելավման մեխանիզմները և գործիքակազմը:

Մշակվել է ՎՊՀ ուսանողների համար նախատեսված որակի ապահովման ձեռնարկը նրանց կողմից բարձրացրած հարցերի, խնդիրների, կարիքների հիման վրա, որոնք կարևորվում են որակի ապահովման համապատասխան մշակույթի ձևավորման, զարգացման գործընթացներում: Սա միաժամանակ նպատակ ունի ավելացնելու ուսանողների ներգրավվածությունը և բարձրացնելու նրանց ակտիվությունը ՈԱ գործընթացներում:
Արտաքին շահակցիների նեգրավումը ՈԱ պարբերաբար գործընթացում բավարար հիմնավորված չէ:

**10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:**
Արտաքին գնահատման գործընթացի կազմակերպման նպատակով ՈԱ ներքին համակարգի շրջանակներում իրականացվել են որոշակի աշխատանքներ (հարցումներ, SWOT վերլուծություն, ինքնավերլուծություն): Ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատման ուղղությամբ կատարվել են քայլեր, որոնք ուղղված են եղել տեղեկատվության հասանելիության և գործունեության թափանցիկության ապահովմանը, ինչպես նաև անհրաժեշտ տվյալների հավաքագրմանը, մշակմանը և վերլուծությանը: ՎՊՀ-ի որակի ապահովման ներքին գնահատման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար իրականացվում են Համալսարանի գործունեության տարբեր ենթակառուցվածքների ինքնագնահատում՝ ըստ ՈԱԿ-ի կողմից մշակված ձևաչափերի: Վերջինս հիմք է արտաքին գնահատման համար:

Փորձագիտական խումբը հարկ է համարում շեշտել, որ ինքնավերլուծության որոշ հատվածներ չեն արտացոլում հաստատության ամբողջական իրավիճակը: Բավական փաստեր, այդ թվում դրական, փորձագիտական խմբի ջանքերով պարզաբանվեց այցի ընթացքում: Ինքնավերլուծության մեջ սակավ էին վերլուծությունները, /վերլուծական

հատվածը թույլ է/, որոշ չափորոշիչներ ներկայացված չէին ըստ չափորոշիչի բովանդակության և պահանջի, բավարար նկարագրված չէին կոնկրետ օրինակներ:

ՈԱԿ-ի կողմից մշակվել է փաստաթղթերի համակարգչային բազա /ՎՊՀ կայք էջում/, որտեղ զետեղված են բոլոր կանոնակարգերը և ընթացակարգերը: Տվյալների հավաքագրման, տարածման և կառավարման գործընթացներն ընդհանուր առմամբ համակարգված են, սակայն ՎՊՀ-ի կողմից դեռևս ուսումնասիրված չէ դրանց արդյունավետությունը:

Որակի ներքին ապահովման համակարգում հատուկ մոտեցումներ մշակված չեն, որոնք կապահովեն արտաքին գնահատման գործընթացները, օրինակ՝ արտաքին շահառուների մասնակցության հատուկ ընթացակարգեր:

**10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:**

Որակի ապահովման ներքին համակարգի իր գործունեության թափանցիկությունը ապահովում է www.vsu.am կայքի, իրականացրած հաշվետվությունների, կազմակերպվող քննարկումների միջոցով:

Որակի ապահովման սոցիալական ցանցի միջոցով, որում գրանցված է շուրջ երկու հազար հետևորդ, տեղեկատվություն է տարածվում իրականացված աշխատանքների վերաբերյալ: Այն արդյունավետ է արտաքին շահակիցներին իրազեկելու և ուշադրություն գրավելու տեսանկյունից: ՈԱԿ-ը պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում լրատվության և կապերի բաժնին: Տրամադրվող տեղեկատվությունը հասանելի է ներքին և արտաքին շահակիցներին, և ընդհանուր առմամբ տալիս է բուհի որակի ապահովման գործընթացների մասին ամբողջական պատկերացում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՎՊՀ ներքին և արտաքին շահակիցները համակարգի մասին ներկայացված տեղեկատվությունից ակտիվ չեն օգտվում: Բավարար տեղեակտվություն չի հրապարակվում ՈԱԿ-ի աշխատանքների ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Խնդիր է արձանագրված բարելավման ծրագրի վերաբերյալ տեղեկատվության պատշաճ տրամադրման հետ կապված:

Արտաքին և ներքին շահակիցներից ապահովված չեն հետադարձ կապի հստակ մեխանիզմներ:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը շեշտում է, որ որակի ապահովման գործունեության ապակենտրոնացումը (ֆակուլտետային աշխատանքային խմբերի ստեղծումը) իր դրական ազդեցությունը կարող է ունենալ աշխատանքի արդյունավետության վրա:

Բուհում գործող որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվեն են համապատասխան փաստաթղթեր և կանոնակարգեր, որոնք նպաստում են որակի ապահովման գործառույթների իրականացմանը: Դրական է բուհի կողմից նախորդ հավատարմագրման

գործընթացի արդյունքում բարելավման պլանով նախատեսված ՈԱ կառույցի քաղաքականության վերանայումները: Չնայած բուհի դասախոսների և ուսանողների որոշակի մասնակցությանըորակի ապահովման գործընթացներին, առկա է այդ մասնակցությունը առավել արդյունավետ դարձնելու խնդիր:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՈԱ կենտրոնի կողմից իրականացված ՄԿԾ աուդիտը, դրա արդյունքում իրականացրած վերլուծությունները: Սա արդյունավետ կարող է լինել հետագայում ՎՊՀ ՄԿԾ-ների արտաքին գնահատման ենթարկելու տեսակետից ևս:

Որակի գործընթացները ապահովված են համապատասխան մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրներով: Սակայն այդ ռեսուրսների կիրառման արդյունավետությունը բավարար վերլուծության չի ենթարկվել, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ որակի ապահովման գործառույթների իրականացման համար:

Որակի ապահովման համակարգում արտաքին շահակիցների ներգրավվածությունը դեռևս թույլ է, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ որակի ապահովման համակարգի արդյունավետության վրա:
Որակի գործառույթների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովմանն ուղղված քայլերը նպաստում են ներքին և արտաքին. շահակցիների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ համալսարանն ունի որակի ապահովման ներքին գործող համակարգ, որը գտնվում է զարգացման փուլում՝ նպաստելով հաստատության գործունեության շարունակական բարելավմանը, որակի մշակույթի ձևավորմանը և ձգտում է ապահովել իր գործունեության թափանցիկությունը փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջները: Միաժամանակ նշելով, որ որակի ապահովման գործընթացներում դեռևս բավարար չէ արտաքին շահակիցների համապատասխան մասնակցության աստիճանը, ինչպես նաև մի շարք գործընթացներ դեռևս գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի պլանավորման և իրականացման փուլում:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին **գնահատում է բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

| ՉԱՓԱՆԻՇ | ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| 1. Առաքելություն և նպատակներ | **Բավարարում է** |
| 2. Կառավարում և վարչարարություն | **Չի բավարարում** |
| 3.Մասնագիտության կրթական ծրագրեր | **Բավարարում է** |
| 4. Ուսանողներ | **Բավարարում է** |
| 5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ | **Բավարարում է** |
| 6. Հետազոտություն և զարգացում | **Չի բավարարում** |
| 7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ | **Բավարարում է** |
| 8.Հասարակական պատասխանատվություն | **Բավարարում է** |
| 9. Արտաքին կապեր և միջազգայնացում | **Բավարարում է** |
| 10. Որակի ներքին ապահովման համակարգ | **Բավարարում է** |

**23 դեկտեմբերի 2019թ.**

**Վարդան Սարգսյան**
Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

**Վարդան Սարգսյան** - 1984թ.-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (ներկայումս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) ստանալով ինժիներ-տնտեսագետի որակավորում: 1989թ.-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, իսկ 2009թ.-ին տնտեսագիտության դոկտորի աստիճան: 1993թ.-ին ստացել է դոցենտի աստիճան: Այժմ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչն է, պրոֆեսոր: Մասնակցել է փոխանակման ծրագրերի և մի շարք գիտաժողովների: Հեղինակ է մոտ 60 հրատարակված գիտական հոդվածների, գրքերի և ուսումնական ձեռնարկների, ներառյալ 16 հոդվածներ հրատարակված Եվրոպայում և ԱՄՆ-ում, 4 մենագրություն, 6 ուսումնական ձեռնարկ:

**Վայրիդոտաս Վիլիունաս** - 1979թ-ին ավարտել է Կաունասի տեխնոլոգիական համալսարանը (Լիտվա) Քիմիական տեխնոլոգիաների ինժեների որակավորմամբ: 1987թ-ից
Գիտության դոկտոր, քիմիայի գիտությունների դոկտոր:1991 թ-ից Կաունասի տեխնոլոգիական համալսարանում զբաղեցրել է Օրգանական քիմիայի ամբիոնի ավագ գիտաշխատողի պաշտոնը: 1995-ին զբաղեցրել է Քաունասի տեխնոլոգիական համալսարանի պրոռեկտորի պաշտոնակատարի աշխատանքը ապա 1999-ին արդեն զբաղեցրել է Կաունասի տեխնոլոգիական համալսարանի միջազգային գրասենյակի տնօրենի պաշտոնը: 2011-ից սկսած Վիտաուտաս Մագնուս համալսարանում զբաղեցրել է Ուսանողների հարցերով գրասենյակի տնօրենի պաշտոնը:2018 թ.-ից Քաղաքականություն մշակման և ծրագրի իրականացման ղեկավար, Բարձրագույն կրթության ինստիտուտների եվրոպական ասոցիացիայում (EURASHE):

**Արամ Բաղիյան** - 2008թ.-ին ոսկե մեդալով ավարտել է ՌԴ ՊՆ պրոֆեսոր Ն.Ե. Ժուկովսկու անվան Ռազմաօդային ինժեներական ակադեմիան՝ «Ավիացիոն սպառազինության ռոբոտատեխնիկական համակարգեր» մասնագիտությամբ՝ ճարտարագետի որակավորմամբ: 2014թ.-ին շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Թռչող ապարատներից վերգետնյա օբյեկտների հետևման ռոբաստ համակարգի մշակումը» թեմայով ատենախոսության պաշտպանությամբ: 2012-2017թթ. զբաղեցրել է ավագ դասախոսի պաշտոն ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում (համալսարանում): 2017թ.-ից մինչ օրս զբաղեցնում է «Իմպրովիզ» ՍՊԸ գիտական խորհրդատուի պաշտոնը: 2016թ.-ից մինչև 2018 թ.-ը եղել է ԲՈՀ-ի 032 «Կառավարում և ավտոմատացում» մասնագիտական խորհրդի անդամ: 40-ից ավելի գիտական և գիտատեխնիկական աշխատանքների, 2 ուսումնական և 2 մեթոդական ձեռնարկների հեղինակ է: Մասնակցել է Գործընկերություն հանուն խաղաղության կոնսորցիումի և Հյուսիսատլանտյան դաշինքի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի, ինչպես նաև ՌԱԱԿ-ի կողմից անցկացվող ռազմական ոլորտի դասախոսների մի շարք վերապատրաստումներին:

**Աննա Փոլադյան** - 1994-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկա բաժինը:1994-96թթ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժնում եղել է Փորձնակ-հետազոտող,նույն թվականին եղել է ավագ լաբորանտ:Այնուհետև 1996–1998թթ եղել է կրտսեր գիտաշխատող:2000թթ-ին Գիտաշխատող հետագայում նաև 2000-2018թթ ավագ գիտաշխատող:2000թ.-ից կենսաբանական գիտությունների թեկնածու է:2016-2017-թթ ԵՊՀ Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում անհատ խորհրդատու:2012 – առ այսօր Երևանի պետական համալսարանում Կենսաբանության ֆակուլտետ, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում Դոցենտ:Մասնակցել է փոխանակման ծրագրերի և մի շարք գիտաժողովների: Հեղինակ է մոտ 22 հրատարակված գիտական հոդվածների, գրքերի և ուսումնական ձեռնարկների:Մասնակցել է մոտ 12 դրամաշնորհների:Պարգևատրվել է մի շարք պարգևներով:

**Օֆելյա Արզումանյան-** ՀԱՊՀ ՏՀՏԷ ինստիտուտի Ռադիոտեխնիկա բաժնի 2-րդ կուրսի ուսանող է: Մասնակցել է ՌԱԱԿ-ի Ուսանողության Ձայն ծրագրի շրջանակներում իրականացվող ուսանող-փորձագետների վերապատրաստումներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց**

**16.09.2019թ.–19.09.2019թ.**

| | **16.09.2019թ** | *Մեկնարկ* | *Ավարտ* | *Տևողություն* |
|---|---|---|---|---|
| 1 | Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ | 09:00 | 09:45 | 45 րոպե |
| 2 | Հանդիպում ՄՈՒՀ-ի կառավարման խորհրդի ներկայացուցիչների հետ | 10:00 | 11:00 | 60 րոպե |
| 3 | Հանդիպում պրոռեկտորների հետ | 11:10 | 12:10 | 60 րոպե |
| 4 | Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ | 12:20 | 13:20 | 60 րոպե |
| 5 | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:30 | 14:30 | 60 րոպե |
| 6 | Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ | 14:50 | 16:00 | 70 րոպե |
| 7 | Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի) | 16:10 | 17:10 | 60 րոպե |
| 8 | Փաստաթղթերի ուսումնասիրություն, Փորձագիտական խմբի փակ հանդիպում | 17:20 | 18:00 | 60 րոպե |
| | **17.09.2019թ.** | *Մեկնարկ* | *Ավարտ* | *Տևողություն* |
| 1 | Հանդիպում ամբիոնների վարիչների հետ /ներառյալ ինքնավերլուծությունում ներկայացված երեք ՄԿԾ-ներն իրականացնող մասնագիտական ամբիոնների վարիչները/ | 09:00 | 10:00 | 60 րոպե |
| 2 | Հանդիպում դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի) | 10:15 | 11:30 | 75 րոպե |
| 3 | Հանդիպում բակալավրիատի ուսանողների հետ (10-12 հոգի) | 11:40 | 12:40 | 60 րոպե |
| 4 | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:00 | 13:45 | 45 րոպե |
| 5 | Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների հետ (10-12 հոգի) | 14.00 | 15:00 | 60 րոպե |
| | Հանդիպում հեռակա բաժնում սովորող ուսանողների հետ (10-12 հոգի) | 15:10 | 16:10 | 60 րոպե |
| 6 | Հանդիպում շրջանավարտների հետ (8-10 հոգի) | 16:20 | 17:20 | 60 րոպե |
| 7 | Փորձագիտական խմբի փակ հանդիպում | 17:30 | 18:00 | 30 րոպե |

| | **18.09.2019թ.** | *Մեկնարկ* | *Ավարտ* | *Տևողություն* |
|---|---|---|---|---|
| 1 | Հանդիպում ՈՒԽ և ՈՒԳԸ անդամների հետ (8-10 հոգի) | 09:00 | 10:15 | 60 րոպե |
| 2 | Դասալսումներ | 10:30 | 11.30 | 75 րոպե |
| 3 | Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում, այց ամբիոններ, ստորաբաժանումներ, կենտրոններ, բաժիններ, գրադարան, բուժկետ, մարզադահլիճ, | 11:45 | 13:15 | 90 րոպե |
| 4 | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:30 | 14:30 | 60 րոպե |
| 5 | Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ | 14:30 | 15:45 | 75 րոպե |
| 6 | Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ | 16:00 | 16:30 | 30 րոպե |
| 7 | Փորձագիտական խմբի փակ հանդիպում | 16:30 | 18:00 | 90 րոպե |
| | **19.09.2019թ.** | *Մեկնարկ* | *Ավարտ* | *Տևողություն* |
| 1 | Հանդիպում որակի ապահովման կենտրոնի հետ | 09:00 | 10:15 | 75 րոպե |
| 2 | Փաստաթղթերի ուսումնասիրություն | 10:30 | 12:00 | 90 րոպե |
| 3 | Փորձագիտական խմբի փակ քննարկումներ | 12:00 | 13:00 | 60 րոպե |
| 4 | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:00 | 13:45 | 45 րոպե |
| 5 | Փաստաթղթերի ուսումնասիրություն, | 14:00 | 14:30 | 30 րոպե |
| 6 | Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ | 14:30 | 15:15 | 45 րոպե |
| 7 | Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ | 15:30 | 16:00 | 30 րոպե |
| 8 | Փորձագիտական խմբի փակ հանդիպում | 16:15 | 18:00 | 105 րոպե |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

| N | Փաստաթղթի անվանում | Չափանիշ/չափորոշիչ |
|---|---|---|
| 1. | ՎՊՀ նոր ռազմավարական ծրագիր կամ ծրագրի նախագիծը | 1.1 |
| 2. | Բուհի կառավարման վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ազդեցության վերլուծություն | 2.4 |
| 3. | Միջնաժամկետ ծրագրերի /ՄՈՒՀ-ի, ստորաբաժանումների/ իրականացման արդյունավետության գնահատման արդյունքները | 2 |
| 4. | Պաշտոնի անձնագրեր /ՊԴ կազմ, Ամբիոնի վարիչներ, ՈՒՕԺ կազմ/ | 2 |
| 5. | Կառավարման որակի ապահովման շրջափուլի /PDCA շրջափուլով/ մասին վերլուծություն | 2.5 |
| 6. | 3 ներակայացված ՄԿԾ-ների ամբիոնների անձնագրեր/նկարագրեր/ և/կամ /տարեկան պլաններ/ | 5 |
| 7. | ՊԴ կազմի վերապատրաստումների ժամանակացույցը, պլանները | 5.4 |
| 8. | Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն | 3 |
| 9. | Ավարտական աշխատանքների թեմաների ցանկեր /վերջին 4 տարիների/ | 3 |
| 10 | Ուսումնական պլաններ | |
| 11. | ՄԿԾ-ների գնահատումների արդյունքների հաշվետվության ներկայացում՝ ՎՊՀ գիտական խորհրդի նիստի արձանագրություն | 3.2 |
| 12. | Մագիստրատրոսական թեզերի օրինակներ /վերջին 4 տարիների/ | 3.5 |
| 13. | Պրակտիկայի օրագրեր | 3 |
| 14. | Վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման հարցաթերթիկ | 3 |
| 15. | Ավարտական թեզերի պաշտպանությունների հանձնաժողովների արձանագրություն /առկա, հեռակա/ | 3 |
| 16. | Վիճակագրություն/վերլուծություն 3 ՄԿԾ-ների գծով զբաղվածության մակարդակի մասին | 4.5 |
| 17.. | Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար հիմնական աշխատակազմի թվային տվյալներ | 5.2 |
| 18. | Երիտասարդ դասախոսների քանակը /ԳԱՑ/ | 5.5 |

| | | |
|---|---|---|
| **19.** | ՊԴ անձնակազմի միջին տարիքը /ԳԱՑ/ | 5.5 |
| **20.** | Դասախոս ուսանող հարաբերակցությունը /վերջին 4 տարիների տվյալներ/ | 5 |
| **21.** | Դասախոսի տարեկան բեռնվածքի օրինակներ | 5 |
| **22.** | Օտար լեզվով դասավանդվող առարկաների նկարագրեր | 9.4 |
| **23.** | Հաստատության ուսանողների շարժունությունը հավաստող փաստաթղթեր/ներգնա, արտագնա/, /տեղական, միջազգային / | 9 |
| **24.** | Հաստատության դասախոսների շարժունությունը հավաստող փաստաթղթեր/ներգնա, արտագնա/, /տեղական, միջազգային/ | 9 |
| **25.** | Ուսանողների, դասախոսների, գործատուների հարցումների վերլուծություններ | 10 |
| **26.** | ՎՊՀ ՊԴ կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգ | 5 |
| **27.** | Թափուր հաստիքի հայտարարություն | 2 |
| **28.** | ՎՊՀ Միջազգայնացման ռազմավարություն | 9 |
| | | |

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Ամֆիոններ
3. Համակարգչային լսարաններ
4. Գրադարան
5. Դահլիճներ
6. Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն
7. «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական կենտրոն
8. Գիտության կառավարման հետազոտական կենտրոն
9. Ուսանողների շփման համար նախատեսված Creative Zone

# ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԳԱՑ** – գնահատման առանցքային ցուցանիշների
2. **ԵԲԿՏ** _ եվրոպական բարձրագույն կրթական տարածք
3. **ԵԿԿՓՀ** _ եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ
4. **ՄԿԾ** _ մասնագիտության կրթական ծրագիր
5. **ՄՈՒՀ** - Մասնագիտական ուսումնական հաստատություն
6. **ՈԱ** _ Որակի ապահովում
7. **ՈԱԱԿ**_«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
8. **ՈԱԵՉՈՒ** _ որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշեր
9. **ՈԱՇ** _ որակավորումների ազգային շրջանակ
10. **ՊԴԿ** _ Պրոֆեսորադասախոսական կազմ
11. **ՊԻԳԲ** _ պլանավորել-իրականացնել-գնահատել-բարելավել
12. **ՌԾ** _ Ռազմավարական ծրագիր
13. **ՌՊ** _ Ռազմավարական պլան
14. **ՌԻԽ** _Ուսանողական խորհուրդ
15. **ՌԻԳԸ**- Ուսանողական գիտական ընկերություն
16. **ՎՊՀ** – Վանաձորի պետական համալսարան